

ՕՐԱԳՐՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԱՍՏԻՐԱՍԻՐՈՒԹԵԱՆ

1861

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԵԳՆԱՅՔ.

ԱՄՍԱԹԻՎ 7.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

	Եր֊
ՊԱՏՄԱՀՈՒՄՆ ՀԱՆՐԱՑԻՆ ՋՐԵՐԻ ԵՋԵՐՔՈՒՄ.	
Յարութիւն Մազլումեանց, կարապետ բաղարից:	1—33
ԳԱՐԻԲԱԼԴԻՈՒ ԿԵԱՆՔԸ. *Մարտիրոս Հրաչեայ:*	34—53
ՍԵՐ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ. *Ս. Նազարեանց.*	54—81

ՄՈՍԿՎԱ,

ВЪ ТИПОГРАФІИ ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ.

1861.

ՅՈՒԼԻՍ 1861 ԹՈՒԿԱՆԻ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ.

ՊԱՏԱՀՈՒՄՆ ՀԱՆՔԱՑԻՆ ՋՐԵՐԻ ԵԶԵՐՔՈՒՄ:

(ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ· ՌՈՒՍԵՐԷՆԻՑ:)

Ժամանակն էր մայիս ամիս, և եղանակը սկսել էր քաղցրանալ· քաղաքի վ֊իրօռկ ասած կողմում, փոքրիկ տան բաց պատուհանի մօտ նստած էր տանն և ինն կամ քսան տարեկան շատ դեղեցիկ օրիորդ: Նա անդադար պատուհելով դլուխը ականջ էր դնում մինչև անդամ հեռուից անցանող կառքերի հազիւ հազ լսելի ձայներին և սակս սակս թողելով ձեռքի դործը, հետաքրքիր ուշադրութեամբ պատուհանից դեպ ի դուրս պարզուելով քննում էր հեռակայքը:

Երկար սպասելուց, նորա խռոված սիրտը սկսաւ բաղխել (զարկել) արագ և անկարգ զարկողութեամբ. վերջապէս ծանրապէս հառաչեց նա, ձգեց դործը մի կողմ և անձնատուր եղաւ խորին մտածութիւններին:

Այս րոպէին լսուեցան դեպ ի տուն տանող տանուղքի վրայից թեթև ու շտապ քայլերի ձայներ, բացվեցաւ դուռը և ներս

մեռաւ մի ուրիշ մատաղահաս օրիորդ. ողջոյն, Լուիզա, ասաց եկաւորը, սուր և ուրախ ձայնով: Դու ամենևին չես երևում, խօսքը յառաջ տարաւ նա. ոչ մի լուր ևս չունիմ քեզանից:

Ճշմարիտ է, որ երբէք ժամանակ չունիմ, պատասխանեց տանտիկնին աղջիկը:

— Ա՛յո՛, դիտեմ ոյպիսի գործերով զբաղած ես դու. նստուածես, միայն նոր նոր Հագուստներ պատրաստելով, կամ ստացած պարգևներդ աչքի տակ ձգելով. Ճշմարիտ, մեծ գործեր են դրքա, ասաց հիւր աղջիկը, ծիծաղելով:

— Դադարիր, մարիամ, զրպարտանք է, որ քեզ երբէք բաւական եղած չէ իմ վերայ ծիծաղելը, ասաց Լուիզան ցած ձայնով:

— Ո՛հ, աստուած իմ, խօսքը յառաջ տարաւ մարիամը, ես չհարցրեցի անգամ, արդեօք կարելի՞ է քո մօտ մնալ, գուցէ անպատեհ ժամանակում եկած լինիմ: ասա ուրեմն, այսօր գալու է նա:

— Ազիտեմ:

— Երբ ուրեմն եկել էր:

— Երեք օր յառաջ.

— Ո՞նչ. ընծայից գոնեայ մի բան, նորանից յետոյ, երբ ես քո մօտ եկած էի:

— Ընծայեց:

— Խնդրեմ, ցոյց տուր ինձ:

— Այրիամ, ոչ այժմ, միւսանգամ, երբ կը գաս:

— Ոչ այժմ ցոյց տուր:

— Ինչպէս է քո մայրը, առողջանալու վերայ է, հարցրեց Լուիզան կամենալով փոխել խօսակցութեան նիւթը, որ շատ անհաճոյ էր երևում նորան:

— Ոչ, լաւ չէ: Ասյց, Լուիզա, կամին ցոյց տալ ինձ ստացած ընծաղ, թէ ոչ:

Ա՛յս լոպէիս լսուեցաւ մի անցանող կառքի ձայն և Լուիզան փոխանակ պատասխանելու շուտով վազեց դէպ ի պատուհանը:

— Ուրեմն դու հաւատի սպասումես նորան, ծիծաղելով ասաց մարիամը. ուստի մի կեղծաւորվիր, քո երեսից յայտնի է, ինձ կարող չես դու խաբել.

— Ա՛յո, կարելի է, որ նա գայ այսօր իսկ:

— Լա՛սիր, Լուիզա, խօսքը յառաջ տարաւ մարիամը, կէս մի կատակելով, և կէս մի խրատի ձևով. ես չեմ հասկանում, ինչու

Համալ սիրուածս դու նորան. աչքերը խոշոր, ինքը դեղնագոյն ճերմակ, վառուած, երեսի գոյնը փախած, կարճ ասեմ, մի մեռեալ, աներկբայ մի մեռեալ է. նորա պատանքը միայն պակաս է, որ դագաղի մէջ դրվի:

— Ըպա, դու քոն ինչու՞ սիրուածս, ինչ բանով իմից դերագանց է, դժգոհելով ասաց Լուիզան.

— Իմն գոնեայ օծիքներ է, նորա վերայ նայելը քաղցր է, իսկոյն երևումէ, որ աղնուական մարդ է:

— Ձգիտեմ, ում ինչպես առաւել հաճելի է, բայց ինձ այնպես է երևում, որ իմ Մինքելից լաւը աշխարհում ևս չկայ:

— Ուրեմն շատ լաւ է քո ախորժակը, ասելը խօսք չկայ. միայն չորացած հաց, աւելի ոչինչ, ձշմարիտ է, որ անխորհրդաբար գերմանացի չես, քո ախորժակդ ևս նոյնպես է. մի խօսքով, նորա վերայ նայելու անգամ տեղ չկայ:

Լուիզան իւր բարեկամի վերջին խօսքը ամենևին չլսեց, այնպես էր երևում, որ մտածումէր մի բանի վերայ, իսկ մարիամը նոյն միջոցին զարձեալ սկսաւ յառաջ տանել խօսքը:

— Ես եթէ լինէի քո տեղում, վաղուց հրաժարուած կը լինէի նորանից: Խնդրեմ ասա ինձ, ինչ ես գտել նորա մէջ, գոնեայ մի շահաւետութիւն ունենայիր նորանից, այդ ևս երևում չէ. ահա իմն որ ամենևին այլ բան է. նա թէև շատ աղքատ է, բայց տես, ինչպես հագուստները հոգաց իմ համար, որ նայելու արժանի են, և ամենքը, մեր բարեկամները նախանձումեն, հապա ինչպես թանգագին գլխարկ և բուռնուս գնեց ինձ, անտարակոյս քո ունեցածներից շատ լաւ է:

— Այո՛ունենայի և ես ամենայն ինչ, բայց ինքս չեմ կամենում:

— Ուստի չիմար ես դու, այսուհետև ի՞նչ պատճառ ունիս ցանկութիւն չնուագանելու քո սրտի մէջ:

Ինձ ոչինչ հարկաւոր չէ, միայն թէ նա սիրէր ինձ, ինչպես ես նորան սիրումեմ:

Մարիամը բարձր ձայնով ծիծաղեցաւ:

Ո՜հ, դու չիմար և չիմար, խօսքը յառաջ տարաւ նա ցաւակցութեամբ և գլուխը շարժելով, — չետոյ ինքդ ևս ցաւելու ես, բայց արդէն տարաժամ կը լինի:

Նրբեք ցաւելու չէի, եթէ նա սիրէ ինձ:

— Նա մի՞թէ դու կարծուելս, թէ նա ձկնորսի սրտով սիրուս մէ քեզ։

— Ի հարկէ սիրուսմէ, դու կարելի է կարծուելս, թէ ոչ։

— Ճաւական է, բաւական, հաւատա ինձ, որ նա քեզ սիրում չէ, այլ միայն քեզանով ղբօսանք է առնում, շատ կարելի է, թշնամութեամբ, ով գիտէ նորա միտքը։ Դու ինչ այնքան գեղեցիկ աղջկիկ ես, որ նա քեզ սիրէր, մի՞թէ նա փոքր է տեսել աշխարհիս երեսում աղնուական և կրթեալ օրիորդներ, որ անտարակոյս քեզանից շատ գեղեցիկ լինելու էին։

Լուիզայի երեսից չքացաւ խնդութիւնը, և նա տխրութեամբ սկսաւ մտածել։

— Ճայց ես ասեմ քեզ պարզապէս, որ նա միայն առ ժամանակ քեզանով զուարճանում է, իսկ յետոյ կը թողու, մանաւանդ այնպիսի միջոցում, երբ կարելի է միայնակ չլինիս։ Ըսա ուրեմն, ինչ պիտոյ է առնես այն ժամանակ։

— Ոչ, այդպէս լինելու է, կը տեսանես, և այն ժամանակ շատ անգամ ինձ կը յիշես։

— Ըսացի քեզ, մարիամ, որ նա այդ բանը առնելու չէ, մանաւանդ որ նա աղնուական և հարուստ մարդ է։

Մարիամը բարձրաձայն ծիծաղեցաւ։

— Նա նորան համար առնելու է, որ հարուստ ու աղնուական է։ Ծանր լինէր նորա փոխանակ մի կօշկակար, մի մարդ ստորին կարգից, կամ թէ վաճառական, շատ կարելի է, այնպէս չվարվէր քո հետ վերջերումը, բայց քո սիրածը անպատճառ իմ ասածներս կատարելու է։ Այսպէս բան է, որ աշխարհի երեսին ամենայն յիմարութիւնները միշտ լինում են հարստականների ձեռքով, մի՞թէ նոցա աչքում մի զգուշալի բան է մարդ անբաղդացնելը. այո դա մի դաւթ շամպանակիչ խմելուց ևս թեթև բան է։

— Ճայց ես կրկնում եմ քեզ դարձեալ, որ Միքայէլը այդպէս վարվելու չէր իմ հետ, ես լաւ գիտեմ, նա սիրում ինձ. իսկ եթէ կամէր այդպէս վարուիլ, Ըստուած նորա հետ, ձեռներս մեռս են, կաշխատեմ, ասաց Լուիզան հառաչանքով։

— Ձէ, սիրելիդ իմ, այնուհետև դժուար կը լինի աշխատել, երբ որ միանգամ դադարել էիր, և մանաւանդ սովորած էիր լաւ հագնուիլ, անոյշ ուտել, և փափուկ քնել, շատ ծանր երևելու էր վերստին սկսանել աշխատել. ո՛հ, ինչպէս անտանելի։

— Դու միայն ինձ խրատներ ես տալիս, մարիամ, բայց դու ինքդ ի՞նչ պատճառով նոյնպէս անցուցանում ես քո ժամանակը, որպէս ես:

— Ա՛ն, իմն ուրիշ է բոլորովին, ես իմն չեմ սիրել, միայն թէ կեղծաւորութեամբ վարվում եմ նորա հետ և իմ համար մի և նոյն է, թող լինի նա, կամ մի այլ ոք, միայն թէ օֆիցեր և դեղեցիկ:

Լուիզան ոչինչ պատասխան չտուեց, մարիամը նոյնպէս լուեց. մի քանի րոպէ տևեց ընդհանուր լռութիւն, յետոյ նորոգվեցաւ զարձեալ նոյն խօսակցութիւնը, մինչև ժամը զարկեց վից:

— Ո՜հ աստուած իմ, ձայն արձակեց մարիամը, տեղից վեր թռչելով, և շտապով առաւ գլխարկը և վերարկուն. ինձ վաղուց ժամանակ էր տուն երթալու, այսչափ միջոց քո հետ խօսակցութիւն արեցի. մնաս բարեաւ, Լուիզա:

— Նոր կը գաս միւսանգամ:

— Գիտեմ, կարելի է, վաղը, եթէ կը խոստանաս շաքարաղ ելիել:

— Ի՞նչ հարկաւոր է շաքարաղ:

— Դորա համար, որ վաղիւը քո ծնդ է:

— Ո՜հ, ես բոլորովին մոռացել էի:

— Ուրեմն պատրաստ կը լինի շաքարաղը:

— Գիտեմ:

— Ի՞նչ բան կայ չգիտենալու. նա այսօր քո մօտ գալու է, հրամայիր, որ բերէ: Ա՜ա, որ վաղիւը իմ ծնն է, պիտոյ է բարեկամներս մեծարել. ո՜հ, ձշմարիտ, զարմանալի ես դու, ամենայն ինչ պիտոյ է ուսուցանել քեզ, իրաւ որ երեխայամիտ աղջիկ ես և ամենևին ինքդ քո մտածողութեամբ մի բան ևս չգիտես:

Այս խօսքերը ասելով, մարիամը արդէն սանդուղների վերայ էր:

Գիտելով, որ ընթերցողներից կը ցանկանային ոմանք տեղեկանալ օրիորդ Լուիզայի կենսական հանգամանքին, կամի նորա մասին մի քանի խօսք ասել այս տեղ, և այս պատմութիւնը շատ փոքր տեղ գրաւելու է ձառի մէջ:

Նա էր գերմանացի որբ աղջիկ, որ ուսել էր գերձակութեան արհեստը մի գործատան մէջ, ուր պատրաստվումեն նորաձև զգեստներ: Որանից կէս տարի յառաջ, մի մեծատուն կնոջ համար պատրաստված հագուստ ուղարկեցին գործատնից Լուիզայի ձեռքով, որ տանի հագցնէ. այդ տեղ նոյն կնոջ որդին, Ա՛լբայել Ալեք-

սանդրովիչ Ալեխվը տեսաւ Լ՚ուիզային։ Լ՚ուիզայի դալար, ուրախ կերպարանքը և դրգռիչ խոշոր կապտագոյն աչքերը Ալեխվին շատ ախորժ ու սիրելի եղան. թէպէտ նա ևս շատ հաւանելի կացուց իւր անձը դերձակուհուն, սա աջին տեսութեան մէջ, սակայն Լ՚ուիզան երկար ժամանակ անխոնարհելի մնաց երիտասարդի բոլոր գործ դրած հնարներին։ Այլ նորա սիրալից տոհմահիները, քնքուշ հայեցուածքը և տուած ընծաները, վերջապէս տիրապետին հաւատացեալ երիտասարդի սիրուն և իւրին ևս տեղի տալ։ Երդէն երեք ամիս էր, որ նա իւր սեպհական բնակարանը փոխել էր, և դարձեալ նոյն գործատան համար հագուստներ կարումէր որոշեալ գնով։

Իւրի երթալուց յետոյ, Լ՚ուիզան յաճախ նստելով պատուհանի մէջ, երկար ժամանակ սպասումէր իւր սիրականին. վերջապէս անյոյս լինելով տեսանել Ալեխվին, վեր կացաւ տեղից, սկսաւ պատրաստվիլ, որ դուրս գնայ շրջելու. նոյն րոպէին, դրան առաջև դադարեցաւ մի փառաւոր կառք, և ներս մնաւ մի շատ սիրուն, խարտեաշ երիտասարդ, հագնված ամենևին անարատ նորեղանակ սովորութեամբ։

— Ողջոյն քեզ, Լ՚ուիզա, ողջոյն, իմ նազելիս։ Արցանելով թէ ինչ գործի վերայ էր, գրկախառնեց և համբուրեց մանուկ աղջիկը, որ բոլորովին կարմրել էր իւր հաճութենից։

— Ի հարկէ միշտ միապէս մտածումէի միայն քո վերայ և պիտոյ էր մեռանէի սրտիս նեղութենից, որ դու այսչափ յետացար։

Երիտասարդը ինքնաբաւական կերպով ժպտեցաւ և գրկելով համբուրեց նորա երկու աչքերը։

— Ուրեմն դու շատ սիրումես ինձ, Լ՚ուիզա, մեղմ կերպով հարցրեց նա։

Լ՚ուիզան պատասխանեց նորանով միայն, որ իւր փափուկ ձերմակ ձեռներով, տաք տաք վամաթվեցաւ նորա վզին։

Չկամիմ նկարագրել մանուկ մտքերի խօսակցութիւնները, որովհետև իմ բոլոր կարդացողներիս յայտնի են դոքա.... Երիտասարդը կամենումէր գնալ և արդէն հասել էր դրան մօտ, բայց յանկարծ դադարեցաւ։

— Ըստուած իմ, ձայն տուեց նա խնդալով, ամենևին մոռացել էի, աւ ահա, խօսքը յաւաչ տարաւ տալով նորան թղթերի մէջ փաթեթած մի բան. մի ասեր յետոյ, թէ ես չեմ սիրում քեզ։

— Ի՞նչ է այս, կարմրելով հարցրեց Լուիզան։

— Նայիր, ասա կը տեսանես։

— Ո՛հ, միքայել, միքայել, կանայի ճարտարութեամբ ցոյց տուեց ընդդիմութիւն, ինչու միշտ ընծաներ բերուես ինձ, ձշմարիտ, ես աւելորդ չեմ սիրում այդպիսի բաներ։

— Նայց այս անսպառակոյս պիտոյ է սիրես, եթէ տեսանես։

— Նայել անգամ չեմամիմ, սա յետ, հարկաւոր չէ ինձ այդ, առանց դորան ևս շատ բաներ ընծայեցիր դու ինձ, այնպէս որ ես մինչև անգամ ամաչում եմ։

— Ասրեմն դու չես ընդունում այս։

— Ո՛չ։

— Նայել ևս չեմամիմ։

— Ոչ։

— Ա՛հ, երջիկն անգամ հարցանում եմ քեզանից, Լուիզա, մտածիր, լաւ նայիր, հրաժարվելուցդ յետոյ չգտնես, որովհետև միւս անգամ կարող չէիր ստանալ ամենևին, և այնուհետև օգնելու չեն քո խնդիրները։

— Ասրեմն, ի՞նչ բան է այդ, ասա։

— Պոշակիր ինքդ, ես ասելու չեմ։

— Լուիզան դժուարութիւն ցոյց տուեց, իբրու թէ ցաւելով։

— Ձեռ կամենում, ասաց երիտասարդը, մի քայլ յառաջ դնալով դէպ ի դուռը. եթէ այդպէս է, ուրեմն մնաս բարեաւ։

— Ո՛հ աստուած իմ, աստուած իմ, կանչեց յանկարծ Լուիզան, թողելով դէպ ի երիտասարդը և գրեթէ կամքը վաթաթոցքը յափշտակել ձեռքից. մի՞թէ այս քո պատկերն է, ո՛հ միքայել, միքայել, ինչպէս շնորհակալութիւն մատուցանեմ քեզ։

— Ձէ իմ պատկերը, այլ մերը, մեք երկուքս միասին նկարված. միտքդ կը գայ, Լուիզա, թէ երբ նկարուած է դա, հարցրեց նա, խոնարհելով դէպ ի մատաղահաս օրիորդը և համբուրեց նորա շառագունած թշերից։

Ո՛հ, միքայել, ճշմարիտ, ինչպէս բարի ես դու, ասաց նա բարեսրտութեամբ, որ մտաբերել ես պարզևել ինձ այդ։ Ա՛տածիր, քանի՛ անգամ խնդրած էի ես այդ բանը քեզանից, բայց դու միշտ մերժում էիր իմ խնդիրը, և ես արդէն անյոյս էի երբ և իցէ քո պատկերդ ստանալ։

— Յառաջ կամք չունէի տալ քեզ դորան, բայց այժմ միտքս փոխեցի, ահա այս էր միայն պատճառը:

— Ինչպէս զեղեցիկ ես դու, և ես համեմատելով քո հետ ոչ-քան ոգեղ եմ, ասումէր Լուիզան, երբեմն պատկերի վերայ նայելով մեծ սիրով, և երբեմն երիտասարդի վերայ, որ ինքնաբաւական ծիծաղով նայումէր հայելու մէջ:

— Այլ ես երկար մնացի քո մօտ շատախօսելով, մնաս բարեաւ, Լուիզա, վաղուց արդէն ժամանակ էր ինձ գնալու. եթէ յետաձգեմ, պարտականը դու ես, որովհետև միշտ այսպէս յետ ես ձգում ինձ, ասումէր նա ուրախութեամբ տեղից բարձրանալով և հրաժարական ողջոյն տալով:

— Վաղիւը կը գաս, հարցրեց Լուիզան դողդոջուն ձայնով:

— Ձգիտեմ, կարելի է գամ:

— Ոչ, խնդրումեմ քեզանից, ասա յատուկը:

— Ո՞նչ պէտք է քեզ այդ:

— Ինձ հարկաւոր է դիտենալ:

— Ըսա, ինչ պատճառով հարկաւոր էր այդ, ապա կը մտածեմ և կ'ասեմ քեզ. իսկ եթէ միտք ունիս մի տեղ երթալու, շնորհ արա, իմ համար մի նեղուիր, գնա:

— Ոչ, ամենևին ոչ, վաղիւը իմ ազնս է:

— Նէթէ այդպէս, այդ ուրիշ գործ է. այնու ամենայնիւ հաւատի խոստանալ կարող չեմ, որովհետև վաղիւը իմ մօրեղբօրս գտելը ծննդեան օրն է, որ վաղուց չէ դուրս է եկել ուսումնարանից. ես ձեզ նոցա տանը ուտելու եմ և երեկոյին պարահանդէս պիտոյ է լինի, թէպետ այժմ գարուն է և պարահանդէսների համը արդէն վաղուց անցել է. բայց որովհետև մօրեղբօրս դուստրը անչափ սիրումէ պար գալ այդ պատճառով մօրեղբայրս ևս կամի անպատճառ պատրաստել նորան այդ ուրախութիւնը:

— Ո՞ւչ, քո քոյրը զեղեցիկ է:

— Մեկ խօսքով, հիանալի:

— Ուրեմն կարելի է, որ դու նորա սիրով ևս վառվիս, ասաց Լուիզան ցած ձայնով:

— Շատ կարելի է, որովհետև նա գերօրինակ զեղեցիկ է, և ես գերօրինակ սիրումեմ զեղեցիկները, ուստի կարող եմ և ամեն օր տարփածու լինել:

Ո՛նչպէս չես ամաչում դու, այդպիսի խօսքեր ասել ինձ. եթէ այդպէս ևս լինէր, դարձեալ լաւ էր քեզ լռել:

Ո՛նչ կայ, յայտնի բան է, որ ես յաւիտեան կարող չեմ միայն քեզ սիրել, եթէ եղուց կամ գուցէ այսօր ևս հանդիպիմ ուրիշ աղջկայ որ քեզանից գեղեցիկ էր, նորան ևս պիտի սիրեմ իսկոյն. կարելի չէ ապագայի վերայ յոյս դնել, պիտոյ է միայն գիտել ներկայ րոպէովս շահիլ:

Ու այնուհետև դու կը թողուս ինձ, արտասուքը աչքերում և հառաչանքով հարցրեց Ռուբլան գումաթափած:

— Ընենևին այդպէս. և անկարելի բան է ինձ բոլոր կեանքս քո հետ միայն մտշել, մանաւանդ եթէ սէրս կը սառչի քեզանից:

Ռուբլան միւս ևս չկարողացաւ համբերել, թորելցան արտասուքը նորա աչքերից. նա սկսաւ լացլինել: Ա՜հ, ասումէր նա դողդողջուն ձայնով, ես քեզ այդպիսի սիրով չեմ սիրած:

Ռուբեմն և մեծ յիմարութիւն է սրտիդ. բայց խնդրեմ, դադարիր լալուցդ, դեռ ևս սիրումեմ քեզ, և կարելի է, որ շատ ժամանակ ևս սիրեմ. միայս բարեաւ, հերիք է, ասումեմ քեզ, մի լար անօգուտ, դու տղայ չես:

Ա՛ղբար կը գաս, հարցրեց աղջիկը, ճանապարհ ձգելով նորան:

Կարծեմ, որ ժամանակ չեմ ունենալու, ուրեմն մի սպասիր:

Երիտասարդը գնաց, իսկ Ռուբլան նորա մտանելով իւր օթեւանը, նոր ի նորոյ սկսաւ լացլինել:

II.

Ընդառնային ուրախ օրերը անցած, տխուր խոնաւ և ցուրտ աշունը մտներումէր: Երեկոյեան պահուն, մեղ արդէն ծանօթ Ռուբլայի տունը լուսաւորված էր շատ թոյլ, աղօտաւատ ճրագներէն ճրագով, որ դրած կար սեղանի վերայ: Ինքը Ռուբլան արտում, վառած երեսով և արտասուքից ուռած աչքերով, թեք էր ընկել նոյն իսկ պատուհանի մօտ, ուր բարեկամնցանք մեք նորա հետ առաջին անգամն. երկար ժամանակ և գրեթէ անշարժ նստած էր նա մի և նոյն տեղում, ժամանակ առ ժամանակ սրբելով աչքերի արտասուքը, որ գլորվումէին նորա երեսից դէպ ի վայր. մատաղահաս աղջիկը մինչև այն չափ պաշարված էր մտատանջութեամբ,

որ չէր լսում ամենևին տան մէջ շարժվող քայլերի ձայները և դռնե-
րի բացման շառաչիւնը։

— Ահա եկել եմ ես, ինչ կամիս դու առնել, ձայն տուեց
յանկարծ ներս մտանողը, որ էր Ալեխվը։

Լուիզան անսակնկալ լսելով նորա ձայնը, կամէր գրկախառ-
նել նորան, բայց չհամարձակվելով, զկայ առաւ և նայումէր լուռ-
թեամբ։

Ինչու՞ լուռ ես, կրկնեց Ալեխվը բաւական խոշորութեամբ.
կարծեմ, կարելի է ասել, ինչ որ հարկաւոր էր քեզ, որոյ մասին
այնչափ յաճախ զգուեցուցիր ինձ անտեղի գրութիւններովդ։

Ա՛հքայել.... Ա՛հքայել Ալեքսանդրովիչ.... կամէր արտա-
բերել դողդոջուն ձայնով աղջիկը, բայց աչքերից հոսուն առատ
արտասուքը չթողեցին վերջացնել սկսած խօսքը։

Ինչ է այդ — արտասո՞ւք.... ուրեմն մնամ բարեաւ։ Իմ գալս
այս տեղ նորա համար չէ ամենևին, որ արտասուք տեսանեմ, կամ
թէ մխիթարող հանդիսադրի պաշտօն կատարեմ, ասաց Ալեխվը
բարկանալով. բարձրացաւ տեղից և առաւ դռակը, երթալու։

Ինչ գործ գործեցիք դուք, հարցրեց վերջապէս Լուիզան
խուլ ձայնով, և արագութեամբ մօտենալով հիւրին, արգելեց նո-
րա ճանապարհը. պատասխան տուեցէք ինձ, ինչ բերեցիք դուք
իմ գլխին։

Երդասիր նոյնը, ինչ որ պիտի առնէր և մի ուրիշ մարդ, եթէ
լինէր իմ տեղում, այսինքն պիտոյ է թողուլ քեզ, երբ որ դու նո-
րան յագեցուցել էիր. այսպէս պատասխանեց նա սառնութեամբ,
յետոյ նայելով դէպ ի նա, ասաց արհամարհաբար.

Բայց դու, կարելի է, մոռացումէիր թէ ես կը պահուիմ քո
հետ։ Էլդ մեծ սխալանք էր քո կողմից։

Ո՛հ, ոչ, ոչ, ես այնչափ յիմար չեմ։

Ուրեմն, ի՞նչ է քո յանկութիւնը. պածաճի է, ինչ է։

Ինձ հարկաւոր չէ քո արծաթը։

Ուրեմն, ես ամենևին կարող չեմ հասկանալ, և մի կերպով
վերահասու լինել, թէ ինչ պատճառով այնչափ ձանձրացուցիր
ինձ խնդրելովդ, որ գամ քո մօտ, վերջապէս պատասխանն պիտի
տաս, Լուիզա, թէ ոչ, ասաց Ալեխվը անհամբերութեամբ ու սըրտ-
նեղութեամբ. միայն խնդրեմ, եթէ կարելի է, շուտով. պատճառ,

ես ոչ ժամանակ ունիմ և ոչ փափագ, անխորհրդաբար ժամանակս կորուսանելու քո մօտ։

Միքայել ալեքսանդրովիչ, երկիւղով սկսաւ խօսել Լուիզան. ես կամէի....անվճռաբար յետ պահեց խօսքը և խորին տրտմութեամբ նայուածքը երիտասարդի վերայ, որ անպատշաճ կերպով թիկը էր ընկել նստարանի վերայ։

Ուրեմն ի՞նչ։ Դու կամեցար....ինձ տեսանել, այսինքն ուրախանալ իմ հազուադեպի ձևերով։

Ըյո՛, ես փափագ ունէի տեսանել ձեզ, որ խորհրդակից լինիմ ձեր հետ, ասաց նա բաւական խաղաղ կերպով, անտես առնելով Ալեկսի յայտնի ծաղրածուութիւնը։ Յիշելո՞ւ ձեզ այն երիտասարդը, Լուիզը, որոյ մասին շատ անգամ խօսել եմ ձեր հետ։

Ի հարկէ, շատ լաւ յիշելի է. մի քաղցած պաշտօնաւոր որ, կարծեմ, նորուսն վառուել է քո սիրով. այնպէս չէ՞։

Ըյո՛։

Ուրեմն ի՞նչ. անտարակոյս կամի՞ նա իմ տեղը բռնել քո մօտ. աստուածդ քո հետ, Լուիզա, տէրը քո հետ, ես պատրաստ եմ օրհնելու, միայն ինձ այնպէս երևումէ, որ այդ մասին իմ հետ խորհուրդ առնել, հարկաւոր չէ։ Ռաւական էր միայն քո յօժարութիւնը։

Ա՛նուշ աղջկայ թուշերը շառագունեցան։

Դուք սխալվումէք, ասաց նա հպարտութեամբ, նա կամի իմ հետ պսակուիլ։

Ինձ ի՞նչ փոյթ. պսակուիր, հոգիս, որոյ հետ կամիս. հացադործի, կօշկակարի, կամ թէ պատուաւոր քաղաքացու հետ. ինձ բոլորը մի և նոյն է։

Ես շատ լաւ գիտեմ, որ այդպէս է. բայց....այնուամենայնիւ....լռեց նա և խղճալի կերպով նայուածքը Ալեկսի վերայ։

Ուրեմն ի՞նչ պիտոյ է քեզ ուրիշ բան, երբ որ ամենայն ինչ լաւ գիտես։

Շնորհիւ է, եթէ այս գործը պատկան էր ինձ միայն, այնուհետև, հաւատացէք, որ երբէք չկամէի ես անհանգիստ առնել ձեզ։

Ո՛ր միւսին այլևս պատկանումէ այդ գործը. ես ամենևին չեմ հասկանում. կարծեմ, դու ես դիտաւորուածը պսակվելու և ոչ ուրիշ մի ոք։

Բայց, Միքայել Ալէքսանդրովիչ, մոռացել էք դուք, որ ես մենակ չեմ:

Ա՛խ, այո, ճշմարիտ է. ես մոռացել էի, որ դու սրտիդ նկրտոյ պահած ունիս մեր սիրոյ առհաւատչեան:

Այս բոլոր արհամարհաբար ասած խօսքերը երիտասարդի, մանաւանդ վերջինը, աւելի տրամեցուցին ու թունաւորեցին անբաղդ աղջկայ սիրտը, այնպէս որ պատրաստ էին նորա աչքերը դառն արտասուք դուրս թափել յանդիմանական բառերով, բայց նա զսպեց իւր ցաւը, և համբերութեամբ ու հանդարտութեամբ յառաջ տարաւ խօսքը:

Ես գիտեմ, դուք իմ հետ ոչինչ կապակցութիւն չունիք, այնու ամենայնիւ ես մոռացումէի և յոյս ունէի, որ մի ուրիշ էակի համար փոքր ինչ աշխատութիւն յանձն առնլու էիք. և յառաջ քան թէ տեսել էիք դուք, չէիք մերժելու և բարձի թողի առնելու նորան:

Ահա ասատած իմ, ինչպէս անտանելի է այդ, ես երբէք չեմ մոռացել, ոչ ձանձրացել նորան և ոչ իսկ հրաժարուել նորանից. ես ամենևին չունիմ ոչինչ միութեան կապ ոչ քո և ոչ նորա հետ. ինչպէս կամիս, արա և քո և նորա մասին, միայն թէ խնդրումեմ, որ ինձ հանգիստ թողուս. այդ պատճառով ահա առ քեզ և քո զաւակիդ համար այս արծաթս և բարեաւ ճնա:

Այս խօսքերը ասելով, ձգեց սեղանի վերայ մի քանի արծաթեայ տոմնակներ. բայց Լուիզան իսկոյն վեր առաւ դորանց, վաղեց դէպ ի նա և ասաց:

Առէք ձեր արծաթը, ահա. դա հարկաւոր չէ ինձ, ես ձեզ միայն սիրել իմ և ոչ թէ ձեր արծաթը, ասաց նա, յուսահատութեամբ տրորելով ձեռնները:

Շատ լաւ, պատասխանեց Ալիվը, և յեա առնլով արծաթը գնաց ի բաց:

Ատուածդ կը պատժէ ձեզ վասն ձեր անիրաւութեան առիս, տհաճութեամբ ձայն արձակեց Լուիզան նորա քամակից:

Ո՛ւր գըոյց, որ լաւ ենք շատ անգամ, և յոյս ունինք, որ այս վերջին անգամը չէ լսել այդպիսի խօսք, ասաց Ալիվը, ուրախութեամբ սանդուղներից ցած իջանելով:

Ցեմ կամենում նկարագրել երիտասարդ աղջկայ ցաւը և թշուառութիւնը, որովհետև դոքա ինքն ըստ ինքեան հասկանալի են շատերին:

Նրբը որ նա երկու օր սրդէն դառն լացով վերջացնում էր, տե-
ղեկութիւն ստացաւ որ իւր ծանօթներից մինը կամի նորան այցե-
լութիւն դալ: Նորա օթեւանի դուռը դղրդումով բացվեցաւ
և մի մարդ մեղմ ու երկչոտ ձայնով հարցրեց.

Կարելի է ներս մտանել, Լուիզա Իվանովնա:

Մտէք, պատասխանեց նա, դլուխը չբարձրացնելով:

Ներս մտաւ մի մանուկ երիտասարդ, աղքատօրէն հագնված,
վատառողջ, դունատ, բայց բաւական ախորժելի դէմքով. եր-
կար ժամանակ լուռ նստած էին նորա, առանց մի բառ բերանից
հանելու:

Ես դուք այդպէս միշտ լաց էք լինում, հարցրեց հիւրը վեր-
ջապէս, անդարձ բևեռելով աչքերը Լուիզայի վերայ, և այնպիսի
ձայնով, որից յայտնի երևումէր քնքուշ սիրոյ քաղցր բարեկամու-
թիւն:

Ինձ բաց ի լացից այլ բան չէ մնացել:

Բայց ինչ օգուտ պիտի բերեն ձեզ արտասուքը, եթէ ոչ,
վնասելով ձեր առողջութեանը, աւերելով ձեր աչքերը. ուրիշ
ոչինչ: Խնդրում եմ, մի լաք, դոնեայ իմ ներկայութեանս միջոցին,
եթէ միայն կամենայիք դիտել թէ ո՛րպիսի ցաւ է իմ սրտին և որ-
քան ծանր, նայել ձեր վերայ:

Ա՛շմարիտ է, դուք ամենևքեանքդ առ ժամանակ այդպէս էք
երևում, ասաց հեկեկանքով երիտասարդ աղջիկը:

Նորա դարձեալ լռեցին:

Ա՛ր ջապէս, Լուիզա Իվանովնա, տեսութիւն արեցիք դուք
Միքայել Ալէքսանդրովիչի հետ, հարցրեց հիւրը փոքր ինչ մտա-
ծելուց յետոյ:

Տեսութիւն արեցի:

Ուրեմն ինչ ասաց նա:

Լուիզան թոթովից ձեռքով, և աչքերից թափվեցան առ-
ատուք:

Խօսեցիք նորա հետ իմ մասին:

Այո խօսեցի:

Ուրեմն առաջ նա ձեզ որպիսի և իցէ օգտակար խրատ:

Նա ասաց, որ ոչինչ բան չունի իմ հետ և խնդրեց, որ այ-
սուհետև ծանրութիւն չտամ նորան, հեկեկանքով, վշտացած պա-
տասխանեց Լուիզան:

Վարձեալ տիրոց բաւական երկար լռութիւն. Լուիզան լաց էր լինում, իսկ Լիռովը (այսպէս էր երիտասարդի ազգանունը) քայլում էր սան մէջ արագ և անհամաստատ ընթացքով:

Լուիզա Իվանովնա, ասաց Լիռովը, մօտենալով աղջկան և ձեռքը բռնելով, դադարեցէք ցաւելուց, մի՞թէ յաւիտեան պիտի լաք և մաշուիք մի մարդու պատճառով, որ քառորդ կոպեկի արժէք չունի. մտաբերեցէք, մի՞թէ ես այս բաները գուշակած չէի ձեզ, որ այժմ պատահեցաւ:

Վարդ էի այն միջոցին հաւատալ ձեր խօսքին, երբ նա այնպէս սիրում էին ինձ. ոչ մի տիւթ չկար կասկածելու:

Խաւական է....նա երբէք մտածել չէ անգամ սիրել ձեզ, և այդ բոլոր անցքը ոչ այլ ինչ է, բայց միայն հարստականի եկամուտք և մանաւանդ մի անգործ մարդու:

Ա՛խ, Նիկոլայ Ալեքսեեվիչ, ես ամենևին կարող չէի այդպէս մտածել. մի՞թէ նա ճշմարտապէս սիրած չէ ինձ երբէք:

Հաւատացէք, որ այդպէս է....

Լուիզան, խօր վշտացած, կախեց գլուխը և նորա սիրտը պատերազմում էր ցաւերի հետ:

Ա՛հա, Լուիզա Իվանովնա, խօսքը յառաջ տարաւ Լիռովը, եթէ այն միջոցին լսած լինէիք իմ պատուէրներին, այժմ տեղիք լինելու էր այսպէս լալ, այլ ապրելու, կամ կեանք վարելու էիք, եթէ ոչ այնքան ուրախ, գոնեայ խաղաղ սրտով, և երգեր երգելով, ինչպէս առաջին օրերը պատահումէր, և ես ականատես էի դորան:

Բայց գիտէք արդեօք այն առածը, Նիկոլայ Ալեքսեեվիչ, «եթէ գիտենայի թէ ո՛ր տեղ սայթաքելու էր ոտքս, այն տեղ ի հարկէ փափուկ խոտ կը սփռէի» ահա ձեզ իմ պատասխանս:

Այս խօսքերը աւարտելով, տեղից վեր կացաւ Լուիզան, մի գործ հոգալու:

Լիռովը նայեցաւ նորա քամակից, ցաւելով, յիշեց հառաչեց և անձնատուր եղաւ խորին մտայածութեան:

Ո՞ՂՋ բանի վերայ այդքան մտածումէք և ինչու՞ այդպէս վշտահար էք դուք էս, հարցրեց Լուիզան վերադառնալով և գործը դարձեալ մէջ բերելով:

Դուք տխուր էք, հարկաւ ես էս կարող չեմ ուրախ լինել, պատասխանեց նա առանց դլուխը բարձրացնելու:

Ձմեռնիտա, ի՞նչպէս բարի էք դուք, ասաց աղջիկը հառաչանքով:

Լուիզա, ինձ այնպէս է երևում, որ դուք կամք չունիք պատասխանելու այն բանի մասին, որ ես ասել էի ձեզ վերջին անգամ: չէք մոռացել դորան:

Այդ յիշելի է ինձ, պատասխանեց Լուիզան զբաղուած մտքով:

Ուրեմն տուէք ինձ հաստատուն պատասխան. կամիք պսակուիլ իմ հետ, թէ ոչ:

Նա առաւել կարմրելով Լուիզան, տրտմութեամբ ցած թողեց դլուխը:

Ես, Նիկոլայ Ալեքսեևիչ, ցաւած սրտով ասաց Լուիզան, ծրչափ անպատշաճ ամուսնակից լինելու եմ ձեզ, դուք թէպէտ և չքաւոր, այնու ամենայնիւ աղնուական մարդ էք, բայց ես, անշան, անկիրթ կնամարդ, վերջապէս թէև լինեի....

Լուիզան լսեց և ամօթանքից մի փայլուն կարմրութիւն պատեց բոլոր երեսի վերայ և կապոյտ աչքերից թռիփուռիկին արտասուք:

Գիտեմ և քաջ գիտեմ ամենայն բան, ձայն արձակեց Լուիզը չկարմրելութեամբ, բայց ես վաղուց սիրում եմ ձեզ, և դարձեալ կրկնում եմ ի նոյնը, ինչ որ ասել եմ այն միջոցին. ես կամիմ մոռացութեան տալ ամենայն բան, որ պատահել է ձեզ և սիրով կը տամ իմ կոչումը ձեզ և ձեր երեխային, և կը կարգում նորա հայրը, փոխանակ այն հօրը, որ հրաժարուել էր իւր դեռ ևս չծնած մանուկից:

Ա՛ի՞թէ դուք այդպէս ձշմարիտ սիրում էք ինձ, որ պատրաստ էք ամուսնանալ իմ հետ, անտես առնելով այն ամենը....և դուք չէք խաբելու ինձ, Նիկոլայ Ալեքսեևիչ, բացագանչեց կնամարդը, իւր լսողութեանը հաւատ չընծայելով:

Ամենևին: Ես խնդրում եմ միայն ձեզանից, որ մոռանայիք և այսուհետև երբէք չմտաբերիք այն մարդը, որ այնպէս անարժանապէս վարվել է ձեր հետ:

Բայց ձեր ազգականները ինչ պիտոյ է ասեն. . . . կարելի է որ նոքա խիստ տհաճին ձեր վերայ, լսելով թէ դուք ամուսնացած էիք մի աղքատ և անհայտ աղջկայ հետ. մտածեցէք այս բանի վերայ:

Ես գրեթէ բնաւ ազգական չունիմ, և նոցա ամենևին բան չկայ այս տեղ. ստոյգ է, ունիմ ես մի հօրեղբայր, որ և կնքահայրս է, բայց նա հարուստ և շատ բարի մարդ է, այլև անզաւակ; իւր բոլոր կարողութիւնը ինձ թողելու է յետ մահուանը:

Գոնեայ նորան մի նամակ գրել պիտոյ էր, յայտնելով ձեր դիտաւորութիւնը, և սպասել պատասխանին:

Ես վաղուց այդ մասին նորան գրել եմ և պատասխանը վաղուց ստացել եմ: Նա գրումէ ինձ այսպէս. Տէրը քո հետ, եղբայր իմ, ամուսնացիր, արժանաւոր կին ընտրիր քեզ, և եթէ հարսանիքի համար հարկաւոր լինի քեզ արծաթ, յայտնիր ինձ: Դո կամ մանուկ կնոջդ համար ես պատրաստ եմ անային պիտոյքը հոգալ. միայն զգուշացիր, որ ընտրած կինդ անտեսութեան հմուտ լինի և ոչ թէ միայն իւր սպիտակ ձեռներովը պարծենայ. Տէրը պահպանիչների հետ:» Եթէ կամենաք, կարող եմ նորա նամակը բերել առ ձեզ և դուք կարող էք ինքնին կարդալ: Այժմ ինչ ունիք ասելու ինձ:

Լուիզան փոխանակ պատասխանելու, քարշեց միայն դէպ ի ինքը երիտասարդի ձեռքը, թաց արեց նորանց շնորհակալութեան ջերմ արտասուքով, իսկ յետոյ կարդաց վերաւոր սրտի խոլքից այսպէս.

Թող Աստուած հատուցանէ ձեզ, Նիկոլայ Ալէքսէիչ, ձեր բարերարութեան փոխարէնը: Իսկ ես կարող չեմ, արժանաւոր խօսքերով յայտնել ձեզ շնորհակալութիւնս:

Որանից մի ամիս յետոյ Լուիզան ամուսնացել էր Լիռովի հետ:

III.

Ընդան շատ ու շատ տարիներ:

Ամանակն էր յունիս ամսու մուտքը:

Ֆինլանդիան քաղաքների մի նաւահանգստում, որ հռչակաւոր է իւր առողջարար ջրերով, ամառնային մարդաշատութեամբ և կենդանի տեսարաններով, ծխվումէր մի նոր դաղարած

շոգենաւ, ուր սովորաբար լինում էին խառնակութիւնք, ցնորմունք և կառքերի ահագին շառաչիւն:

Նեղ սանդուղներից ցած իջաւ ծանր շարժողութեամբ մի հաստակառոյց մարդ, կերպարանքը քաղցր, պատուաւոր, արծաթագոյն մազերով, և առաւել հաստ ու դեր մարմնով. նորա հետ կից թև թևի տուած, թևերև հագուստով, հասարակ յարդից հիւսած գդակով երիտասարդ մի դեղեցիկ աղջիկ 17 տարեկան, մազերը սեաւ, երեսը գունաթափ, քիթը փոքրիկ սրածայր և աչքերը մթագոյն կախարդող:

Հայրիկ, ինչու չեմ տեսանում ես Յօհաժը, մի թէ նա չէ եկել մեզ հանդիպելու, ասումէր աղջիկը նուրբ և ազդու ձայնով:

Դեռ ևս խօսքը չվերջացրած, և ահա մօտեցաւ նոցա մի վաշկակալ և առ հասարակ շատ քաղաքավար երիտասարդ:

Ա՛օրհնեալդ, քուրիկ, վերջապէս եկաք և դուք, ուրախութեամբ ձայն տուեց նա, ողջունելով և փաթաթվելով եկաւորներին, դուք այնքան երկար յետացաք, որ ես արդէն յուսահատ էի այս տեղ տեսանելու ձեզ և այնպէս կարծիք արեցի, որպէս թէ դուք փոխած էիք ձեր դիտաւորութիւնը:

Նէ ճշմարիտ, շատ դժուար էր ինձ վ՚առնքայիս խօսք հասկացնել, չկամիմ, ասումէ, շոգենաւով ուղևորվել, ինչ կամիս արա, որ կողմ կամիս, գարկ գլուխդ: Պատուհաս են այսպիսի աղջիկները:

Ինչո՞ւ այդպէս ասումէիք, քուրիկ:

Կարծեօք, պատճառը մի շատ հասարակ բան, որովհետև վախենումեմ ջրի վերայ ճանապարհորդութիւն առնել, և վերադառնալուս թուղ աշխարհը ոտքի վերայ կանգնեցնէք, բայց ես միւսանգամ շոգենաւ մտանելու չեմ, ինչ կամիք, ասէք, ամենևին անհաճոյ է ինձ այդպիսի ճանապարհորդութիւն:

Պիտի հաճոյանայ.... Նէ թէ դու պիտենայիր, Յօհաժ, թէ ինչպէս եղաւ իմ ճանապարհորդութիւնս սորա հետ, և ո՛րքան ցաւեցայ ես, օր դու չգտանվեցար մեր հետ. մէկ խօսքով, չարաչար մաշուեցայ:

Ասել է, թէ քուրիս Յովային տկարութիւն հանդիպեցաւ, պիտոյ է դիտել, որ շատ անախորժ դրութիւն էր այդ:

Չափազանց, երևակայիր, որ բոլոր միջոցը ճանապարհորդութեան պատկել էր նաւասենեկի մէջ, բայց եթէ դիտենաս, թէ ինչպէս բարկանումէր ևս:

Ոչ, չեմ կը դառնանք ցամաքով, լսե՞մք, Հայլիկ, կրկին և անկեղծ ասումեմ ձեզ, որ սորանից չեռոյ ամենևին շոգենաւով երթալու չեմ: լաւ է մեռանիմ, քան այս տեղ մնամ:

Շատ բարի, իմ սիրելի, շատ բարի, միայն թէ խնդրեմ չնեղանալ և լաւ փաթաթուիլ. լսե՞մես ինչպէս հով քամի փչէց. Աստուած պահէ, կարելի է մրսես և ձայնդ կտրվի, այնուհետև ի՞նչ պիտի առնեմ:

Ոչ Հայլիկ, ես ղգուշեմ իմ մէջ մեծ տաքութիւն, հանդարտութեամբ ասաց նա, բայց ձգելով իւր վերարկուն:

Ո՛հ, քոյրիկ, քոյրիկ, դուք ամենևին չէք փոխվել, և ինչպէս յառաջ, նոյնպէս այժմ նեղսիրտ էք:

Վիժուալին է այս կրթեալ աղջիկներէ հետ ապրելը. սոքա ինչ որ կամենան, կատարումեն անպատճառ, հառաչելով ասաց Հայլը: Այդ դու, Յօռժ, ոչինչ չես խօսում, այդիսք պատրաստի ես մեզ օթևան, խօսքը յառաջ տարաւ նա, դառնալով դէպ ի երիտասարդը:

Այո, մօրեղբայր, պատրաստել եմ, և մի այնպիսի սիրուն օթևան, որ մեկ խօսքով հիանալի է. կասկած չունիմ, որ շնորհակալ պիտի լինիք:

Այսանի բան, այնքան սիրուն պիտոյ է լինի, որ դուք կարող էիք այդպէս գովել:

Ո՞նչ է, քոյրիկ, իմ վերայ ևս կամիք բարկանալ. տասցէք գոնեայ իմ յանցանքը:

Տեցէք ինձ, սիրական Կաօլինսքիյ, մի ձայն եկաւ հեռուից, և մի երիտասարդ կրկին կանչեց Յօռժը:

Ասացէք Աստուծոյ սիրուն, ով էր այն գեղեցիկ սիրուն աղջիկը, որի հետ այժմ խօսումիք դուք. եթէ չեմ սխալվում, նա նորեկ հիւր է այս տեղ. այս խօսքերը արտասանելով, նայումէր հիացմունքը աչքին դրած դէպ ի այն սիրուն պարդապուած կերպարանքը որ հօրը հետ երթումէր:

Իմ քոյրս է, մօրեղբօր Ալեխվի դուստրը. ճշմարիտ չէ՞, որ նա շատ սիրուն է, մանաւանդ որ դեռ նորերումս աւարտեց մանկամարդերի դպրոցում իւր ուսմունքը:

Առաւել զմայլեցուցիչ, առաւել շնորհալից լինի:

Շնորհաւոր լինի քուրիկ, որ հալեւ թէ եկաւորած տեղս, և ահա իսկոյն յայտնիք շատերի հարցասիրութիւնը. սոյն իսկ

Ժամուս հալցուփոյձ ալեցին լինձանից ձեր մասին, ասաց Ժօռժը, վերադառնալով դէպ ի իւր եկաւոր ազգականքը։

Վ՚առինքան ժպտեցաւ շատ քաղցր կերպով։

Հայրիկ, ասաց նա, վաստակեցայ, կառքով երթանք։

Իմ սիրելի, մի՛ թէ տակաւին չձանձրացար նստելուց։

Ոչ հայրիկ, միայն թէ երթալու ևս յոգնած եմ։

Հայրը դարձաւ և կամէր ձայն տալ մի սայլորդի։

Հարկաւոր չէ, քոյրիկ, ոտովհետև, եթէ մի քանի քայլ ևս յառաջ գնանք, տուն կը հասանինք, կառք վարձելը և նստելը աւելի ժամանակի կարօտ է, քան թէ ոտքով տուն հասանելը։

Մի և նոյն է, ես կամիմ կառքով երթալ, վաստակած եմ և պլուխս ցաւումէ, ասաց աղջիկը շերմունքը ուռցնելով։

Տեսանումես, Ժօռժ, կարելի չէ նորան խօսք հասկացնել. կաւմեցաւ, պիտոյ է կատարել. ձայն տուր մի կառքի։

Նրիտասարդը երթումէր սայլորդ կանչելու, և Վ՚առինկան իսկոյն նորա յետքից ձայն արձակից ուրախութեամբ։

Ժօռժ, Ժօռժ, հարկաւոր չէ, փոխեցի դիտաւորութիւնս, և ոտքով կ՚երթամ։

Ինչպէս զայրացել էք դուք, Վ՚առինքա, ասաց Ժօռժը խընդալով։ Վ՚առինքան ևս ժպտեցաւ։ Յետոյ սկսաւ յանկարծ խօսք բանալ այսպէս. ո՛հ աստուած իմ, դուք ոչ մի բան չտասցիք ինձ, ես ևս մոռացել էի ձեզանից հարցանել, արդեօք սկսել են այս տեղ ուրախութեան հանդէսները։

Օֆիցիրներ շա՞տ են այս տեղ։

Ա՛յո՛ կան։

Խայց նոցա մէջ գեղեցիկներ շա՞տ կան։

Ո՛շմարիտ, չդիտեմ, Վ՚առինքա. իրաւը ասեմ, այդ բանին ուշադրութիւն արած չեմ։

Մի՛ թէ ամօթ չէ՞ ձեզ, Ժօռժ, ուրեմն ի՞նչ բանի վերայ էր ձեր հայեցողութիւնը, եթէ այդպիսի բաներ անտես էք արած։

Ապա, եկաւոր կանայք շա՞տ են, հարցրեց հայրը։

Չէ կարելի ասել, որ շատ են, այնու ամենայնիւ երեկ և այսօր եկողներ շատ եղան։

Մի՛ թէ դուռ ամենայն օր ծուխեղերքում էիր։

Ա՛յո՛, մօրեղբայր իմ, ես հանապազ սպասումէի ձեր գալուստեանը և գալիս է հանդիպելու ձեզ։

Պիղծասոլ, ասաց մօրեղբայրը ցած ձայնով։

Նայց Յօուժը յայտնի յայտնի ծիծաղեցաւ։

Նկճի՛ր Ա՛հարն, շարունակեց ծերունին։

Ոչ, մօրեղբայր, պատկերացուցէք մտքով իմ անբաղդու թիւնս. նորևրուան նամակ ստացայ նորա եղբօրից, որ գրում էր ինձ, թէ միտք չունին այս տեղ գալ, հապա պիտի ուղևորուին դէպ ի ուրիշ թագաւորութեան աշխարհ։

Յաւում եմ քո վերայ, եղբայր, շատ յաւում եմ։

Տեղիք չկայ յաւելու, մօրեղբայր իմ. յոյս ունիմ, որ առանց Ա՛հարուն ևս կարելի պիտոյ է լինի ինձ ուրախութեամբ ժամանակ անցուցանել, որովհետև ես արդէն տեսել իմ այս տեղ շատ գեղեցիկներ։

Ասել է, թէ կան գեղեցիկներ։

Ո՞նչպէս չէ։

Նո՛ւ շա՛տ գեղեցիկներ։

Այո՛, այնու ամենայնիւ իմ քոյրիկս ամենից գեղեցիկն է։ Ծերունին նայեցաւ իւր դստեր վերայ և հաճութեամբ ծիծաղեցաւ գլուխ տուեց երիտասարդին։

Ափսոս կան այս տեղ գեղեցիկ կանայք որոնց սիրով կարելի էր բորբոքվիլ, հարցրեց ականջին։

Ոչքան ձեր սիրտը կամենայ։

Ծերունին դարձեալ ինքնահաճութեամբ ծիծաղեցաւ. և այսպիսի խօսակցութեամբք ինքեանք ևս չեմացան, թէ ինչպէս հասան պատրաստած օթևանին։

Ձանապարհ արէք սիրելիայրը, ձայն տուեց Յօուժը սիրով, և վայելուչ շարժուածքով յաւաչ ձգեց իւր քոյրը։

Ձգիտեմ, արդեօք ընթերցողներս ճանաչեցին այս աղջկայ հայրը, որ նոյն իսկ մանուկ երիտասարդ Ա՛նքայել Ալեքսանդրո վիչ Ալեմէն էր, որին ծանօթացել էին պատմութեանս սկզբում, թշուառութեան մէջ թողած Լուիզան ծնուած։ Ակսեալ այն օրից, երբ նա վերջին անգամ տեսութիւն էր եկել Լուիզային, նորա երբէք տեսած չէին միմիանց, և Ալեմէը մոռացաւ Լուիզային, նորա մասին հարցմունք անգամ ալած չէր, որովհետև նոյն տարում նա դուրս գնաց քաղաքից դէպ ի այլ աշխարհներ և այս պատճառով նորա մտքից գնացել էր Լուիզան։ Երբ տարի անցած, նա ա մուսնացաւ մի հարուստ, մանուկ և գեղեցիկ օրիորդի հետ. նորա

կինը պատուաւոր ազգականները շատ ունէր, և այսպէս ձանապարհ բացուեցաւ նորան յառաջադէմ լինելու. նա ձեռք բերից նահանգապետական իշխանութիւն, յետոյ հրաժարվեցաւ այդ պաշտօնից դէյվիտէլնիյ ստատսկիյ սովետնիկի աստիճանով: Նորա առանձին թուլացնողները էին գեղեցիկ կանայք. նա ամենայն կնամոլդ սիրուէր, խոիր չառնելով երբէք, կրթեալ է կամ ազքատ, կամ թէ իւր կոչմանը անարժան: Մանուկ այրի կանայքը մեծ շահ էին ստանում նորա թուլութենից:

Ամուսինն լուրեր, իբրու թէ իւր նահանգապետութեան պաշտօնից հրաժարվելու պատճառն էր մի խորհրդաւոր իրողութիւն, որպէս թէ նա շատ վառուած էր մի նոր ամուսնացած նախանձոտ մնոդու կնոջ սիրով. հաւատալ այդպիսի լուրերի ընդհանրապէս դժուարին է և անհիմն, մանաւանդ որ առաջը ասուէր. «Մի հաւատար ամեն լսածիդ:»

Ամեց տարի յառաջ Ալեխվը այրիացել էր. նորա բազմազաւակ գերդաստանից միայ մի աղջիկ Վառինքա անուն, որ մի քանի ամիս յառաջ աւարտել էր իւր ուսումը: Վառինկան էր մի գեղջկուհիակ գեղեցիկ, բայց չափից դուրս համարձակ աղջիկ. նա վայելումէր անսահման ազատութիւն, կատարումէր ինչ որ սիրտը կամէր, և իւր կամքին համեմատ բաւական ձարտար անտես էր, նոյնպէս ևս շահումէր հօր սիրտը, որ այնքան սիրումէր նորան: Բայց պիտոյ է ձշմարիտը խոստովանել, Ալեխվը առաւել պատուումէր մի գեղեցիկ կին, քան թէ իւր դուստրը, և եթէ Վառինկան անբաղդութեամբ չծնանէր այնպէս գեղեցկատեսիլ, ինչպէս որ էր, այնուհետև Ալեխվը վայելելու չէր այսպիսի ուրախ կեանք, որպիսի վայելումէր այժմ. և այսպէս Վառինկան ևս կարող լինելու չէր ուշնենալ համարձակութեան հոգի:

Ժօաժ Պռօլինսքին, լինելով Ալեխվի թոռը, որ նորա հարազատ քուերորդին էր, աւելի համարձակ իրաւունք ունէր մօրեղբօր մօտ, այն պատճառով, որ ինքը շատ թեթևամիտ էր և սիրումէր նմանապէս կապակցութիւն գեղեցիկ կանանց հետ:

Այս միջոցներում անյայտ կերպով անցանումէին օրերը միմեանց հետևից. հանգստեան բաղանիքների հատարակութեան հանդիսները արդէն սկսուել էին և Վառինկան նոցա ամենին անհրաժեշտ մանակից էր:

Ա՛ստիկան ալրէն նշանաւոր էր, և հանդէսներուն մէջ անդրանիկ դաշնին սպասումէր նորան, նա միշտ պաշարված էր մանուկ երիտասարդներով և ամեն մինը նոցանից մտածումէր հնար նորա ուշադրութիւնը իւր վերայ դարձուցանելու: Յոյզ նորա զեղչիկ դէմքը և սիրուն մանկական զուարճախօսութիւնը, նա հաւատաց հալսնացու ևս էր: Ամեն մի վայելչութիւն ձեռք բերելով, քաղաքից դուրս ամեն մի ըզօսանքի մասնակից էր, ուստի մի բոլորտման ազատութեան մէջ կարող էր պանծալի կացուցանել իւր անձը և կառավարութեան հանդէսների մէջ. մէկ խօսքով, Ա՛ստղինքան լողումէր բարիքներին լուսթեան և առատութեան մէջ. ահա և այդ պատճառով նորա մանուկ գլուխը պատուավումէր անդադար սիրավառութեամբ, մինչև անգամ պատահեցաւ, որ մի քանի երիտասարդների սիրով վառուած լինելով միանգամայն, և չգիտելով, թէ ո՛ւմ պիտոյ էր տալ նախապատուութիւնը, այդ մասին խորհրդակից էր իւր եղբօր հետ, որ և այդ դժուարութենից դիւրութեամբ հանումէր նորան. հայրը տեսանելով, որ Ա՛ստղինքան շատ ուրախ է և օրէ օր գեղեցկանումէ առաւել, կատարեալ էր և թագուցանումէր սրտի մէջ իւր հաճութիւնը դրստել ամեն մի նոր յաջողութեան վերայ:

IV.

Ա՛յնպամ, երբ Ալիեվը պատրաստվումէր խնջոյք երթալու և այդ պատճառով զբաղուած էր երեսի մազերը սանրելով (ածիլելով), շտապով եկաւ նորա մօտ Ա՛ստղինքին, շունչը բռնված:

Վ՛հուի, սիրելի քեռի, միայն թէ խնամայիք, ինչպէս զարմանալի նոր լուր ունիմ, բայց և այն ասեմ, որ ձրի ասելու չեմ ձեզ դորան, ասաց նա, հաղիւ շունչ քաշելով:

Ո՛հ, դու իմ նաղելիս, ճշմարիտ, խելագար ես, ասաց քեռին խնդալից հայեցուածքով, տեսանենք թէ ի՞նչ նոր բան է այդ, ասա ժողմ, ես լսումեմ:

Ա՛յ քեռի, ձրի չեմ ասելու: Ի՞նչ կը տաք:

Նախ և յառաջ հանդարտիր, և յետոյ պատմիր, ապա թէ ոչ, անկարելի է քո խօսակցութիւնը հասկանալ, դու բոլորովին շնչասպառ ես:

Էհ, քեռի, սիրելի քեռի, կանչեց ուրախութեամբ մանուկ մարդը և վազվազելով իւր քեռու վզին գրկախառնեց:

Խելագար դու, ինչ է պատահել քեզ, ասաւ կարգով, մի գուցե Աեռին եկած լինի:

Ո՞նչպէս Աեռի, ասաց Յօռաժը, բարկանալով. ամենևին ոչ, ես նորան վաղուց մոռացել եմ, մի ուրիշ կին եկաւ, ուրիշ, և ինչպէս պէտք էիցիկ, մեկ խօսքով, հիանալի է:

Ձշմարիտ ես ասում, ուրախութեամբ կանչեց Ալեկվը, ուրեմն ասա շուտով:

Զուի կարող չեմ ասել: Ի՞նչ կը տաք:

Մի շիշ շամպանական, միայն թէ պատմիր շուտով, ով է եկաւողը, ինչ բան է:

Ոչ, քեռի, այդ փոքր է:

Թօղ երկու, թող հինգ, վերջապէս տասներկու շիշ լինի, ասա շուտով:

Տասերկու շիշն յօժար եմ, ուրեմն լսեցէք, ահա պատմեմ մանրամասնաբար, միայն բերեցէք, որ ամբողջ երեք օր է որ հանդիպել չեմ ձեզ. շարունակ գինով էի, և այդ պատճառով ժամանակ չունէի հանդիպելու ձեզ:

Բայց, Յօռաժ, դժգոհալով կտրեց խօսքը քեռին, ես քեզանից չեմ հարցանում, թէ ուր էիր կամ ինչ դործ ունէիր: Աւտի դու պատմիր ինձ դործը, այսինքն ով և երբ եկաւ և ինչպէս տեղեկացար դու այդ բանին:

Ուրեմն լսեցէք ահա: Նրիկ ընկերներով միասին դնացինք Ծովի եղերքը շոգենաւի գալստեանը սպասելու, և սրդարև մի քանի րոպէից յետոյ, շոգենաւը եկաւ, որոյ մէջ եկաւորներ շատ ու շատ էին:

Բայց կին մարդիկ շատ էին:

Ձշմարիտ, ընկերայք, միայն տեսայ մի կին մարդ և նորա վերայ մոռացայ ամենայն բան և ամենայն ինչ, այո՛ ինքս ինձ մոռացայ. պատկերացուցէք մտքով....ա՛հ, կարճ ասեմ....մի հրաշք, մի կատարեալ կերպարանք որոյ նմանը մինչև այսօր ոչ մի տեղ և ոչ մի ժամանակ չեմ տեսել:

Դու լ հարկէ, իսկոյն տեղեկացար թէ ով էր այդ կին մարդը:

Թօղ տուէք, քեռիս, խօսքս մի կտրէք, ապա թէ ոչ, բոլորը կը մոռանամ: լսեցէք, ահա, ես նայելով եկաւորների վերայ, նկա-

տեղի նոցա մէջ մի ծանօթ օճիլեր, այն բարի երիտասարդ Ալէք-սանդր Լ֊իւռովը, և կամէի հարցանել թէ արդեօք դիպուածով պատահել է այս տեղ, և ահա յանկարծ մօտակայքումն լսուեցաւ մի փափուկ ձայն. «Որ տեղ էք դուք, պարոն Ալէքսանդր, խնդրեմ մի թողէք ինձ միայնակ.»

Ահա, այս տեղ եմ ես, կոմսուհի, պատասխանեց Լ֊իւռովը, առաջարկելով իւր ձեռը այն բարձրահասակ կնոջ, որ հագնված էր վայելուչ և փառաւոր կերպով:

Նա չհամբերեցի, դարձայ դէպ ի մի կողմ և հառաչեցի ցաւ-մանալով. մէկ խօսքով, ուրախութենից, ուշաթափ եղայ տեսա-նելով ամենաչքնաղ հրապուրիչ դէմք, հրաշալի աչքեր և գարմա-նալի ձեռներ, միայն թէ ոտքը չկարացայ տեսանել:

Մի գուցէ կատակ լինի ասածդ, Յօաժ. հարցրեց Ալեխվը, համոզութիւնը ցոլանալով նորա աչքի մէջ:

Երդվումեմ, քեռի, որ ճշմարիտ է ասածս:

Երեսի գծագրութիւնքը թուխի՞ վերայ է թէ շէկի....բայց աչքերին նայեցայի:

Շէկի վերայ է, քեռի:

Ո՜հ, անկարելի բան, ցնծութեամբ ձայն արձակից Ալեխվը, թողելով ածելին և յետ քարշվելով սեղոի վերայ:

Հաւատացնեմ ձեզ, քեռի, կարծեօք աչքերը կապուտ էին:

Կամին ասել վերջապէս նորա ազգատոհմը, անհամբերու-թեամբ և վառուած հարցասիրութեամբ հարցրեց Ալեխվը:

Նա հետևեցայ նորան, խօսքը յառաջ տարաւ Յօաժը, ան-տես առնելով քեռու ցանկալի դիտելիքը, իմացայ ինչ տանում եղևանել է, յետոյ համբերութեամբ սպասեցի, մինչև Լ֊իւռովը դուրս ելաւ այն տնից, նորան պաշարեցի իսկոյն և սկսայ հարցու-փորձառնել նորանից:

Ո՞նչ ասաց Լ֊իւռովը:

Նա ասաց, որ կոմսուհի է, Օ֊լինափդա Պավլովնա, մեկա-նաւամբ Վառանատովա:

Ամուսնացո՞ր կին է, թէ աղջիկ.

Այրի կին է, քեռի. բայց մի մանուկ, շատ սիրուն այրի կին, որ միայն տարի ու կէս յառաջ զրկուել է իւր ամուսնուց:

Անկարելի, անկարելի բան, լսիր Յօաժ: Դու այդ ամենը քո գլխից հնարել ես և ես չեմ հաւատում քեզ, ասաց Ալեխվը, որ

Թողելով ամեհոսի վերայից, սկսաւ տան մէջ ալէկոծուած սրտով քայլել, բոլորովին մոռանալով մօրուքի սափրելը. ես կարող չեմ հասատալ, մինչև իմ յատուկ աչքով չտեսանեմ, ուստի և դու այն ժամանակ կը ստանաս շամպանակին:

Մի՞ թէ կարելի է ձեզ, քեռի, այդպէս ուխտազանց լինել. դա պարծանք բերելու չէ ձեզ:

Ըսպէս կամենաս, բայց և այս կայ, որ դու դեռ ևս տասն չես ինձ, քանի՛ տարեկան է յիշեալ կոմսուհին:

Վասն և երկու տարեկան, գուցէ և աւելի մանուկ. բայց չեցէ կամիք դուք արդէն նորա տարփածու լինել:

Ի հարկէ. դու կարծումես, թէ առանց պատճառի ես կամիր քեզ մեծարել շամպանակիով:

Ո՛չ, քեռի, ես այդ բանին ամենևին հաւան չեմ, դուք և ձեր կամքը. բայց ես կոմսուհին թողնելու չեմ ձեր կամեցողութեանը:

Լսի՛ր, Ժօռժ, տե՞ս արդեօք, թէ նա այս օր հանդիսում պիտի գտանվի, հարցրեց Ալբերը, բաւական լռելուց յետոյ:

Շ՛շմարիտ, չգիտեմ:

Ի՞նչպէս կարելի էր իմանալ այդ բանը:

Ի՞նչ կը տաք ինձ, եթէ տեղեկանայի այդ բանին:

Ինչ որ կամիս, միայն իմացիր:

Ա՛ճարեցէք իմ պարտքս որ երեկեան օրին պարտական եմ մնացել. մի չնչին բան, այսինքն 150 ման. արծաթ. եթէ հաւան եք այս պայմանին, ես կ՛աշխատեմ իմանալ, արդեօք նա գտանուելու է հանդիսի մէջ, թէ ոչ:

Ո՛հ Ժօռժ, ինչ օրինակ կախարդ ես դու, այնու ամենայնիւ ճար չկայ ընդդէմ քո, թող լինի:

Ուրեմն տուէք արծաթը:

Այն իսկ ժամուս իսկապէս:

Լաւ, քեռի, ես խոստացել եմ այսօր պարտքս վճարել. ի հարկէ դուք ևս լաւ գիտէք, որ մի արդար խոստումն դէպ ի պարտատէրը սուրբ պարտականութիւն է:

Ո՛չ, եղբայր. դու կամիս խաբել ինձ, ես գիտեմ քեզ. եթէ այժմ տամ արծաթը, ապա հարկաւոր կը լինի անուն դ ևս մանալ. երբ որ տեղեկանաս, այնուհետև ստանալու ես մանէթներ, ահա քեզ իմ վերջին խօսքը:

Այդ լաւ է, ուրեմն սպասեցէք ինձ, ես շուտով վերադառնալու եմ։

Յօժը թռաւ, Ալեկը մինչև այնչափ վրդոված և խառնակուած էր նորա խօսքերից, որ քայլելով իւր առանձնարանի մէջ, ամենևին մոռացել էր երեսի սափրելը և սպոնաշաղախ մօրուքը։

Տուէք արծաթը, վերադառնալով, ձայն տուեց մի քանի րոպէից յետոյ Յօժը, որ կարող չէր շունչ առնուլ։

Ա՛ա, նայեմ, իմացայ։

Շ՚նորհեցէք արծաթը, իմ քեռի։

Բայց դու ասա նախ և յառաջ, գալո՞ւ է նա, թէ ոչ։

Դուք չհաւատացիք իմ խօսքիս, և ես չկամիմ նոյնպէս։ Երբ ձեր պայմանպրութեան համեմատ առանամ արծաթը, այնուհետև կը տամ հաստատուն պատասխանը։

Բայց եթէ նա չգայ, ինչո՞ւ պիտի կորչի իմ արծաթը։

Ուրեմն վարվեցէք, ինչպէս հաճոյ է. բայց ես այլապէս ասելու չեմ։

Ալեկը մի քանի րոպէ մտածեց, յետոյ լուռթեամբ մօտեցաւ պրկղենն։

Ո՛ւ ահաքեզ արծաթը, ասաց նա, տալով իւր թռուին մի քանի արժէքաւոր տոմսակներ. ուրեմն պատասխան տուր այժմ, գալո՞ւ է նա, թէ ոչ։

Կոմսուհին գալու է հանդէս։

Ալեկի երեսը փայլեցաւ ուրախութենից, բայց այս միջոցիս ներս մտաւ Վառինքան բողոքովին պատրաստ։

Աստուած իմ. հայրիկ, բացագանչեց նա դրեթէ արտասուագին, դուք դեռ ևս չէք մտածել հագնվիլ, մի՞թէ ամօթ չէ ձեզ։

Ալեկը մօտեցաւ իւր դստերը, կամէր հանդարտեցնել նորան, բայց աղջիկը հօր սապոնած երեսին նայելով, իսկոյն սկսաւ բարբրաձայն ծիծաղել։

Աստուած իմ. ինչ մարդու նմանուէք դուք, հայրիկ, նայեցէք միանգամ հայելու մէջ, աղաղակեց նա մեծաձայն խնդալով։ Ասելով այս խօսքերը, առաւ սեղանի վերայից հայելին և տուեց հօրը, որի վերայ մեծ ուհաճութիւն եկաւ այս դէպքից ևս առաւել այն պատճառով, որ նորա դուստրը այսպիսի անյարմար միջոցում եկել էր ծնողի մօտ։

Վ֊երջապէս Վ֊առինքան դադարելով ծիծաղելուց, դարձաւ դէպ ի Յօռաժը այսպէս.

Ձայս բոլորիս պատճառը դուք էք։ Ես հաւատամ եմ, որ դուք արդէնք եղաք հօրս հագնուելուն, ասաց նա յօնքերը կախելով։

Սիրեցէք, քոյրիկ. ձշմարիտ, ես եմ պարտաւորը, բայց ձեզանից թողութիւն ստանալու համար, այսօր, պարահանդէսի մէջ, մի շատ պատուական երիտասարդի հետ ծանօթացնել ձեզ՝ թող իմ պարտքս լինի, և յոյս ունիմ այս աշխատանքիս փոխարէն ձեզանից շնորհակալութիւն ստանալ։

Օ֊հնուորականն է և գեղեցիկ։

Այո, իմ բարեկամ Ալեքսանդր Ա֊իտովի հետ, որ երեկից միայն եկած է, բայց առ այժմ բաւական ծնաք, երթամ հանդէսի հագուստներս հագնելու։

Ջրերի եղելքում ամառնային զբօսանքը օրէ օր զուարթանում էր։ Յողովի սրահի մէջ տրած տօթից նեղուելով կարմրած կանայքը անդադար դուրս էին ելանում զովանալու, ոմանք մաքուր օդ վայելելու, և ապա կրկին շտապում էին դէպ ի ընդհանուր ժողովարանը, ուստի հնչում էին պարահանդիսի նուագարանների ուրախ ձայները. ոմանք ևս—միմեանց հետ խօսակցելու, պատմելու միմեանց քաղաքում պատահած որպիսի և իցէ տարփածութիւնք կամ անցք, յայտնելու մինը միւսին իւրեանց սիրականքը, ևս առաւել ստէպ երևակայութեամբ ստացած յաղթութիւնքը, կամ իւրեանց առած գովասանութիւնքը սորա և նորա բերանից յառաջ բերելու։ Ձայր մարդիկ ևս զբօսնելով պարտիզի կանաչավայրի վերայ, կրակոտ և բարձրաձայն խօսակցութիւններով չկլուսացած, սրբուսէին թաշկինակով երեսներից դղրված քրտինքի խոշոր կաթիլները։

Բայց Վ֊առինքան ընդհանուր սրահի մէջ համարձակ քայլումէր, նորա ոգևորված դէմքը փայլումէր հաճութեամբ, մեծագոյն ուրախ աչքերը վառվռումէին երկու պայծառ աստղերի նման. իսկ Ալեխը ալէկոծուած ճեմումէր հրապարակական սենեկումը և միառանձին տանջող անհամբերութեամբ նայումէր դէպ ի դուռը, որից ներս էին մտանում եկաւորները։

Քայրիկ, ուր է Յօռաժը, դուք չտեսաք նորան, հարցրեց Վ֊առինքան մեծենալով սաստիկ շնչահատուած ու կարմրած։

Ձգիտեմ, իմ հոգի, ես ևս որոնեցի նորան, բայց կարող չեղայ գտանել. տեսայ միայն նորա գալը, պտուտուեցաւ իմ առաջև մի քանի անգամ, բայց յետոյ նորա հետքը անգամ կորուսի. շատ լաւ կը լինէր, որ ինքդ որոնեիր նորան, քո աչքերը մանուկ և սրատես են:

Ոչ, հայրիկ, լաւ է որ դուք երթաք և բերէք նորան:

Հայրը ևս կամենումէր յառաջ տանել խօսքը, բայց մանգաւազով դէպ ի յետ, դիպմամբ տեսաւ այն բարձրահասակ երիտասարդների բազմութիւնը, որոց միջում գտանվումէր և իւր Թոռը, Ալեհեր, և ձայն տուեց նորան.

Վաղինքան որոնումէ քեզ. այլև դու, կարծեօք, խաբեցիր ինձ. կոմսուհին չկայ:

Մի՛ամի՛ս եղիք, քեռի, նա պիտի գայ, ես այդ խոստանումեմ ձեզ անկեղծ. ես այդ մասին կրկին կարող եմ գրաւ դնել և անտարակոյս տանելու եմ դորան. իմ այս տեղ գալուց յառաջ գնացի ես Լիւռվի տունը, բայց նա արդէն գնացել էր կոմսուհու մօտ. ասել է թէ նոքա միատեղ այժմ պիտի գան:

Լսիր, Յօռժ, եթէ դու այսօր խաբես ինձ, երդվումեմ, որ այսուհետև ամենևին քո պարտքերը չեմ վճարելու: Ինքդ ճարը գտիր այն ժամանակ, որպէս կամենաս:

Ո՞նչ կամի իմ սիրուն քոյրիկս, ասաց Յօռժը, իւր սովորական քաղցրութեամբ, դառնալով դէպ ի Վաղինքան, որ մոտեցել էր իւրեանց. դուք կարծեօք կամեցել էք ինձ տեսանել:

Մի խօսք ունէի ասելու, երթանք, Յօռժ, ես պիտի ասեմ ձեզ:

Գիտեմ, ես ինքս գիտեմ, անհամբերութեամբ ասաց նա, առ ի սրտէ ցանկանալով աղատել իւր անձը ստիպող աղջկայ թևերից:

Դուք խաբեցիք ինձ, ասաց նա մեղմ ձայնով:

Մի՛ամի՛ս եղիք, իմ հրեշտակս, նա կը գայ. ասումեմ ձեզ որ Լիւռվը կը գայ: Տես ահա վերջապէս և նա մեր աչքի առաջևն է, կանչեց նա ուրախութեամբ, ազատուելով քուերից, թռաւ պար գալու:

Նոյն արդարև այն րոպէին ներս մտաւ մի մանուկ զօրապետ աջակից ունենալով իւրեան մի բարձրահասակ, սպիտակ երեսով կին. այս կինը հպարտութեամբ գլուխը դէպ ի վեր էր բռնած, իւր սրտի ջ խոստովանելով լիապէս իւր գեղեցկութիւնը:

Գովասանքների շշունջը արագութեամբ վազեց այն տեղ եղների մէջ և նոյն րոպէին բոլորեցուն ուշադրութիւնը դարձել

էր նորա վերայ. կէս ժամի մէջ ամենաչքնաղ կոմսուհին դարձաւ խօսակցութեան և զարմացման նիւթ, նա միաբան հաւանութեամբ ընտրուած էր թագուհի այն ժողովին: Սիրուն վարքեան բոլոր ովքին մուտացվեցաւ, նորա բոլոր պաշտող ու պատուողներից միևնոյն միայն ձնաց նորան հաւատարիմ: այլ միւսները դարձան կոմսուհու կուսակից:

Ո՞նչպէս է քո տեսածը, քեռի, մտեցաւ Յօաժը և ուրախութեամբ հարցրեց նորանից, որ ափիբերան զարմացքով նայում դէպ ի կոմսուհին, գլեթէ հալվելով սրտի ուրախութենից և աչքը բևեռած մատաղահաս կնոջ վերայ:

Դադալէ բան, բացագանչեց նա, չունելով կարողութիւն աչքերը նորանից դարձուցանելու: Վախը, խօսքը յաւաջ տարաւ նա անսովոր զուարթութեամբ կենդանացած, պիտոյ է մի կերպով ծանօթանալ նորա հետ, կատարիր այս գործը որպիսի և իցէ ձանապարհով և այնուհետև խնդրիր ինձանից ինչ որ կամենաս:

Ոհ Աստուած իմ, կոմսուհին ծանօթ է ինձ, ասաց վարանքան, մտենալով նոցա:

Վիտեօ, անկարելի բան է. ինչ կերպով ծանօթ ես դու նորան:

Նա շատ անգամ եկած է մեր վարժատունը, իւր հանգուցեալ ամուսնակցի թոռի պատճառով, որու անունն էր Վալթի Վիւբինոյ, և ես նորա հետ շատ բարեկամ էի, մեք երկոքին նոքան պատվում էինք:

Շատ լաւ, շատ լաւ, բացագանչեց Ալբեվը, դադարեցնելով աղջիկը....ուրեմն գնա նորա մօտ, յանդիմանն եղբր նորան, յետոյ ինձ էս կը ծանօթացնես նորա հետ, ասաց ուրախութեամբ տրոլելով իւր ձեռքը:

Այդ հայրիկ, ինչպէս մտենամ ես նորան, անտեղի է բոլորովին, նա վաղուց ինձ տեսած չէ, կարելի է որ այժմ չճանաչէ ինձ անգամ:

Այդ ոչինչ ասել է, մտեցիր, խօսակից եղիր, այնուհետև անպատճառ ճանաչելու է քեզ:

Այդ հայրիկ, ոչ, ընդդիմութեամբ ասաց նա, դնելով ձեռքը իւրեան մտեցած երիտասարդի ուսի վերայ, և նորա հետ միասին ընթանալով սկսան պարել նուագարանի խաղարկութեան ոտերով:

Անդէսը մտենում էր վախճանին, բայց Ալբեվը դեռ էս չծանօթացած լինելով կոմսուհու հետ, ինքը իւր մէջ սկսաւ

յուսահատութենից։ Աւօլինաքին նորանից բաւլաւոր էր, նա արդէն մի քանի անգամ ալշաւել էր պարահանդիսում, մանաւանդ կնոջ գեղեցիկ մէջքը գլուած, Ալեհվի մօտից, որ մի լուռ նախանձաւոր լութեամբ հետևում էր նոցա քամակից։

Ա՛ռինքան նմանապէս կորուսել էր վստահութիւնը և դորա պատճառը այն էր, որ ոչ թէ միայն Լիւռվի հետ պար չէր եկել, այլ գրեթէ նա ոչ միանգամ չէր մօտեցել նորան, մինչև անգամ մօտից անցանելով վերան էս չնայեցաւ։

Ա՛ռինան ամեն մի րոպէից յետոյ նայում էր այն կողմը, ուր կանգած էր նա. սիրուն կերպով կոմսուհու աթոռի վերայ կռնաչոքած, համարձակ և ուրախ խօսում էր նորա հետ Լիւռվը, ոչ մի րոպէ չէր հեռանում նորանից և զբաղուած էր միայն նորանով։ Ծանր էր Ա՛ռինքային այս տեսարանը, գրեթէ արիւնով լափ խածել իւր փառիսուշ շուրթը, ինքը իւրեան չդիտենալով. վերջապէս չորս կողմը աչք ձգելով, կամաց մօտեցաւ հօրը և խնդրեց տուն վերադառնալ, պատճառ բերելով իբրու թէ գլուխը ցաւում էր։

Կոմսուհու սպիտակ դէմքը անդադար փոդփոդումէր սրահի չորս անկիւններում, նա պար էր գալիս համարձակ շարժմամբ, որ տալիս էր նորան մի նոր և առաւել գեղեցկութիւն. սրահի ամեն մի խորշում խօսում էին միայն գեղեցիկ այրի տիկնոջ վերայ։

Ընդհանուր ամենայնիւ Ալեհվը չէր դադարում հաճելցնել իւր դուստրը և գրեթէ արտասուքով խնդրում էր նորանից մօտենալ կոմսուհուն. վերջապէս աղջկայ համբերութիւնը հատաւ։

Ո՛նչ է դորա խորհուրդը, հայրիկ, որ ստիպում էք ինձ մօտենալ կոմսուհուն, հարցրեց նա տհաճութեամբ։

Ընդհ, իմ հոգի. ինձ հարկաւոր է այդ, շատ ու շատ հարկաւոր։

Ընացիք նախ, ինչ պատճառով, այնուհետև կը մտածեմ ես։

Ա՛ռինքա, Ստուածոյ սիրուն, ասում եմ քեզ, որ ինձ շատ հարկաւոր է. ես ունիմ նորա հետ գործ, և անչափ կարևոր։

Ընացիք, այդ ինչպէս գործ է, հաստատութեամբ կրկնեց Ա՛ռինկան։

Շատ բարի, բարեկամ իմ, բայց ոչ այժմ, այլ երբ տուն երթանք. միայն թէ ինձ ծանօթացրու նորա հետ, այնուհետև, ինչ որ կամիս, ամենը կատարելու եմ։

Ես դէպ ի Պետերբուրգ չենք վերադառնալու շոգենաւով։

Ո՛չ, իմ հոգիս, եթէ չկամենաս։

Ուրեմն, ի՞նչպէս երթալու ենք մեք — ցամաքո՞վ։

Ինչպէս հաճոյ է քեզ. եթէ կամիս, ձիով, կամ թէ կը թռչենք օթապարիկ մեքենայով, եթէ այդպէս հաւանիս։

Ա՛յս միջոցիս նոցա մօտից կոմսուհին Լ՛իռովի հետ թեւ թեւի առած անցան, և կոմսուհին խոնարհելով դէպ ի Լ՛իռովը մի խօսք ասաց ցած ձայնով։

Վ՛առինքան ամօթխածութեամբ մի քանի քայլ արեց դէպ ի յառաջ։ Կոմսուհին մեքենաբար պարցուց դէմքը։

Նարի կոմսուհի, ասաց աղջիկը ցած ձայնով և սաստիկ կարմրելով։

Կոմսուհին դադարեցաւ և բաւական հետաքրքրութեամբ նայուածքը նորա վերայ։

Թողութի՛ւն արէք, տիկնո՛ւհի, բայց, ձշմարիտ.... ասաց նա ժպտելով, և իւր պայծառ գլուխը փոքր ինչ ցած թողեց։

Վ՛առինքան սաստիկ ամաչեց, բայց յաղթելով իւր սրտի խռովութեանը, դողդոջուն ձայնով յառաջ տարաւ խօսքը։

Յայտնի է որ դուք ամենևին մոռացել էք ինձ և այդ պատճառով չէք ճանաչել ինձ, բայց ձեզ շատ լաւ գիտեմ ես. դուք միշտ մեր վարժատունը գալիս էիք, իմ բարեկամ Վ՛իռալինոյ Վ՛առինքայի տեսութիւն առնելու։

Դո՛ւ Ելենվի դո՛ւստրն ես. բացագանչեց կոմսուհին, քարշելով աղջկայ ձեռքը դէպ ի ինքը, և ընտանեաբար նորան. ինչպէս չէ, ես շատ լաւ ճանաչում եմ ձեզ, Վ՛առինան մինչև ցայժմ սակայն յիշում եմ ձեզ, բայց դուք, իմ սիրունս, ինչպէս գեղեցկացել էք։

Կոմսուհին երկար խօսեց Վ՛առինքայի հետ, ծիծաղելով, կատակելով և առհասարակ շատ փայփայելով նորան։ Նմանալով, որ նա եկած է հանդէս հօր և քեռու հետ, կոմսուհին ցանկացաւ բարեկամանալ և նոցա հետ, և անչափ ուրախացել էր (եթէ հաւատանք նորա խօսքին) այսպիսի անակնկալ, բայց շատ ախորժելի դիպուածի վերայ։ Վ՛երջապէս նոքա ամենքը միասին սկսան քայլել սրահի մէջ։ Կարող էք մտքով պատկերացնել Ելենվի խնդութիւնը այս միջոցիս։ Կոմսուհին հանձարեղ էր և նորա խօսակցութիւնը հոգեկից, թափանցուկ և ծիծաղաշարժ։ Ամենեքեան ուրախ էին և գոհ, Վ՛առինքան միայն շատ ախորժ էր, Լ՛իռովը քայլումէր նորա հետ միասին առանց ուշադրութեան, առանց որ և իցէ հարցուա-

ծով խօսակցութեան պատճառ ըլլնելու. նա և ոչ իսկ նայուածքը նորա վերայ, միշտ զբաղուած լինելով կամ կոմսուհու կամ Յօսէֆի հետ:

Կոմսուհին եղաւ առաջինը որ նկատեց մանուկ օրիորդի լռութիւնը և մտատանջութիւնը:

Ի՞նչ է եղել ձեզ, հոգիս, ինչու՞ համար այդպէս մտայած էք, փայփայանքով հարցրեց նա, շշնջելով մի քանի մեղմ խօսքեր նորա սպիտակ և փափուկ պարանոցի վերայ:

Վաւրինքան ժպտեցաւ:

Ա՛ի թէ, պարոն Ալբեռվ, ձեր դուստրը միշտ այսպէս մտայած է:

Ա՛յ, կոմսուհի, նա այնպէս կատակասէր է, որ Աստուած պահէ, պատասխանեց Ալբեռվը, զանազան ակնարկութիւնք առնելով իւր աղջկան, որ ուրախամտվի:

Վաւրինքան ծածուկ տհաճութեամբ երեսը դարձրեց:

Ճաւական է, խօսքը յառաջ տարաւ կոմսուհին, քաղցրութեամբ գառնալով դէպ ի օրիորդը. երբ որ ամենևքեան ուրախ են լինում, պիտոյ է ուրախանալ և ձեզ. ձեր տարիներում պէտք է խնդալ, խաղալ և կեանք վայելել, դեռ շատ ու շատ կանուխ է մտածել և տխուր լինել:

Սպասեցէք, յաւելացրեց նա շտապով, ես ձեզ յանձնեմ մի ամենալաւ երիտասարդի, յոյս ունիմ, որ նա փարատէ ձեր մտայածութիւնքը:

Շնորհակալ եմ ձեզմանից, կոմսուհի, ասաց Վաւրինքան, ինքն ևս զգալով, որ այս խօսքերից յանկարծ սիրտը զարկ տուացաւ. ես շատ վաստակած եմ և կամէի տուն վերադառնալ:

Պարոն Ալեռվ, խօսքը ձգեց կոմսուհին չլսելով Վաւրինքային, և դարձաւ դէպ ի մանուկ գինուորականը. այսուհետև ես պար գալու չեմ. պատճառ, ձանձրացած եմ, և այս հետևեալ պարին ձեզ ընկերի Ալբեռվը. լսեցիք:....

Մանուկ երիտասարդը հազիւ թէ մի փոքր կարմրեցաւ, գլուխ տուեց և դէպ ի Վաւրինքան երկայնելով ձեռքը; ժպտեցաւ և ասաց.

Ցթէ Տիրուհին կամի շնորհ առնել և լինել ինձ պարընկեր, ապա ես համարելու էի իմ անձը շատ բաղդաւոր, ասաց երիտասարդը:

Վ՚առինքան ևս առաւել կարմրեցաւ, նորա աչքերը վառվռեցին ուրախութենից և սիրտը սկսաւ սաստիկ բաղխել (զարկել)։

Նոքա սկսան քայլել տան մէջ, բայց Ալեկը տեսանելով, որ միայնակ մնաց կոմսուհու հետ, ամենայն ճարտարութեամբ, ինչքան որ մնացել էր երիտասարդութեան օրերից, առաջարկեց նորան իւր ձեռքը և մի խօսքով ուրախութենից չէր զգում թէ ոտքի վրայ է, երբ որ կոմսուհին ժպտելով, ընդունեց նորա ձեռքերը։

Վ՚առինքայի մի լուռ ուրախութեամբ վառուած երեսը դարձեալ թղլեցաւ տրտմութեամբ. նա քայլումէր իւր երիտասարդի հետ ամենևին լուռ. պատճառ, խօսակցութիւնը չէր յառաջադէմ, Վ՚իտովը խօսումէր միշտ հատուկտոր բառեր, և իւր հետ կից քայլող օրիորդի վերայ ամենևին ուշադրութիւն չէր դարձուցանում, միշտ այս և այն կողմ նայելով, մի քանի անգամ ևս, թէև ծածուկ, յօրանջեց, պարի ժամանակ ևս սակաւ էր նորա քաղաքավարութիւնը դէպ ի նա. անդադար սխալվումէր, շփոթվումէր Վ՚իտովը, այլև մի քանի անգամ Վ՚առինկայի ոտքը կոխեց, զգեստը գրեթէ պատառելով, և մոռացաւ ներողութիւն խընդրել։ Վ՚առինկան, փոքր մնաց, որ լաց լինի սրտի տհաճութենից. դժուարութեամբ զսպեց նա իւր արտասուքը։ Ամենևին նոր զգացողութեամբ և անսովոր զարկողութեամբ սրտի լսումէր մանուկ երիտասարդի ձայնը, շատ փոքր նայելով նորա փառաւոր կերպարանքին կամ մտածող կապոյտ աչքերին որոնք երբեմն տրտում նայումէին, և երբեմն քաղցր շողոմելով կամ թափանցելով սրտի մէջ։

(Շարունակութիւնը յետոյ.)

Ց ա ր ս ի ն ե ն Մ ա ղ ա խ ի ա ն ց։

(Կարասուբազարից.)

ԳԱՐԻԲԱԼԴԻՈՒ ԿԵՍԱՐԸ.

(Շարունակութիւն.)

ԺԶ.

Հռոմի պաշտպանութիւնը կացուցանում էր մինը Գարիբալդիու կեանքի առաւել արժանայիշատակ իրողութիւններից: Այս տեղ երևեցաւ, թէ մինչև ո՛ր աստիճան կարող էր հասանել անձնուրացութիւնը այս մարդու որ ծառայում էր հասարակաց գործին, առանց որ և իցէ շահասիրական պատճառների:

Այժմ թէ ինչպես էր Գարիբալդիու կերպարանքը և ինչ մարդկից էր բաղկանում նորա զօրախումբը, ահա թէ ինչ են պատմում այդ մասին 1849 թուականին ականատես անձինք:

«Գարիբալդին է միջահասակ, կամարակապ լանջքով, լայնաթիկն տղամարդ, որպես թէ կռանած էր երկաթից. նա ունի միանգամայն մի անսովոր աջողակութիւն և մի գերօրինակ զօրեղութիւն: Նորա գլուխը ցուցանում է կանոնաւոր ձևակերպութիւն, յօնքը լայն են, դէմքի գծագրութիւնքը սուր, իսկ երկար մազերը և մօրուքը ոսկեգոյն: Նորա մտախոհ և թափանցիկ աչքերի յայտնողականութիւնը և նորա շարժուածքի ազնուութիւնը իսկոյն ազդումեն դէպ ի նա յարգութիւն և վստահութիւն միանգամայն: Կամենում էք իմանալ թէ ո՛րպիսի մարդիկ էին նորա ընկերակիցքը, ապա պատկերացուցէք ձեզ մի բազմատեսակ ամբոխ, որի մէջ գտանվում են տաներկու և տասն ու չորս տարիական մանուկներ և հին զինուորք որ Գարիբալդիու նախկին փառքը ձգել էր դէպ ի նորա բանակը. այս տեղ կան և այնպիսի մարդիկ որք հոգիացած էին միայն

ազնիւ պատուասիրութեամբ: Ինչպէտև Գարիբալդիոս զօրախմբի մէջ գտանվուէն և օրինքի հալածանքէն վախած մարդիկ, բայց նոցա վատ կիրքը այնպէս է սանձահարուած զօրավարի անխնայ խստութեամբ, որ նոցա մէջ միւսէն միայն քաջութիւն և վստահութիւն: Օ՞օրապետը և նորա ընկերակիցքը հնձած են ամերիկեան թամբերով պատրաստած ձիերի վերայ: Պրուէն կարմիր շապիկներ և ամենայն ձևի գդակներ: Ո՛չ ոք չունի առաւելութեան նշաններ և ո՛չ զինուորական զարդեր: Գուք կ՛տեսանէք թէ ինչպէս նոքա իւրեանց ուզեկից ունելով ընտիր ասպատակաւորք, որ ըստ մեծի մասին եկած էին Ամերիկայից, արշաւուէին դէպ ի զանազան կողմեր, ապա ցիր ու ցան էին լինում արշաւանքի մէջ, իսկ յետոյ հաւաքվուէին. նոքա միշտ դործունեայ են և անվաստակելի: Ինչևանի մէջ, ինչպէս պաշտօնակալքը նմանապէս զօրապետը ինքեանք հոգաբարձու են իւրեանց ձիերին, ինքեանք արձակուէն նոցա թամբերը, որք այնպէս են շինած, որ նոցանից կարելի է իսկոյն վրան պատրաստել: Նրբը որ պիտոյ էր կիրակրի պաշար ձեռք բերել, երեք կամ չորս յօժարակամ զինուորք հնձնուէն անթամբ ձիերի վերայ, շրջելու զիւղերի մէջ. այս միջոցիս հանգստանուէ Գարիբալդին իւր վրանի մէջ, եթէ վտանգ չկայ, իսկ եթէ թշնամին գտանվուէ մօտակայքում, ապա ոչ մի րոպէ վայր չդալով ձիուց, հրամաններ է տալիս և այցելութիւն է առնում զօրքի առաջապահ գնդին: Նրբեմն գիւղացու պէս հագնուած և կեանքը վտանգի մէջ, դիմում լրտեսելու, բայց աւելի շատ անգամ նստած մի բարձրաւանդակում, ամբողջ ժամեր հետացուցով քննուէ շրջակայքը: Բայց երբ պատերազմական փողը տալիս է կռուի նշան, այն ժամանակ իւրաքանչիւր ոք որսում իւր ձին: Օ՞օրքի յառաջ խաղալու կարգը միշտ որոշվուէ երեկոյին որ պիտի լուսանալ դէպ ի վաղիւ. բայց զօրախումբը երթուէ իւր առաջնորդի հետևից ինքն ևս չիմանալով, թէ մի քանի ժամից յետոյ ո՛ր տեղ դուրս կ՛գայ: Ընչսպիսի գուշեկ չափից դուրս անարուեստ պարզութեան մէջ, Գարիբալդին աւելի նմանուէ մի հնդկական ցեղի մեծաւորի, քան թէ մի եւրոպական զօրապետի: Բայց վտանգի րոպէում և կռուի ջերմութեան մէջ, նորա քաջութիւնը և հոգու արիութիւնը զարմանալի է. իսկ արագաշարժութեամբ լրացնուէ նա պակասութիւնը այն յատկութիւնների որ պիտի նա ունենար իբրև զօրապետ:»

Ա՝ երջին ծանօթութիւնքս անտարակոյս իրաւացուցել է Գարիբալդին Հռոմի պաշտպանելու միջոցին։

Յունիսի 2ին շաբաթ օրը երկոյին, Ուդինօ անուն զօրապետը ուղարկեց Հռոմէական Հասարակապետութեան կառավարիչներին նամակ, որի մէջ յայտնում էր, թէ Նէապոլը դուրս է եկել իւր իշխանութեան սահմանից, թէ այն պատուէրքը, որ նա ստացել է Ֆրանսիայից, բոլորովին հակառակ են այն զինադադարութեանը, որ կապուել է Ֆրանսիացոց և Հռոմայեցոց մէջ, և թէ այս պատճառով իրաւացի էր համարում պատերազմ բանալ Հռոմի ընդդէմ նախ քան վերջանալու էր զինադադարութեան միջոցը։

Ֆրանսիական զօրապետի նամակը վերջանում էր այսպիսի խօսքով. «Մինչև հնար տալու Թողուլ Հռոմը իմ երկրացիներից նոցա, որք ցանկանում դորան, և միտ դնելով Ֆրանսիական դեսպանի առնադարձի խնդրին, ես յետ կ'ձգեմ արշաւանքը քաղաքի վերայ մինչև երկու շաբաթի առաւօտ։»

Բայց Ուդինօն չսպասեց մինչև պայմանեալ ժամանակը, այլ յունիսի 3ին, կիրակի օրը, առաւօտու երկք ժամին, Հռոմայեցոց պահապան գունդերը, որ հանդարտ քնած էին Պամֆիլի և Կորսինի ամարանոցների մէջ, յանկարծ շրջապատվեցան Ֆրանսիական զօրախմբերից և դերի տարվեցան։

Ուդինօն այս իւր արշաւանքը իրաւացուցանում բառերի խաղարկութեամբ։ Ասա մեկնում իւր դործը այսպէս, թէ խոստացել է չյարձակուիլ քաղաքի վերայ մինչև երկու շաբաթի օրը, բայց Հռոմի քաղաքապետի մասին ոչինչ ասած չէ, ուրեմն, հզօրագոյնում նա, Հռոմայեցիք ինքեանք մեղաւոր են, որ անհոգ են դտանուել։ Ուդինօն տիրապետելով այսպիսի, ստրատեղիկան [1]) մտքով կարևոր տեղերի, որպիսիք էին Պամֆիլի և Կորսինի, սկսաւ կրակ թափել ամրոցների վերայ։ Ասյս միջոցիս ինչպէս և Ֆրանսիացոց առաջին յարձակման միջոցին ապրիլի 30ին, Հռոմայեցոց զանգակները որոտացին, իսկ թմբուկները սկսան ձայնել դէպ ի զէնք ու պատերազմ։

---

[1]) Ածանցուած է յունական բառիցս ստրատեղիկէ, որ կամ ասել ճարտարութիւն պատերազմական, վարողութիւն պատերազմի։

Ժողովուրդը դուրս պրծաւ տներից և լցուց մարտկոցները. իսկ Գարիբալդին իւր յօժարակամ զինուորներով վազեց դէպ ի քաղաքի դարպասը: Խորքովքեաւ ահարկու պատերազմ: Ընդ տեղը, որ կամէին խլել միմեանցից, երեք անգամ ձեռքից ձեռք փոխ- վեցաւ: Ֆրանսիացոց մօտենալուն նորանոր օգնական զօրք, իսկ Հռոմայեցիք թուլանալուն չստանալով ոչ մի օգնութիւն: Այլ և այնպէս Հռոմայեցիք տան և վեց ժամ ամբողջ պատերազմեցին առանց հանգստանալու: Գարիբալդին երեւումէր ամենայն տեղ, ուսերի և գնդակների կարկտի տակ և Ֆրանսիացոց թանձր խումբերի նիզակների առաջև: Ընդ կամակոր պատերազմողու- թեամբ նշանաւոր կացուց իւր անձը 8 երրորդ համարի մարտկոցը, որի վերայ հրամանատար էր ինքն Գարիբալդին: Հռոմայեցիք չորս անգամ յետ առան այդ տեղը Ֆրանսիացոց ձեռքից նիզակ- ների զօրութեամբ: Ուղինօն Հռոմայեցոց քաջութեան փորձը առաջ, այնու ամենայնիւ կարողացաւ ճնշել նորանց իւր զօրքի բազմութեամբ: Նմին հաւատանք այս ժամանակի քանի մի պատ- մաբաններին, յունիսի 3 ին Գարիբալդիու 1,200 հոգի անվարժ զինուորներ այս կուռւի բուպէին գործ կատարեցին ընդդէմ 40,000 Ֆրանսիական ընտիր զօրքի:

Գարիբալդին տեսանելով, որ հարկաւոր էր շատ ու շատ խնայել Հռոմի սակաւաթիւ և այն օրէ օր անօսրացած պաշտպա- նողների կեանքը, բաւականացաւ մի քան անգամ դուրս վազելով և նոյն միջոցին արգելք եղաւ պաշարողների գործին, տեղական ռմբարձակութեամբ քաղաքի պարսպից, որ մի քանի օր սաստիկ ջնասումէր Ֆրանսիացոց, մինչև նոցա թնդանօթաձիգ զօրքը կա- րող էր պատասխանել Հռոմայեցոց:

Գարիբալդիու դուրս վազողութիւնքը, թէ և շատ մեծ էր նորա համարձակութիւնը և նորա յօժարակամ հետևողների ա- նձնուիրողութիւնը, ըստ մեծի մասին անպտուղ դառնում էր Ֆրան- սիացոց արհնութեան պատճառով: Գարիբալդիուն չյաջողեցաւ նմանապէս քայքայել կամուրջը Տիբեր գետի վերայ որին թշնամին տիրել էր, և որի ընդդէմ ուղղել էր Գարիբալդին հրդեհիչ նիւ- թերով լցուցած նաւակ: Գարիբալդին ունելով իւր իշխանու- թեան տակ մի քանի քաղաքային ճարտարապետներ և մի զօրա- խումբ անհմուտ գործաւորներ, այնու ամենայնիւ մտածումէր ական հատանել Ֆրանսիացոց թնդանօթատեղիքը, բայց այս ևս

չյաջողեցաւ, որովհետև Ֆրանսիացիք տեղեկացան այդ գործին և ջրով լցուցին փորած ստորերկրեայ գնացքը։ Մինչ այս, մինչ այն, պաշարողների աշխատութիւնքը յառաջադէմ էին մնտենալով Հռոմին և իւրաքանչիւր օր նորանոր թնդանօթներ կլսակ էին Թափուած քաղաքի վերայ։ Ընդհակառակն Հռոմայեցիք կարծում էին թէ գործը կ'կարգադրուի Ֆրանսիայի հետ բանագնացութեամբ. այս պատճառով իւրաքանչիւր օրի վերայ որ կարող էին պինանի կացուցանել, նայում էին նոքա իբրև յաղթութեան վերայ։

Հայց շուտով Ֆրանսիայից դեսպան եկաւ պօղոսպետ Ուդինօի բանակը և յայտնեց, թէ Ֆրանսիական հասարակապետութեան կառավարողքը ունայն են համարում այն զինադադարութիւնը, որ նորա անուամբ հաստատել են Հռոմի հասարակապետութեան կառավարիչների հետ, և թէ Ֆրանսիան պահանջում է, որ նորոգուի Հռոմի մէջ հիններորդ Պիոս պապի աշխարհական իշխանութիւնը։ Պօղոսպետ Ուդինօն այս յայտարարութեան վերայ յաւելացրեց իւր կողմից և սպառնալիք, թէ աւերակների վրատակ կդարձուցանէ Պապին անհնազանդ Հռոմը, եթէ սա կամէր այլ ևս կամակորվիլ իւր ընդդիմութեան մէջ։

Ընթաղութեան չափը լցուցանելու համար, Հռոմի մէջ կասկածանք առան և մի դաւաճանութենից։ Ահա թէ ինչպէս եղաւ այս։

Յունիսի 2-ին գիշերը մի հռոմէական աստիճանաւոր հանդարտ շրջումէր քաղաքի մէջ գիշերապահ զինուորներով և ահա Սան Պանկրացիօ դարպասի մօտ, ուր գտանվումէին Հռոմայեցոց պահապան զինուորները, դերի տարվեցաւ Ֆրանսիացիներից։ Ոչոք չէր կարողանում հասկանալ թէ ինչպէս էին նորա մտել այս տեղ Ֆրանսիացիք. իսկ երկիւղով պաշարված պահապանքը հաւատացնում էին թէ թշնամիքը դուրս էին թռել գետնի միջից և իւրեանց անկարծելի յայտնութեամբ այնպէս ահացուցել էին նորանց, որ նորա ուշաթափ եղած փախան։ Միւսերը ասում էին, թէ դաւաճանների ընկերութիւնը այս տեղ բացել էր մի ստորերկրեայ գնացքի դուռն, և թէ այս տեղից դուրս էին եկած Ֆրանսիացիք և ցրուել էին հռոմէական պահապանքը։ Նոյն գիշերին առուած էր մի ամրոց, թէպէտ ոչ առանց կամակոր ընդդիմութեան։ Գարիբալդին, որ լսելով այս վտանգի լուրը, իսկոյն շտա-

պել էր այս տեղ, իւր սովորութեան պէս բոլոր միջոցը ծուռմէր պատերազմողների առաջև։

Ահա անյաջողութիւնները սաստիկ խառնակութիւն յառաջացուցին Հռոմի մէջ, և հասարակապետական զօրքի մեծաւորների կարծիքը բաժան բաժան եղան։ Մոսելլին առաջարկումէր անյապաղ յանձն առնուլ մի ընդհանուր յարձակումն, նիզակների ուժով յետ խլելու Գրանսիացոց ձեռքից այն տեղերը, որոնց նոքա տիրել էին։ Ասյց Գարիբալդին, որի քաջութեան վերայ ոչոք կարող չէ երկբայել, սաստիկ հակառակ կացաւ այդ առաջարկութեանը։ Նա գիտելով որ գաւառականութեան լուրը սաստիկ դղրդել էր հասարակապետութեան ամենամուր պաշտպանների սիրտը, գուշակումէր, որ ընդհանուր արշաւանքի միջոցին, մի շատ չնչին պատճառից, մի վախկոտ աղաղակից, մի շատ փոքր տարերութենից կարող է ծագել սաստիկ խառնակութիւն և անկարգութիւն, որ Գրանսիացիք կարող էին նպաստ առնուլ իւրեանց մեծ շահաւետութեամբ։

Գարիբալդիու անհամաձայնութիւնը հռոմէական զօրքի գեղապետի հրամանատարի հետ, ստիպեց նորան թողուլ իւր պահպան գունդը Սան Պանկրացիո դարպասի մօտ և վերադառնալ դէպ ի Հռոմ։ Երբ այս համբաւը տարածվեցաւ քաղաքի մէջ, ժողովուրդը իսկոյն վեր կացաւ սպառնալից խռովութեամբ և պահանջումէր, որ Գարիբալդին վերստին առնուլ իւր պաշտօնը. իսկ Մանարա անուն Յատալացին, որ Նումթարդեան զօրախմբի քաջ զօրավարներից միևն էր, շտապեց Գարիբալդիու մօտ, աղաչելով նորան տեղի տալ հասարակաց կամեցողութեանը։ Գարիբալդին, տեսանելով Հռոմայեցոց վստահութիւնը դէպ ի ինքը, չընդդիմացաւ, և ժողովուրդը ցնծութեան ձայներով ուղեկից եղաւ նորան մինչև այն տեղը, ուր նա այնքան փառաւորել է իւր անձը իւր քաջաղնական գործերով։

Ահա միջոցին սկսաւ Հռոմի սաստիկ ռմբակոծութիւնը։ Մի գիշերի մէջ 150 ռումբ արձակվեցան քաղաքի վերայ. մանաւանդ տուները շատ կրեցին ահագին վնասներ։ Հռոմայեցիք — փառք և պատիւ նոցա — վեհանձնութեամբ մոռացան թէ իւրեանց անձնական ապահովութիւնը և թէ իւրեանց սեփականութիւնը։ Քաղաքի մէջ չէին լսվում ոչ դանդատներ, ոչ տրտնջանքի աղաղակ, ոչ առաջարկութիւն քաղաքը անձնատուր առնելու։ Հռոմայեցիք

երկիւղի մէջ էին միայն, մի գուցէ Ֆրանսիացոց ռումբերը աւերեն հռոմէական ճարտարապետութեան մեծագին յիշատակարանները:

Ֆրանսիացիք գործելով մի քանի այլ նոր ճեղքեր Հռոմի պարսպի մէջ, հաստատեցին մի քանդուածում 12 թնդանօթք և ամբաձիգ լինելով մեխելը դարձուցին Սաւորելլի ամարանոցը, ուր մինչև այժմ ոտք էր բռնել Գարիբալդին. սորան սոխակելով յետ քաշուիլ դէպ ի Սպադա ամարանոցը, փոյթ էին փութում նոքա ներս մտանելու քաղաքի մէջ, բայց Գարիբալդին մի տևողական կռուից յետոյ հալածեց նորանց:

Ֆրանսիացիք, յունիսի 30 ին, առաւօտուն, նպաստ առնելով իւրեանց համար պիշերային մթութիւնը և հռոմէական առաջապահ դնդի տկարութիւնը, յանձն առան մի վճռական արշաւանք: Նոքա բաժանվելով երկք խումբ, յարձակվեցան պարիսպների զանազան ձեղքերի մէջ և ամենայն կողմից արշաւեցին հռոմէական բանակի վերայ: Գարիբալդին յառաջ վազեց նոցա հանդէպ. միայն առաւել քաջասիրտ մարդիկը գնացին նորա հետևից. միւսերը յետ քաշուեցան Ֆրանսիացոց արագաշարժ արշաւանքի վերայ զարմացած: Ծնշնամին մի լոպէի մէջ տիրեց այն պատնէշին որ կառուցած էր Սպադա դաստակերտի առաջև. բայց Հռոմայեցիք քաջալերվելով Գարիբալդիւս հրաւէրքից, վեր ելան պատնէշների վերայ, և դոքա մի ահարկու խառնակութեան մէջ փոխառ փոխ անցան ձեռքից ձեռք: Ուսաբացին յառաջացաւ ընդհանուր կռիւ տևելով մի քանի ժամ անընդհատ: Գարիբալդին նիզակների անհնարին և միահաղոյն հարուածով յետ վանեց Ֆրանսիացիքը մինչև նոցա երկրորդ ճակատի միւս կողմը: Այդ այս էր արդէն նորա վերջին քաջագործութիւնը Հռոմի պարսպի մօտ:

Հռոմէական զօրքը սպառուել էր զօրութենից. երևումէր պատերազմական հանդերձանքի պակասութիւն:

Գարիբալդին տեսանելով, որ ամենայն բան կորած է, ուղարկեց իւր աջակից աստիճանաւորը յայտնելու Ազգային Ժողովին, թէ անկարելի է աւելի ընդդիմանալ: Ազգային Ժողովը հրաւիրեց Գարիբալդին դէպ ի իւր խորհրդարանը: Նա երևեցաւ այն տեղ արիւնոտ, փոշոտ և քրտինքը թափուելով: Ազգի փոխանորդները սաստիկ ալեկոծութեան մէջ հարցրեցին նորանից, արդեօք կարող էր Հռոմը պահպանուիլ դեռ ևս:

— Մենք տակաւին կարող ենք պահպանել մեր անձը, ասաց Գարիբալդին, եթէ դուրս հանենք Տրանսատիբերական թաղից իւր բնակիչքը, յետոյ այրենք նորան, ապա կամուրջները Տիբեր գետի վերայ քայքայենք. կարճ ասեմ, եթէ քանդենք քաղաքի կէսը:

— Բայց որքան ժամանակ կարող ենք պահպանել մեր անձը քաղաքի ողջ մնացած կէսի մէջ, հարցրեց միևնոյն Գարիբալդիուց.

— Մի քանի օր ևս, առանց թաքուցանելու պատասխանեց հասարակապետութեան քաջ պաշտպանը:

Նապաստները վերահասու լինելով, որ անօգուտ էր աւելի երկար ընդդիմանալ, յանձ դրեցին իւրեանց իշխանութիւնը, և քաղաքի կառավարիչքը սկսան դէպ ի հաշտութիւն խօսել զօրապետ Ուդինոյի հետ: Մի վհատ խոնարհութիւն և մի խաւար յուսահատութիւն տիրեց ամբոխին, երբ որ իմացաւ սա թէ սահմանադրուել է անձնատուր լինել Ֆրանսիացոց և վերատին հաստատել Պապի իշխանութիւնը: Ամենքեան անձնատուր եղան, բայց ի Գարիբալդիուց և նորա քաջ պատերազմակիցներից:

Գարիբալդին ժողովելով զօրախումբերը և յօժարակամ զինուորները, Սուրբ Պետրոսի հրապարակի մէջ, ասաց նոցա.

«Իմ բալեկամք, ես առաջարկումեմ ձեզ սով, ծարաւ, ցուրտ և ջերմ: Չեզ չէ լինելու ոչ ոռճիկ, ոչ օթևան, ոչ ապրուստ, այլ սոցա փոխանակ ձեզ սպասումեն տևողական անհանգստութիւնք, մաշողական պատերազմ և դորձ նիզակների զօրութեամբ: Ով սիրումէ հայրենիքը և փառքը, թող հետևէ ինձ:»

Շատերը յայտնեցին Գարիբալդիուն իւրեանց ցանկութիւնը նորան հետևելու: Ընտրատոքը աչքերին, Գարիբալդին հրաժարական ողջոյն տուեց իւր միւս քաջ պատերազմակիցներին և առիւծի պէս կատաղած դուրս դնաց Հռոմից, հալածական լինելով Ֆրանսիական և աւստրիական ամբոխից:

Յունիսի 3ին երեկոյի 4 ժամին Պապի դրօշը փողփողումէր արդէն Սուրբ Բրիշտական եկեղեցու բերդի վերայ:

ԴԵ.

Դուրս գալով դէպ ի պատերազմ, Գարիբալդին վեր կալաւ զինուորական դանձարանից այնքան արծաթ, ինչքան բաւական էր իւր զօրքի առնեակարևոր պիտոյքը լրացանելու. բայց ինքը բո-

լորովին հրաժարվեցաւ վարձատրութենից. իսկ իւր ապրուստի համար ձեռք բերելու որչափ և իցէ արծաթ, վաճառեց նա իւր ժամացոյցը: Ընդհասարակ պէտք է իմանալ, որ հասարակապետութեան կառավարիչքը Հռոմի մէջ վարվումէին ալքունի սեփականութեան հետ բարեխղճութեամբ և խոհեմութեամբ: Ցրտասիացիք ընդունեցին գանձապանը Հռոմէական եռապետների ձեռքից լիակատար բարեկարգութեամբ. իսկ եռապետների հաշիւները և սեփական ծախքերը արծաթի պարզապէս վկայումէին, որ տէրութեան գանձի տնտեսութեան մէջ եղած չէ ոչինչ կամապաշտութիւն:

Գաբիբալդիու հետ միասին դուրս եկաւ Հռոմից և իւր հաւատարիմ ամուսինը Ցլորիտա: Լսօսելով Գաբիբալդիու քաջագործութիւնների վերայ, չէ կարելի չասել, որ բաղդը միաւորել էր նորան այնպիսի կնոջ հետ, որ փոքր ինչ պակաս էր նորանից քաջութեամբ և վատահութեամբ: Մենք արդէն յառաջուց խօսել ենք այս կնոջ վերայ, իսկ այժմ ասենք, որ և Հռոմի պաշտպանութեան միջոցին էր նա Գաբիբալդիու առաւել աշխատասէր օգնականը:

Այս միջոցում եղած կռիւներից միևի մէջ, Գաբիբալդին իւր յետադարձ շարժողութիւնը ապահով կացուցանելու թշնամու երեսից, ուղարկեց մի փոքրաթիւ զօրախումբ դէպ ի շրջակայ սարերը: Այս զօրախմբի մի մասին առաջնորդումէր Ցլորիտան: Երբ որ հասաւ այն րոպէին, որ Գաբիբալդին մեծ կոտորած տանալով, ստիպուած էր յետ քաշուիլ, նորան լսաց տուեցին, թէ Ցլորիտայի ուղեկից սակաւաթիւ խումբի վերայ յարձակուել է թշնամին, և թէ նորա կեանքը վտանգի մէջ է:

— «Պրեմն պէտք է ցաւակից լինել թշնամուն, հանդարտութեամբ պատասխանեց Գաբիբալդին, որովհետև այն ժամանակից, երբ իմ կինը հրամանատար է այդ սակաւաթիւ խումբին, պատերազմողքը և նորա գլխաւորները կուվումեն իբրև առիւծներ:»

Յիրաւի, մի քանի րոպէից յետոյ Ցլորիտա տիկինը մեկուսացած սուրը ձեռին, ձիու վերայ հեծած վազեց առ իւր ամուսնակիցը և յայտնեց նորան թէ իւր սակաւաթիւ զօրախումբը ձեղքելով թշնամու շարքերը, միացաւ գլխաւոր զօրքի հետ առանց մեծ կորուստի:

Ցլորիտան եկաւ Հռոմ Գաբիբալդիու մեռ ձմեռուան ժամա-

նակում, թողելով Նիցցայում երեք զաւակ Գարիբալդիու մօր խնամարկութեան տակ: Իսկ երբ Գարիբալդին դուրս էր եկել Հռոմից, Վըրիտան սոխպագին խնդրեց, որ թոյլտուութիւն լինի իւրեան հետևելու նորան, թէև Վըրիտայի զաւակաբերութիւնը մօտեցել էր:

Գարիբալդին երբեմն երևելով մի տեղ և ստիպելով թշնամին համաժողովել իւր զօրութիւնքը, իսկ երբեմն դիշերային պահուն անցանելով այնպիսի նեղ ճանապարհներով, որք անմատչելի էին մի կանոնաւոր զօրքի, և դուրս երևելով մի ամենևին հակառակ կողմում, — այսպէս զբօսեցնումէր, անհանգիստ էր առնում և վաստակեցնումէր թշնամու զօրախումբերը: Այսպիսի շարժողութեամբք, ասես թէ մի հրաշքով ազատուեցաւ նա Վրանսիացոց և Աւստրիացոց հալածանքից և հասաւ Տոսկանա: Այս երկիրը այն ժամանակ գտանվումէր Աւստրիացոց իշխանութեան տակ, և այս պատճառով նորան ընդունեցին այս տեղ շատ խոշորութեամբ: Լուցցօ քաղաքը իւր դարպասը փակեց նորա վաստակած ընկերների ընդդէմ: Իսկ Մօնտէպուլճանոյում թնդանօթներ արձակեցին վանքերի պատերից նորա զօրքի վերայ:

Գարիբալդին ամեն կողմից շրջապատված լինելով թշնամիներից, վճռեց նոցա մէջից անց կենալ և գնալ Վենեցիա, որ այնպիսի քաջութեամբ պատերազմումէր Աւստրիացոց ընդդէմ իւր հասարակապետական ազատութեան համար: Գարիբալդին Ապենինեան սարերի նեղ և զառիվայր ճանապարհներով թշնամու հրամանների կրակի տակ հասաւ Վենեցիա: Այս իւր ճանապարհորդութեան մէջ, նա լող տալով անց կացաւ շատ գետեր, լուութեամբ ուղևորվեցաւ թանձր անտառների միջով, նպաստ առած իւրեան դիշերի մթութիւնը. հուսկ յետոյ, գիշի անհաւատալի քաջապորձութիւնների, հասցրեց իւր քաջ պատերազմողների մի բուռն բազմութիւնը սարի տակ, ուր գտանվումէ Սան-Մարինօ փոքրիկ հասարակապետութիւնը, 8,000 բնակիչներով:

Գարիբալդին և իւր ընկերակիցքը, թէև շատ սակաւաթիւ էին նոքա, հեշտութեամբ կարող էին բնաջինջ առնել այս հասարակապետութիւնը, որ աւստրիական մեծաւորների թելադրութեամբ առաջարկեցին նոցա ոչ այլապէս ներս մտանել նոցա սահմանի մէջ, եթէ ոչ յառաջագոյն ցած դնելով իւրեանց զէնքը: Նոյն միջոցին Սան-Մարինոյի կառավարիչքը յայտնեցին Գա-

ըիբալդիուն, որ նա անվտանգ կարող էր ու իտալական նաւահանգստում, ինչ նաւի վերայ կամենար, նստել և գնալ, և թէ նորա գինամթափ ընկերները անարգելք կարող էին վերադառնալ դէպ ի իւրեանց տուները։

Գարիբալդին չկամեցաւ իւր ահաւոր թշնամիների վրէժը դարձուցանել այս մատնաչափ փոքրիկ հասարակապետութեան վերայ, և այս պատճառով, ինչ որ առաջարկել էին նորան, յայտնեց իւր ընկերներին։ Սոցանից ու մասը յանձն առաւ այդ առաջարկութիւնը. բայց ինքը Գարիբալդին առած իւր հետ Գըըրիտան և 100 հոգի առաւել անձնանուէր բարեկամներ, գիշերով ցած իջաւ դէպ ի պապի իշխանութեան ընդարձակ դաշտերը, և թէպէտ տեղը բաց ու անպաշտպան էր, սակայն կարողացաւ նա հասանել ծովի ափին Րիմինի և Բավեննայի մէջ։

Ու քանի ձկնորս մարդիկ — չերկնչելով և ոչ իսկ մահու պատուհասից որով ահ էին տուել նորա, եթէ նոքա օգնութիւն տային Գարիբալդիուն — հասուցին նորան առազաստաւոր մակոյկներ, որոնց վերայ Գարիբալդիու խումբը յոյս ունէր հասանելու Վենեցիա։

Գարիբալդին դուրս եկաւ դէպ ի մի անապահով ճանապարհորդութիւն։ Բայց սկզբումը հողմը յաջողակ էր և Գարիբալդին յուսով էր, թէ ծովային օդը իւր զօրութեամբ կը կաղդուրէ նորա հիւանդ ամուսինը, որ նորա կուրծքի վերայ խոնարհած, հազիւ թէ կարողանում էր շունչ առնուլ, վաստակած լինելով իւր մի փոքր յառաջ կատարած ճանապարհորդութենից, այլև չարչարուելով այն ջերմախտութեամբ որ ստացել էր Հռոմում։

Գիշերը վերայ հասանելով, ծովը վերայ սաստիկ մրրիկ բարձրացաւ. փչեց մի հակառակ հողմ, և լուսաբացից յառաջ Գարիբալդիու ճանապարհորդակիցքը ահ ու դողով նկատեցին իւրեանց առաջև մի քանի աւստրիական պատերազմանաւք որք հետ էին նորա խախուտ մակոյկներից ոչ աւելի քան մի ռմբաձգութեան տպաւորէզ։

Նաւերը պատրաստուում էին Գարիբալդիու ճանապարհը կտրելու, և ձայնարկութիւնը նորանից, հանդերձ պատկանաւոր հրաձակութեամբ հասանում էր նորա ողջմելի փոքրիկ նաւաժողովին։ Մի քանի նաւակներ անդունդը գնացին, միւսերը դէպի տարվեցան և մինը միայն, որի վերայ նստած էր Գարիբալդին, մի

աւանձին յաջող դիպուածով կարողացաւ հաստնել ափին։ Գա-
րիբալդին հաւրզելով իւր մօտ մնացած ընկերակիցքը, փրկու-
որոնել իւրեանց հաւրը, հրաժարական ողջոյն աւուց նոցա մինչև
ցկրկին աւելի ուրախ տեսութիւն, իսկ ինքը օգնականութեամբ
մի հատ բարեկամի, որ եկել էր նորա հետ Մոնտեվիդէոյից, ձեռ-
նելի վերայ դրած իւր մերձ ի մահ ամուսինը, տարաւ դէպ ի մօ-
տակայ անտառը, մտածելով թէ կարող է այն տեղ դտանել որ և
իցէ պատսպարան տարաբաղդ կնոջ համար։ Ընտտոը բաղկանու-
մէր միայն ձահիճներից և խորտակոր տեղերից։ Ա՛յս պատճառով
Գարիբալդին կրկին յետ բերից Ցլորիտային դէպ ի ծովի ափը և
դրեց գետնի վերայ։ Ընկաօա յուսահատութեան մէջ, գլուխը խո-
նարհած, դողդոջուն ձեռները տրօրելով, կանգնած էր նա հանդէպ
Ցլորիտային որ երթուէր ի բաց դէպ ի յաւիտենական կեանք։
Նա չունելով ոչ մի հնար օգնելու իւր սրտի սիրածին, զգուէր
այժմ իւր տկարութիւնը և աղէտալից աղէկոծութեամբ նկատու-
մէր թէ ինչպէս հետ գհետէ շնջանուէր Ցլորիտայի կեանքը, և
դորա հետ միասին Գարիբալդիու յոյսը, ուրախութիւնը և զո-
արթութիւնը։

Մինայն տարաժամ երեկոյին մօտեցան մի քանի դիւղացիք
այն տեղին, ուր մեռանուէր Ցլորիտան։ Յաւակցելով անբաղդ
կնոջը, նորա Գարիբալդիու լանդլանքով գնացին Բաւենա, բժիշկ
բերելու և խոստացան հոգալ մի տալ. բայց մինչև նորա կարող էին
կատարել իւրեանց մարդասիրական դիտաւորութիւնը — Ցլորի-
տան աւանդեց հոգին։

Կնոջ կորուստը կոտրեց Գարիբալդիու անյաղթելի հոգին,
և դառն արտասուք երեւեցան նորա աչքերում։

Ա՛յս միջոցին թշնամին որոնուէր Գարիբալդիուն. նորա
ջոկ կողմը անտատ էր։ Իւր սիրական կնոջ մարմինը հաւրու-
րելով Գարիբալդին, իւր բարեկամի և ցաւակից դիւղացոց օգ-
նականութեամբ թաղեց ամենանու մարմինը նորա բազմաչարչար
վախճանի տեղումը և նորա աւազաթումբի վերայ դրեց Ցլորիտայի
անունը, բայց հոգին շուտով ցրիւ տուեց այս տարտանական յիշա-
տակարանը։

Ո՛ւր էր Գ. Ենեցկայի անկումը։ Գարիբալդին բոլորովին ա-
նուշադրուա հանդրեց այժմ գնալ այն տեղ, և այսպէս հրաժարուելով
այդ դիտաւորութենից, սկսաւ խորհել թէ ինչ հնարով կարող

էր ձգել իւր անձը Պիեմոնտ։ Ա՛յս ձանապարհի վերայ նորա առաջև դրած էր հռոմէական դասաւորների և Տոսկանիայի մի մասը։ Ե՛ւ այս տեղ և այն տեղ շրջուելին զօրաւոր զինուորական դունդեր, որոնցով նորա հետքը։ Թէպէտ պապական իշխանութեան մեծաւորքը և Աւստրիացիք Տոսկանայի մէջ, մանու պատուհաս էին սպառնացել այն մարդուն որ օթևան էր տալու Դաւիթբալղիուն, սակայն Իտալացիք տալիս էին նորան պատսպարան, և նա երբեմն ամբողջ օրեր անցուցանում էր աղքատ դիւղացիների հիւրընկալ յարկի տակ։ Իսկ երբեմն իմանալով իւր հալածողների մօտաւորութիւնը, նա ամբողջ օրեր թաք էր կենում անտառների և այրերի մէջ և գիշերով միայն կատարում էր վտանգաւոր ճանապարհորդութիւնը։

Ա՛յսպիսի դժուարութիւնների հետ պատերազմելով, ոչ յառաջ քան սեպտեմբերի հինգը, տոսկանացի ձկնորսական նաւակի մէջ նստած, հասաւ Պօրտօ-Վ՛եներէ, որ մի փոքրիկ ծովափնեայ նաւահանգիստ է Մարսիլիայի թագաւորութեան։

Պիեմոնտի կառավարչքը կասկածելով Դաւիթբալղիու հասարակապետական խորհուրդներից, աշխատում էին հեռացնել նորան։ Ո՛չյն միջոցին Տուրինեան պալատը հրատարակեց թէ ամենայն մտածութիւն հեռացնելու Դաւիթբալղին թագաւորութեան սահմանից համարվելու էր խախտումն կօնստիտուցիայի։ Դաւիթբալղին բնակուում Ո՛նեցայի մէջ, կամելով ապրել իւր մօր և զաւակների հետ. բայց սարդինական մեծաւորքը կողմնակի թելադրում էին նորան, թէ խոհեմ ընթացք կը լինէր նորա կողմից, եթէ կամէր դուրս գնալ սարդինական հողից։ Դաւիթբալղին սովորած լինելով աղմուկների և եռանդնոտ աշխատասիրութեան, շատ ծանրանում էր իւր նեղկայ դրութեամբ. վանորոյ որոշից թողուլ Իտալիան որին այլևս կարող չէր ծառայել։ Ա՛մենա Դաւիթբալղին չէր կամենում հեռակել իւր անունը Եւրոպայի լրագրների մէջ։ Ո՛նա հրաժարվեցաւ դիմելուց դէպ ի Անգլիա, ուր սառնարիւն Բրիտանացոց սիրտը կարող էր բորբոքել կատաղութեամբ նոցա աղմկալից ժողովների մէջ։ Պատուաւոր և անշահասէր Դաւիթբալղին, թէև շատ չքաւոր էր, սակայն չէր կամենում վարձատրութիւնք որոնել իւր քաջագործութիւնների փոխարէն. նա չէր խնդրում ցաւակցութիւն տարաբաղդութեան մէջ, և հպարտութեամբ մերժեց այն նիւթական նպաստը, որ առաջարկել էր նորան սպրդինական տէրութիւնը։

Ան փոքր փոքր Գարիբալդիու համբաւը սկսաւ լսել Եւրոպայում, նաև Իտալիայի մէջ: Նա հանդարտ պարապումէր վաճառական գործերով նախ Տունիսում, յետոյ Տանժերում և վերջումը Գիբրալտարում: Այս բոլորը չտևեց երկար ժամանակ, և 1850 թուականի յունիսի 15ին գրում է նա իւր, Վալերիօ անուն բարեկամին մի այսպիսի նամակ.

«Այսօր ուղևորվում եմ դէպ ի Ամերիկա, ուր մտածում եմ օթևան հաստատել ինձ Նիւ-Եօրքում: Իմ բարեկամները թողել են իմ կամեցողութեանը մի նաև: Ես դիմում եմ դէպ ի Ամերիկա, այն դիտաւորութեամբ, որ իբրև մեծաւոր վաճառական նաև վերայ շրջեմ ծովի մէջ, որքան ժամանակ հաճոյ կ'լինի Աստուծուն: Ես կամէի անտես առնելով բոլոր վտանգները, նաւարկել այս նաւի վերայ իտալական դրօշի ներքոյ, որ ինձ շատ սիրելի է. ես բացայայտեցի այս դիտաւորութիւնս, բայց առևտրական մարդիկ թոյլ չեն տալիս այս բանը, և ես իբրև վաճառական պարտ եմ խոնարհել հանդամանքին. բայց կարելի է Ամերիկայի միաւորված իշխանութիւնների դրօշի տակ վերստին տեսանեմ ես այն տեղեալ ծովերը, դէպ ի ուր ձգտումն իմ թշուառ կեանքի բոլոր քաղցր երազները:

Այժմ ներեցէք ինձ ասել ձեզ մի քանի խօսք Կամպանետոի վերայ, որ սարդինեական հիւպատոս էր Տանժերում: Նա ստանալով առատ ռոճիկ, յանձն է առել աւազակական հիւպատոսի պաշտօն. ցաւելի է մտածել, որ մեք Իտալացիքս պատրաստ ենք ծառայել մեր հարստահարողներին:»

Թէպէտև քաղաքական պայմանները ցուցանումէին Գարիբալդիուն ըստ երևութին աւելի մեծ ասպարէզ գործունէութեան և աւելի յոյսեր հարաւային Ամերիկայում, քան թէ հիւսիսային, բայց նա չկամեցաւ օգուտ քաղել իւր պարծանքից Ամերիկայի հարաւային հասարակապետութիւնների մէջ, ուր այն միջոցին լինումէին քաղաքական պատերազմներ որպէս հետևանք զանազան փառասէր մարդերի և նոցա կուսակիցների դաւաճանութեան:

Գարիբալդին խոստովանում էր, որ իւր առաջին քաջագործութիւնների ասպարիզում կարող չէր ծառայել ազատութեանը, ինչպէս մի ժամանակ ծառայել էր նորան, պատերազմելով ընդդէմ Ռոզասի բռնակալութեան, և այս պատճառով նախապատիւ համարից իւր աննշան բաժինը հիւսիսային Ամերիկայում:

Գարիբալդին հասանելով Նիւ-Եօրք, տարի ու կէս պարապումէր այն տեղի ֆաբրիկաներից մինի մէջ ձարպեղէն մոմի պատրաստութեամբ։ Նա աշխատումէր հանելութեամբ և ժրաջանութեամբ, ինչպէս հասարակ մշակ, որի համար եղած չէին փառաւոր օրերը ոչ Մօնտէ-Վիդէոյի և ոչ Ռոմի մէջ։

Գարիբալդին հրաժարուելով այս պարապմունքից, որ ձանձրալի էին մի մեծաւորի պաշտօնի մէջ հիւսիսային Ամերիկայի վաճառական նաւի վերայ, Նիւ-Եօրքից դնաց Նալիֆօրնիա, բայց ոչ այն դիտաւորութեամբ, որ, ինչպէս միւս այցելուքը Նալիֆօրնիայի, ոսկի ժողովէ նորա ձոխ աւազի մէջ, այլ որովհետև այն տեղ աւելի հեշտ էր գտանել նաւապետի պաշտօն այնպիսի նաւի վերայ, որ ուղևորուելու էր հեռաւոր աշխարհները։ Դէ արդարև նա շուտով կարդուեցաւ մի նաւի վերայ, որ նախ և յառաջ ձանապարհորդեցաւ դէպի Աֆրիկայի ծովեզերքը, ապա դէպ Չինաստան։ Չինաստանից վերադառնալով Գարիբալդին, տեսութիւն ունեց Մօնտէ-Վիդէոյին։ Ուրագվայի հասարակապետութիւնը տակաւին յառաջ էր տանում իւր կռիւը Բոզասի հետ, և Գարիբալդին կամենումէր առաջարկել իւր ծառայութիւնը այս հասարակապետութեանը, համարելով նորա ազատութիւնը Բոզասի ձեռքից արդար գործ։ Բայց յառաջ քան թէ վերջացել էին պայմանաւորութիւնքը այս մասին, բուենոս-այրէսեան հասարակապետութիւնը Ֆրանսիայի միջնորդութեամբ հաշտուեցաւ Ուրագվայի հասարակապետութեան հետ, և Մօնտէ-Վիդէոյում Գարիբալդիուն չմնաց այլ ևս ոչինչ գործունէութեան ասպարէզ։

Այս միջոցին Պերուի հասարակապետութիւնը առաջարկեց Գարիբալդիուն գլխաւոր հրամանատարի պաշտօն Պերուական ռազմաւարեիւ զօրքի վերայ։ Նրէ այս տեղեկութիւնը ուղիղ է, ապա Գարիբալդին չէ կատարել նորան յանձնած պաշտօնը երկար ժամանակ, որովհետև 1854 թուականին նա արդէն Եւրոպայում էր։

ԺԲ.

Գարիբալդին վերադարձաւ Գենուա նոյնպէս աղքատ, ինչպէս և յառաջուց էր. այս տեղից նա դնաց Նիցցա, այցելութիւն առնելու դերեզմանին իւր շատ սիրելի և նպաստելի մօր որ մեռել էր

1851 թուականին։ Նիցցայումը ստացաւ նա նաւապետի պաշտօն մի վաճառական շոգենաւի վերայ և անդադար անց ու դարձ էր առնում այս քաղաքի և Մարսէլի մէջ, լցուցանելով իւր պաշտօնը, որպէս սովոր էր, արիւմթեամբ և բարեխղճութեամբ, և տեղական բնակիչները տեսանելով ալեւակէզ նաւարկուն որ նաւահանգստումը անվաստահելի զբաղուած էր վաճառական բեռների մէջ, դժուարա-նում էին հաւատալ, թէ սա էր երեւելի և ահարկու Գարիբալդին։

Գարիբալդիու կեցութիւնը Պրեմոնտում, ձանձրալի չէր այլ եւս նորա սրտին։ Մի քանի տարու մէջ, կօնստիտուցիօնական կարգերը յառաջադէմ կայուցին նորա հայրենիքում այն քաղաքական աղատութիւնը, որին ծառայել, Գարիբալդիու բոլոր կեանքի խորհուրդն էր։ Հռոմի պաշտպանը այսուհետև նայում էր Պրեմոնտի վերայ, իբրև Իտալիայի նուիրական յոյսի և բարեկարգութեան օրինակի վերայ։

Այս միջոցում Գարիբալդին պատրաստեց մի փոքրիկ ճաբրիկա կապարել կզզու վերայ, և իւր օրէ օր չափին հասանող որդու օգնութեամբ վարում էր իւր գործերը շատ յաջողակէս։ Գարիբալդիու չարեացակամքը համբաւ տարածեցին թէ նա օգուտ է քաղել այն թոշակից որ սարդինական տէրութիւնը առաջարկել էր նորան, բայց այս լուրերը չունէին ոչինչ հիմք։ Գորանց հերքում են նաև այս քաջագործ մարդու գերմանացի վարքագիրքը, որոնցից երբէք կարելի չէ կասկածանք առնուլ կողմնասորութեան դէպ ի ատեցողը գերմանական իշխանութեան Իտալիայի մէջ։

Նթէ քննենք այն առ և տուրքը, որով պարապում էր Գարիբալդին, այս տեղ նորա կողմից եղած չէ և ոչ ամենափոքր շահասիրութեան խորհուրդ։ Ընդհակառակն նորա աշխատութեամբ նա մօտենալ հարստականների, որք Իտալիայի ապստամբութեան ժամանակին կարող էին օգնել նորան իւրեանց արծաթի կարողութեամբ, որ ցուցանում էր մինը շատ զօրաւոր հնարներից հասարակաց գործի մէջ։ Բայ ի դորանից, շրջելով Եւրոպայի և Ամերիկայի զանազան նաւահանգիստներում, կարող էր նա անդադար հանդիպել այնպիսի մարդերի, որոնք փորձուած էին վտանգների մէջ և սովրած էին գժուար ձեռնարկութիւնների, և այս պատճառով կարող էր համարձակ ծովագնացների մէջ միշտ ունենալ մի բուռն քաջ ընկերներ, որոնք պատրաստ կը լինէին նորա հետ միասին վեր կենալ յօգուտ ազգային գործի։

Ներկայումս տեսած էր Գարիբալդիին նորա խաղաղ զբաղմունքի մէջ յայտնի Ֆրանսիական մատենագիր Ալֆօնս Կարը. և ահա ինքն է խօսում նա Գարիբալդիու վերայ. «Գարիբալդին իւր խաղաղական կեանքի մէջ, վայելում ընդհանուր յարգանք թէ իւր հայրենակիցների և թէ մեր փոքրիկ Ֆրանսիական գաղթաշէնքի մէջ: Նա կատարելապէս արժանի է այդ մեծարանքին իւր արդարութեամբ, ժրաջանութեամբ և իւր ընթացքով առանձին կեցութեան մէջ, իբրև հայր գերդաստանի, թէպէտ նա որպէս սիրող քաղաքական կարգերի յեղափոխութեան (revolutionnaires) և գործ յառաջ տանող այդ ասպարէզի մէջ, նիւթ է դարձել շատ անիրաւ մեղադրանքի: Այդ մեղադրանքը, ոչ այլ ինչ են, եթէ ոչ, հնարած բաներ որ չունին ոչինչ հիմք, կամ նոցա մէջ երևում միայն թշնամական չափազանցութիւն և դառն ատելութիւն:

«Դեռ ևս ոչ միանգամ չտեսած Գարիբալդին, յառաջ է տանում իւր խօսքը Ալֆօնս Կարրը, — ես շատ անգամ լսումէի նորա անունը և կեանքի անցքը: Առաջին անգամը ես հանդիպեցայ նորան հարսանիքում մի արհեստաւորի մօտ, ուր հրաւիրված էինք ես և նա: Պիպուածով թէ դիտաւորութեամբ, չգիտեմ, ինձ նստեցրեցին նորա մօտ սեղանի վերայ: Ես այս տեղ ես պատեհ գտայ խօսք ու զրոյց բանալ նորա հետ առանց որ և իցէ դժուարութեան: Նորա խօսակցութիւնը էր ծանրաբարոյ, գրաւիչ և շնչումէր ճշմարտութիւն: Ոլոր հիւրերը ցուցանումէին նորան մի գերօրինակ մեծարանք:

«Սորանից յետոյ, վերջացնում Ալֆօնս-Կարրը, — ես շատ անգամ հանդիպումէի նորան նաւահանգստում, ուր նա կիրակի օրերը խաղումէր նաւաստիների հետ զանազան նոցա մէջ ընտանի խաղեր:»

Տասը 1859 թուականը:

Պատերազմը, որ սկսվել էր Սարդինիայի և Ֆրանսիայի կողմից վասն ազատութեան Իտալիայի, իսկ Աւստրիայի կողմից վասն ծառայեցնելու նորան, ստիպեց Գարիբալդին թողուլ իւր խաղաղ կեանքը և մտանել Իտալիայի ազատութեան դրօշի տակ: Նա հնարաւոր էր տեսանում իրագործել այն խորհուրդը, որին այնպիսի անարատութեամբ և ջերմեռանդութեամբ ծառայել էր իւր բոլոր կեանքի մէջ:

Ահա զգացման շարժառիթով, Գարիբալդին մեծ յօժարութեամբ յանձն առաւ սարդինեական տէրութեան հակառակ միներորդ կոմս Կավուրի առաջարկութիւնը մտանել ի ծառայութիւն ալբայ Վիկտոր-Էմմանուէլի, որ ինքն իւրեան ասումէր Իտալիայի առաջին զինուոր:

Կաւուրը ընդունեց Գարիբալդիուն ոչ միայն քաղցրութեամբ և բարեկամախրատբար, այլև այն յարգութեամբ, որին արժանացել էր Գարիբալդին իւր զինուորական ձիրքով և անսովոր քաջագործութեամբք թէ Ամերիկայի և թէ Եւրոպայի հողի վերայ: Գրաճ կաւուրը թագաւորի անունով առաջարկեց Գարիբալդիուն Սարդինիայի սպասաւոր զօրապետի պատիւ և յայտնեց, թէ արքայական տէրութիւնը շնորհումէ նորան կազմել առանձին զօրախումբ յօժարակամ զինուորների, որոնց հետ նա կարող էր ներդործել սարդինական և Ֆրանսիական զօրքից բոլորովին ազատ:

Որպէս ապացոյց գործակցութեան Գարիբալդիու խումբի համար, ընտրուեցաւ Սարդինիայի լեռնային մասը դէպ ի հիւսիս, այլև Լոմբարդիայի սահմանագլուխները:

Գարիբալդին օգուտ քաղելով սորանից, շուտով զօրք կազմեց 4,000 յօժարակամ զինուորներից, անուն տալով նոցա Ալպեան որսորդներ: Պայմանների մէջ, որ հաստատել էին Կավուրը և Գարիբալդին, դրած էր և այն, որ Գարիբալդիու զօրախումբը որպէս յիշատակ 1849 թուականի, չկրէր սարդինական զօրքի պէս հագուստ, այլ կարմիր վերարկուք, որոնք արդէն բաւական ահագոյացիլ էին Իտալիայի թշնամիներին:

Գարիբալդին մտանելով սարդինական պաշտօնի մէջ, և ահա աւստրիական լրագիրները իսկոյն թափեցին նորա վերայ մեղադրութիւնք և պարտաւորութիւնք:

Այդ լրագրերից մինը մաղձոտութեամբ գրումէր «Գարիբալդիու և նորա կատաղի զօրքի արած քաջագործութիւնները դեռ ևս դալար ճնումեն Լագո-Մաջօրի շրջակայքում եղած բնակիչների սրտի և տխուր յիշատակի մէջ:»

Այսպիսի բամբասանքը Իտալիայի հակառակորդների կողմից նորա առաւել քաջասիրտ պաշտպաններից մինի վերայ հերքուեցաւ իսկոյն նորանով, որ Գարիբալդին երևելով այն շրջակայքում, ուր, աւստրիական լրագրի ասելով, թողել էր նա տխուր յիշատակները, և ահա բոլոր բնակիչները ուրախութեամբ հանդիպ գնացին նորան — և տղամարդիկ ամենայն հասակի և կարգի, մինը

միտից յառաջելով, շտապումէին իբրև հասարակ զինուորք մտանել նորա զօրքի մէջ։

Ակսելով պատմել Գարիբալդիոս քաջագործութիւնները անցեալ տարուս պատերազմի մէջ, աւելորդ չենք համարում յիշեցնել, թէ այդ միջոցին Գարիբալդիոս բնութիւնը ինչպէս էին նկարագրում նորա վարքագիրները։

Գարիբալդիոս ֆրանսիական վարքագիրներից մինը Կլոդ-Պիտա անուն, գրում էր նորա մասին այսպէս.

«Մենք չենք կարծում, որ Գարիբալդին լինի մի տեսակ կիսաստուած կամ մի չար ոգի։ Նա պատկանում է այն միակնդիր մարդկերին, որք իւրեանց բոլոր կեանքը ձգտեցուցած էին դէպ ի մի նպատակ։ Գարիբալդիոս գնացքը պարզ վկայում է, որ նա հոգով հասարակապետական է, բայց միանգամայն և շատ ու շատ հաստատում է որ Գարիբալդին աւելից յառաջ ճշմարիտ հայրենասէր է, և թէ նա իւր հայրենիքի ազատութիւնը շատ վեր է դասում իւր յատուկ սրտի խոստովանութիւններից, որ և պատրաստ է նա զոհ բերել իւր հայրենիքին։

Այս զգացմունքի հետ զուգախառնում է նա մի անհանգիստ և անընկճելի հոգի, այլև նոյնպէս անխոնջ աշխատասիրութիւն։ Այսպիսի յատկութիւնք նորա բնաւորութեան, դուրս են հանում Գարիբալդին մի աննման և միօրեայ կեանքի շրջանից և տալիս են նորան մի վտանգախնդիր մարդու կերպարանք։ Նորա աջողակութիւնը լինելու զինուորական առաջնորդ և նորա անձնական քաջութիւնը չեն ոչ մի տարակուսի տակ։ Բայց կարելի է հարցանել, ունի՞ նա այն հանճարը, որ անհրաժեշտ կարևոր է շարժելու բազմութիւնքը և առաջնորդելու նոցա դէպ ի մի որոշեալ նպատակ։ Այս խնդիրը կը պարզուի միայն, քննելով անցքերի ահելի յառաջադէմ ընթացքը։

Գարիբալդիոս գերմանացի վարքագիրներից մինը Լուդովիկոս-Ֆօն-Ալվինսլեբէն յիշելով այն նկարագրութիւնը որով Կլոդ-Պիտան յատկացուցել է նորան, յաւելացնում է այսպիսի խօսքեր.

«Այդպիսի կարծիք Գարիբալդիոս վերայ կարող ենք ընդունել մասամբ միայն։ Գարիբալդիոս ձիրքը յայտնի չեն այնպէս, ինչպէս առհասարակ մի զինուորական առաջնորդի, այլ իբրև ասպատակող զօրավարի։ Նորա համար կարևոր են առանձին աջողակութիւնք, որոց կարօտ չէ մի հասարակ զօրապետ, որ կատարում է միայն իւր վեճաւորի հրամանը և սակաւ անգամ գտան-

վումէ այնպիսի հանդամանքի մէջ, ուր նա ստիպված էր նեղդոլծել ինքնիշխան։

Ա՛ր ջապէս տիկին Լուիզա Գաօթէն, որ գրել է մի հատոր վարքագրութիւն Գարիբալդիու, 1859 թուակ. պատերազմի սկզբում, յայտնում է նորա մասին այսպիսի կարծիք.

Յովսէփ Գարիբալդին անձնաւորումէ իւր մէջ այն մարտնացած քաջութիւնը, որով մի ժամանակ նշանաւոր էին թափառական ասպետները. նա մի քաջ տղամարդ է, որպէս Աքիլլեսը[1]) և Օլանդը[2]), և չարախօս լեզուն միայն բամբասումէ նորան իբրև աւազակների պարագլուխ։

Ա՛յս որդին ձկնորսի, այս Մազանիէլլօն[3]) մեր դարու, երբէք նման չէ աւազակների առաջնորդի, ոչ միջնադարեան օրերի վարձկան զօրավարի կամ սատանայի եղբայրակցի. նա է միևը այն մարդերից Իտալիայի մէջ, որ արժանի է ամենախորին մեծարանքի։

(Շարունակութիւնը յետոյ.)

Մարտիրոս Հրալեան։

---

[1]) Աքիլլես ասվումն երկու քաջազունը Տրոյական պատերազմի մէջ. Աքիլլես Ոյիլէոս, մինը Հելլենայի հարսնախօսներից, որ նշանաւոր էր իւր քաջութեամբ, բայց և իւր բռնակալ ընթացքով դէպ ի Կասսանդրա անուն դուստրը Պրիամոսի և Հեկուբայի. սա մահ գտաւ ծովի ալիքների մէջ։ Մինսը — Աքիլլես Տեյամոնիոս, նոյնպէս Հելլենայի հարսնախօսներից մինը, նկարագրվումէ որպէս մինը ամենաքաջ և ամենագեղեցիկ երիտասարդներից։ Որովհետև Աքիլլեսի մահուց յետոյ նորա զէնքը խլեց Ուլիսեսը Աքիլլեսից, այնուհետև սա կատաղած ու յուսահատուած անձնասպան եղաւ իւր յատուկ սրով։

[2]) Մի հռչակաւոր զօրավար և քաւերորդի Կարոլոս մեծի, 8 երորդ դարում Քրիստոսից յետոյ, որ կայսրի վերադարձի միջոցին Սպանիայից սպանվեցաւ Բասկերի ձեռքով Պիրինեյեան սարերի մէջ։ Հռչակաւոր է նորա քաջագործութիւնների վերայ գրած Արիոստո անուն իտալական բանաստեղծի տաղերգութիւնը մակագրութեամբ «Orlando furioso».

[3]) Մազանիէլլօ կամ Թոմազօ Անիէլլօ, մի երիտասարդ որսորդ Նէապօլիտում, որ զայրացած այն հարստահարութեան վերայ որով Սպանիան նեղումէր Նէապօլիտեան ժողովուրդը, ձայն բարձրացրեց և ազգի մէջ բազմաթիւ համախոհներ գտաւ, և երբ որ մանաւանդ գահատէր փոխարքայ Արկոսեան դուքսը ամենածանր հարկերով բեռնաւորեց ժողովուրդը, այնուհետև զայրացան Նէապօլիտացիք և 1647 ին ընտրեցին իբրեանց առաջնորդ Մազանիէլլօն, որ սակս մի քանի արիւնոտ պօրձերով բանը այն տեղ հասցրեց, որ մի դաշնադրութեամբ յաղթուած փոխարքայի հետ վերստին հաստատուեցան հին ազատութիւնքը։ Բայց Մազանիէլլօյի բազմաթիւ համախոհքը այնու ամենայնիւ շատ վտանգաւոր երևելով Փոխարքային, սա չկանդիր եղաւ դեղել նորան մի հացկերութեան մէջ. և այսպէս Մազանիէլլօն խելագարվեցաւ և վազելէր փողոցների մէջ և սպանուէր իւր ամենալաւ բարեկամները, և այնուհետև ժողովուրդը ինքը խնդրեց նորա արիւնը։ Մի Կարմելիտեան միաստանաւոր, ուր պատսպարան էր որոնել նա, չորս դարանագործների ձեռքով սպանուեցաւ 1647 ին և նորա դին խայտառակվեցաւ։ Բայց ժողովուրդը անպատկան վերահասաւ եղաւ փոխարքայի դաւաճանութեանը. նոր ի նորոյ սկսաւ ապստամբութիւն, սպանվեցան սպանողքը ազգային ազատութեան մարտիրոսի. նորա մարմինը թաղեցին փառաւոր հանդիսով և մի քանի ժամանակ սուրբ էր համարվում։

ԲԱՐՈՅԱԿԱՆՔ

ՍԷՐ ԵՒ ՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

ՅՕԴՈՒԱԾ 1.

Սէր և Ամուսնութիւն. որպէս խորհրդաւոր և մեծապատուական, որպէս մեծ, գեղեցիկ և փառաւոր են դրքա, եթէ միտ դնենք դոցա լիամասն արժանաւորութեանը, դոցա բովանդակ խորութեանը: Դրքա նշանակումն կեանքի ամենամեծ, ամենաստուրբ նիւթերը, հաւասարապէս մեծակշիռ թէ կրօնական, թէ բարոյական, թէ բնապատմական և թէ ֆիզիքական մտքով. նոյնչափ ևս մեծակշիռ փիլիսոփայի, որչափ քաղաքագետես մարդու համար, նոյնչափ ևս հոգեւորի, որչափ բժշկի և առ հասարակ ամենայն մարդու որ կամ մէր լինել որ և իցէ չափով իմնցականապէս կրթեալ կամ սրտով ազնուացած անձն:

Բայց ո՛ր տեղ է ճշմարիտ աղբիւրը, ո՛ր տեղ է սկզբնապատճառը ամենայն սիրոյ. Աստուծոյ մէջ միայն գտանումենք դոլան, Սուրբ Սէր է:

Սիրոյ վերայ, սկսեալ նորա զանազան գերադոյն աստիճաններից, ուր նա աղբիւրանումէ Աստուծուց, մինչև ամենաստորինը երկրաւոր կեանքի մէջ, շատ բան ասած ու գրած են մինչև այսօր, բայց ևս առաւել Ամուսնութեան վերայ: Հին ու նոր ժամանակներում շատ խօսք ու զրոյց է եղել անբաղդ ամուսնութիւնների, նոցա մէջ եղած տհաճութիւնների, խաբուած և ունայնացած յոյսերի վերայ, և մինչև այսօր սովոր են մարդիկ ասել, թէ հաղար

ամուսնութիւններից հաղիւ թէ մինը կարելի էր երջանիկ համարել, թէ հաղիւ կը պատահէր գտանել միայն մի ձշմարտապէս երջանիկ ամուսին այլ, կամ մի բոլորովին դոհունակ ամուսին կին։ — Ա՛յս բանս մտածել ես դու, սիրելի ընթերցող, որ գուցէ դիտաւորութիւն ունէիր ամուսնութեան սուրբ կապը հաստատել. լինելո՞ւ էիր դու ձշմարտապէս երջանիկ քո սրտի սիրածի հետ, ամուսնութեան մէջ. ներիր ինձ այս հարցումս, — Դու ցանկանումես ինձանից լսել մի քանի ակնարկութիւնք ամուսնութեան գաղտնիք ասած բանի վերայ, դու կամիս, որ ես մերկացնէի քո առաջև Ֆիմենէոսի [1]) խորհուրդները, — բայց դու առ հասարակ ունի՞ս արդէն մի պարզ տեսութիւն ամուսնական կեանքի բաղդաւորութեան և օգտի մասին։

Մի սուրբ պարկեշտ քօղ վերարկուիմ ամուսնութեան գաղտնիքը. դու կամիս, որ ես այդ քօղը մի փոքր բարձրացնեմ. բարի է. ծանրութեամբ և հոգու խաղաղութեամբ, և խորասիրտ զգալով այդ նիւթի սրբութիւնը, կ'ուսուցանեմ քեզ ամենայն բան, որ կարող էր այս մասին արժանի լինել քո տեղեկութեանը որպէս մարդու և մտախոհ էակի։ Բայց մտածի՛ր, որ դու չլինելով բժիշկ, գուցէ ցանկանումիր խմանալ մի փոքր աւելի և անսովոր բաներ։ Շատ իրք կան աշխարհիս վերայ, որ մեք կարող չենք ամենևին մերկանգամ, այլ միայն քօղաւորած քննել, եթէ պիտոյ չէր, որ դոքա իւրեանց կախարդող գեղեցկութենից կորուսանէին մի բան։ — Այ մի անեղծական, միտնջենաւոր, աստուածեղէն բան որ մեք ապականումենք նորանով միայն, որ համարձակվումենք մեր երկրաւոր լեզուով արտաբերել, մեր խելքով բացատրել, մեր բաղուկներով, մեր հոդեղէն, եղծական անդամներով շօշափել նորան։ —

Երկնքից է գալիս սէրը մեր մօտ, այն տեղից, ուր ամենայն սիրոյ աղբիւրն է, և այն պատճառով կարօտ չէ ոչինչ մարդկային լեզուի։ Անբարբառ, այնու ամենայնիւ սիրելիներին հասկանալի, բնակումէ նա միայն սիրողների հայեացքի և աչքի մէջ։ Բայց որչափ երկար արդէն դեպերումէ այս տեղ, երկրի վերայ, այնչափ էս աւելի բան ընդունումէ հոդեղէն մարդկային բնութենից, այնչափ էս աւելի բան կորչումէ նորա աստուածեղէն կախարդող զօրութենից, եթէ մեք չանադիր չենք պահպանել նորան, և այն աս-

---

[1]) Ամուսնութիւնների աստուածը, ըստ յունական առասպելի։

տուածեղէնը, որ մեզ կապակցումէ երկնքի հետ, իբրև մի քնքուշ ծիլ մեր ծոցի մէջ սնուցանել և լինամարկութեամբ տածել:

Աչքը, մեր կազմուածքի ամենագեղեցիկ և ամենաշնիւ մասը, անանելով լուսից, այս ամենանուրբ, եթերական մնունդից որ մեզ հասանումէ վերևից, — աչքը է այն օթևանը որի մէջ բնակումէ սէրը իւր աստուածեղէն կախարդողութեամբ, իւր անեղական զօրութեամբ: Սիրածի հայեացքումը միայն ապրումէ սիրելին. ձեր աչքերից, դուք նոր նշանածներդ, խօսումէ ձեր հետ ամենիւ սիրոյ բոլոր գեղեցիկ երկինքը իբրև նախաճաշակ այն երանութեան որ մեք միանգամ աւելի վերին օթևաններում կը վայելենք: Ինչպէս որ վերին գաւառների անմահ էակները, հաւանական է, որ կարօտ չեն ոչնչ լեզուի, իւրեանց խորհուրդները յայտնելու միմեանց, այնպէս ևս ձեր աչքերը հանդիպումեն միմեանց, և բոլոր առաստութիւնը ձեր ամենագեղեցիկ մտածմունքի, ախտերի և իմացութիւնների այն մաքուր ամենիւ սիրոյ, որ բնակումէ ձեր սրտերի մէջ, որ աւելի բարձր է քան թէ ամենայն իմացութիւնք, որպէս անմահ էակներ դուք մանաւորել էք միմեանց: —

Պարելի է հաւանականութեամբ ընդունել, որ կան ևս աւելի բարձր և նուրբ էակներ արարչագործութեան մէջ քան թէ մարդս: Ամենայն բնական արարած պատշաճաւոր է այն տարրանիւթին որի մէջ նա կենումէ. ամենայն տարրանիւթ, այսպէս ասել, կերպարանումէ իւր յատուկ արարածքը: Երեշտակների կերպարանքը գուցէ թէ գնդակաձև է: Գաւ մի գնդակ ունի հոգի. ամենագեղեցիկ օթևանը որի մէջ այդ հոգին, Սէրը, բնակումէ, է աչքը: Ձեր սիրուհին ունի մի զարմանալի գեղեցիկ աչք. սա կարօտ է լուսի — սա ապրումէ լուսից: Ամենաշնիւ անդամը կամ անօթը մարդուս է մի լուսաստուն բոլորակ գունդ: Եւ ամենաշնիւ արարածը աշխարհի լինելու է մի այդպիսի էակ: Աչքը է մի ամբողջ կազմած փոքրիկ չափով. դա պարունակումէ իւր մէջ բոլոր կարգերը մարմնի. Ջիղերի կարգը դառնումէ ցանցային թաղանթ, անօթների կարգը այս տեղ լինումէ երակամոլթ: Եթէ ուշադիր լինինք մի գիտնական անդամաշնին մարդու ասածի, մեր ստոլաւկարգ երկիրը չունեը դեռ ևս այնքան զօրութիւն, որ գունդը ծնուցանելը որպէս մի ազատ էակ, այդ պատճառով կերպարանուեցաւ նա իբրև մի անհատասար մարմին անդամներով: Այնու ամենայնիւ իւրաքանչիւր արարած սկզբնաւորվումէ գունդի կերպարանու-

թեամբ, և ամենազնիւ մասը, զլուխը մարդու վերայ, է մի գունդ, անոստնի մէջ ոչ այնքան կատարեալ, որովհետև ստորակարգ է նորա կազմուածքը:

Այդ մեք մարդիկս բնակումենք այս տեղ գետնիս ոչ լուսի մէջ. Օդն է, որ շրջապատում է մեզ, որ աւելի հողեղէն և երկրաւոր է բնութեամբ, քան թէ լոյսը: Այս օդը մեր միջնորդն է. միայն նորանով և նորա թրթռմամբ, շառաչիւնով հաղորդվումենք միմեանց հետ. այս պատճառով և սիրողների լեզուն կարող չէ միշտ մնալ աչախօսութիւն: Այդպէս կամի անտեսութիւնը մեր մարդկեղէն բնութեան, մեր երկրաւոր կեանքի:

Բնութեան օրէնքով, ինչպէս դա բացերեւումէ երկրաւոր կեանքի մէջ, և ոչ իսկական բարբառը յօդաւոր ձայներով բաւական է սիրողների համար: Երկնքից եկած սէրը մաքուր ու էթերական էր. այս պատճառով նա հաստատեց իւր օթեւանը մեր կազմուածքի ամենանուրբ մասների մէջ. նա սկզբումն հրապուրեց մեր ամենակատարեալ և գերագոյն զգայարանը, լուսի զգայարանը. այն տեղից տարածուեցաւ օդի զգայարանի վերայ, որ հրապուրվումէ օդից և շառաչիւնից. — Սէրը գարձաւ լեզու: — Այսպէս հրեշտակային սէրը յեղափոխվեցաւ մարդկային սէր, և այնուհետև, ինչքան որ նա գերեզումէ մեր մէջ և նմանակից է գառնում մեր երկրաւոր բնութեանը, տիրապետումէ և միւս առաւել ստորին զգայարաններին: — Այսպէս ահա սիրելի լծակիցքը, այլ ու կինը ստորադրած լինելով բնութեան մշանջենաւոր օրէնքին, վերջապէս փափագումեն համբուրման և գրկախառնութեան, և այսպէս մարդս լցուցանում իւր կեանքի և վախճանի խորհուրդները: — Ամուսնութիւնը երկնքում զուգաւորուած, երկրաւոր կեանքի մէջ կացուցանում եղբայակող քարը այն սուրբ տաճարի դմբեթի համար, ուր ունին իւրեանց երկնային օթեւանը բոլոր գեղեցիկ քրիստոնեական առաքինութիւնքը: — Ամուսնութիւնը երկու անձինք զանազան սեռից զուգաւորումէ առաւել սերձաւոր կապով, որ լցուցանէ այն խորհուրդները մարդկեղէն բնութեան, որ երկրաւոր կեանքիս մէջ հաստատելի են սեռերի միաւորութեամբ: Արդուս բնութիւնը կամ թէ նորա բոլանդակ առանձնականութիւնը որ բոլոր երկրի վերայ պատկանումէ նորան միայն որպէս երկրաւոր ապրածների մէջ գերագոյն էակին, կէս մի մնայնաւոր է, և կէս մի հոգեղէն: Արմնաւոր սէրը է մարդկային բնութեան կարօտութիւնը լրա-

ցուցանելու իւր անձը ամենամերձ զուգաւորութեամբ երկու ըստ սեռին զանազան էակների: Ա՛յսպէս որոշեալ միջոցներում մարդկային կեանքի, զարթնումէ այս ցանկութիւնը որպէս զգայական դրդումն, որ անցաւոր է և վերջանումէ, երբ որ լուացած էր մարմնաւոր սէրը, ինչպէս որ քաղցրութիւնը այդ տեղ լոպէական է միայն և, ցանկութիւնը կատարելով, անցանումէ, որովհետև անդորճանումէն և թուլանումէն այս դրդման հետ կապակից գործադրանքը: Երբ որ սոցա կենսական ներգործականութիւնը վերստին նորոգուելով, ստացել է առաջին սաստկութիւնը, ապա զարթնումէ նոր ի նորոյ նոցա գործողութիւնը և դորա հետ միասին յօժարութիւնը դէպ ի նոր կամակատարութիւն: Երկու անձինք զանազան սեռից, արու և էգ, բաւական են լուացանելու այս յօժարութիւնը և նոյնքան առաւել, ինչքան կատարելապէս բացայայտ էր նոցա սեռական բնաւորութիւնը, որովհետև այդ միջոցին ձգտողութիւնը դէպ ի ներհակ սեռը այնքան ևս ազդու է: Պիտոյքը լուացանելուց յետոյ, մարմնաւոր կամ ֆիզիքական սիրոյ նիւթը կորսուանումէ իւր կշիռը և մարդուս ֆիզիքական բնութեան համար, որովհետև այս տեղ խորհուրդն այն չէ, որ երկոքին էակքը լինէին մին, այլ սեռերի ներհակութիւնը: Այսպէս է բացայայտում մարդկային բնութեան շնչաւոր կողմը:

Ամենևին այլապէս է բանը, եթէ քննումենք մարդուս աւելի ազնիւ հոգեղէն բնութիւնը: Այդ տեղ չկայ ոչինչ սեռական զանազանութիւն. միայն մի ջերմ կարօտութիւն միաւորուելու գեղարդոյն բարու հետ, սեփական է նորան: Ամենայն խնդայական կերպարանագործութիւն, ամենայն յառաջադիմութիւն հոգու դէպ ի աւելի կատարեալը, ունի իւր հիմքը այս կարօտութեան մէջ, այս ձգտողութեան մէջ դէպ ի երկնայինը, դէպ ի անեղականը: Ամենայն բան որ նա համարումէ ճշմարիտ, բարի և գեղեցիկ և կատարեալ, այդ բոլորը ունի նորա հետ խաղաղութիւն և դաշնակութիւն, և այդպէս ձգտումէ նա միանալ սոցա հետ: Այս ձգտողութիւնը է հոգեկան սէրը: Նորան բաւական է ղգալ հոգու ներքին պայծառութիւնը և հրճուանքը, երանութիւնը երկրի վերայ: Այս սէրը երբեք շնչանումէ չէ, այլ տևումէ յաւիտեան, որովհետև նորա ազբիւրը է կարօտութիւն դէպ ի անեղականը: Սա յաւիտեան զրկանաւոյծ ունի իւր սիրելին, որին մտածումէ նա բարի և համեստ իւր դիւրութեանը և նորան գաղափարումէ որպէս նման

զերազոյն բարուն. այո, նա աշխատուէ այս միաւորութեան կա-
սկերը այնպէս ամրացնել և տևողական կացուցանել, որքան կարելի
էր: Նորա զերազոյն խորհուրդը է միութիւնը սիրելի բանի հետ,
և ոչ մի իր աշխարհիս վերայ կարող էր նորա համար լինել սորա
փոխանակ:

Եթէ մարդս ինուէ մարդկային արժանաւորութեանը հա-
ւատարիմ, եթէ չկամի նեղքևել իւր անձը մինչև անասուն, ապա
ֆիզիքական սէրը կարող չէ երբէք հաստատուն լինել մենակ, այլ
նա մեծ կամ փոքր քանակութեամբ լինելու էր հոգևոր սիրոյ
հետ կապակից. որչափ առաւել մարդուս հոգին յառաջադէմ է
իւր ճշմարիտ կերպարանագործութեան մէջ, և որչափ առաւել
պայծառագոյն գիտակից է իւր կեանքի խորհրդին, այնչափ ևս
բարձրիգրնաւ հրամայող է աղնուագոյն սէրը, հոգու սէրը: Ընտ-
րութիւնը գեղեցկութիւնը մի անձին, այո՛ շատ անգամ բորբոքուէ
մանաւանդ ֆիզիքական սէրը, բայց սա տալով մեզ գուշակել նո-
րա նեղքին գեղեցկութիւնը, զարթեցնուէ գաղափարը այդ անձ-
նի կատարելութեան, որովհետև այս գաղափարը դրած է նոյնպէս
գեղեցկի գաղափարի մէջ:

Մարդկային սէրը ամփոփուած է մարմնաւոր և
հոգևոր սիրու սերտ միաւորութեան մէջ, ուստի յառաջանուէ
կարողութիւնը տևողական կերպով սեփականելու իւրեան սիրելի
անձը: Հոգևոր սէրը ևս աւելի մեծանուէ, երբ որ մոռածուէնք
սիրելի անձնի հոգևոյն նմանութիւնը մեր հետ, երբ նորա սիրտը
վերին չափով կրթած է, մծտաւոր է դէպ ի ճշմարտութիւն և
բարութիւն: Որչափ աւելի մեք կարող ենք զգալ սրտի գեղեց-
կութիւնը, այնչափ ևս յաղթող է հոգևորը սէրը մարմնաւո-
րին: Բայց որովհետև մարդկային սէրը մարմնաւոր գեղեցկութեան
գաղափարի հետ միշտ կապակցուէ մի նմանապիսի գաղափար հո-
գևոր գեղեցկութեան և կապակցութեան, և նորան նկարագրուէ
մոքով որպէս մարքուր երկնային էակ, բայց մարմնաւոր գեղեցկու-
թեան վերայ հիմնած մարմնաւոր սէրը ամենազգու ձգտողութիւնն
է. այս պատճառով և մարդկային սէրը չէ առանց մի զերազոյն
կարօտութեան խորին թէ հոգևոր և թէ մարմնաւոր կերպով մի-
աւորուելու սիրած անձնի հետ և աշխատելու միանձնաւորապէս
ունել նորան. նորա աչքում ամենևին մեծակշիռ է մի տևողա-
կան միաւորութիւն, նա աշխատուէ գտանել փոխադարձ սէր:

Ա՛յս պատճառով խնդրումենք մեք, այս տուրբ սեփականութիւնը ամրապահեաս առնելու համար, միաւորութեան յոդիլը կապակցել մարդու ամենատուրբ պարտականութիւնների հետ, այսինքն կրօնի, որ մեզ միաւորում Ա՛մենաբարձրելու հետ։ — Որանից ծագումէ ամուսնութիւնը։ Ով որ կարծումէ թէ ամուսնութիւնը մի մարդկեղէն գիւտ է, նա ոչ տեղեակ է բնութեանը և ոչ նորա խորհրդին։ Դա ունի իւր հիմքը ամենիւ մարդկային բնութեան մէջ, մարդուս մարմնաւոր և հոգեղէն գոյութեան մէջ. ամենաւերին խորհուրդը մարդկային կեանքի կացուցանումէ դորան հարկաւոր, ըստ որում դա յառաջադէմ է կացուցանում մարդկութեան խորհուրդը։ Մարդկութեան կեանքը բովանդակապէս, ունի այն խորհուրդը, որ լինի մի մեծ դաստիարակութեան դպրոց մարդկային հոգու համար դէպ ի օրէ օր աւելի վերին կրթութիւն և կատարելութիւն. և եթէ ստուգված բան է, որ մեր վերայ ամենաուրբ պարտականութիւն կայ տալու մեր իմացականութեանը այն հոգեղէն կերպարանութիւնը որ գերագոյնն է մեր գլուխեան մէջ, մեր կեանքի միջոցում նոյն և մեր մահուց յետոյ հոգաբարձու լինել որ նոքա, որ բանելու էին մեր տեղը, որ մեր զաւակները իրրև անդամք մանուկ սերունդի ստանային նոյն իմացական կրթութիւնը, այո՛ հասանէին մի աւելի վերին աստիճանի։ Միայն փոխադարձ հաղորդութեամբ և կապակցութեամբ միւս մարդերի հետ և ոչ թէ որպէս առանձնացած մարդիկ, որպէս միայնակեացք, հասանելիք բնութեան մէջ մեր ճշմարիտ նպատակներին. այսպէս միայն կրթվումեն զօրութիւնքը, կերպարանագործվումեն հոգու առաքինութիւնքը։ Ո՛չ պիտի լինէր մեր աշխարհաշինութիւնը առանց ընկերական կապակցութեան։ Մեք լինելու էինք կենդանի մեքենայք, մեք լինելու էին մարդաւեացք կամ երազամոլք, ըստ որում մեզ պահանջու էր ապարելը գործ դնելու առաքինութիւնը։ Փորձով յայտնի է թէ, որքան մեծագոյն է ընկերական կապակցութիւնը մի տէրութեան մէջ, նոյնքան և վայելչապէս յառաջադէմ է աշխարհաշինութիւնը։ Այլ ոչ մի կապակցութիւն չէ այնչափ մեծագոյն, ոչ միևը ըստ իւր էութեան այնքան առողջական, ոչ միևը չունի լցուցանելու այնքան կարեւոր և աղնիւ խորհուրդներ, որքան այն, որ հաստատել է մարդկային սէրը։ Ա՛յս պատճառով և սէրը է հիմքը ամենայն ընկերական կապակցութիւններին, որից յառաջանումէ ընտանեկան կեանքը։ Ամենա-

դեղեցիկ առաքինութիւնքը և վարժութիւնքը հոգու կատարելութեանն. զոր օրինակ ուրացութիւն ինքնասիրութեան, հնազանդութիւն օրէնքի տակ, անձնանուիրութիւն և անձնազոհութիւն միւսոցի բարօրութեան համար, ճգնողութիւն, են հոյակապ պաղարեւութիւնքը ընտանեկան կեանքի: Ի հայն ամուսնութեան մէջ կարելի է բոլորովին յուցանել երեխաների դաստիարակութիւնը. այս ամուր կապերով միայն, որով բարեգութ բնութիւնը ծնողների և երեխաների ընտանեկան կեանքը կապակցել է միմեանց հետ, կարող ենք մի այդպիսի գժուարին գործ տակնուվրայ անել և յաջողապէս աւարտել. մի գործ, որ իւր բովանդակութեամբ ունի այն վսեմաձեւական նպատակը որ է կրթել բոլոր մարդկութիւնը, կատարելագործել նորան և նախապատրաստել դէպ ի մի լաւագոյն կեանք:

Այսպէս, որովհետև ամուսնութիւնը է մի բնապատշաճ, ուրեմն հարկաւոր բան և մարդկային սեռի համար շատ մեծակշիռ է իւր հետևանքով, որովհետև նա ապահովում է մարդուս ամենապատուական սեփականութիւնը, կազմացանում հիմքը ընտանեկան կեանքի, նոյն և նախապիղծը ամենայն քաղաքական հաստատութիւնների, այս պատճառով և առանձին մարդը, եթէ կամէր իրաւացի կրել իւր վերայ մարդկային արժանաւորութիւնը և լրացուցանել առաւել սուրբ պարտականութիւնը, պարտական է յարգել և մեծարել ամուսնական կապերի սրբութիւնը թէ իւր և թէ միւսոյ մէջ, թող հազար հազարաւոր ամուսնութիւնք հաստատվէին ստորին շարժառիթներով և երկրորդական դիտաւորութեամբ. դոքա, այդ խորթ ամուսնութիւնքը են մարդկային ազգի անբարոյականութեան վիժածք, բայց դոցանով ամուսնութեան սրբութեան ճշմարիտ գաղափարը կարող չէ պղտորուիլ և ոչ աւելեաւորը չափով: Նոյնպէս համաձայն է այս գաղափարիս հետ միակնութիւնը միայն, ոչ բազմակնութիւնը. պատճառ, ճշմարիտ ամուսնութիւնը պահանջում է անձնանուիրութիւն կնոջ ու այլ մարդու կողմից, որպէս անձինք, այլ ոչ իրք. ուրեմն նա կարող չէ ոչ գոյքով, ոչ արծաթով, ոչ պատուով, այլ նոյն հատուցմամբ, փոխադարձ անձնանուիրութեամբ որպէս անբաժանելի սեփականութիւն (սիրով փոխանակ սիրոյ) հաւասարուիլ: Ահա մարմիս սէրը է և միւսէ անբաժանելի:

Ճշմարիտ սէրը միաւորում է երկու հոգիք, կատարեալով

մին: Ա՛յնուհետև մեք նայուածնիք մեր սրտի սիրածի վերայ որպէս մի էական մանրի վերայ նոյն ինքն մեզանից, և սկսուածնիք նոյնպէս խաղալ և միակերպ սիրով սիրել նորան ինչպէս մեզ ինքներս, այնպէս որ նոյնպէս անկարելի էր մտածել մեր անձը առանց այս սիրած բանիս, որպէս մեր անձը առանց մեզ: — Ա՛յժմ երևումէ մի որպիսութիւն, որին անտեղեակը ասումէ սառնութիւն սիրոյ, և նախանձախնդիրը յօժարութիւն դէպ ի փոփոխութիւն, դէպ ի անհաստատմունութիւն. բայց այդ որպիսութիւնը մի մեքով ԽԷՐՈ ՓԷՐՓՅՆ ԱՍՊՅՈՆՆ է, թէպէտ նա ևս բնական, բնութեան օրէնքի համեմատ, ունի մի տեսակ անկատարութիւն, այսինքն, այս որպիսութեան մէջ նոյնքան ևս հեշտ է լինում մի նոր բանի վերայ քանի մի ժամանակ մոռանալ հինը, ինչպէս ամենայն կենդանի տպաւորութեան մէջ, որ գործումեն մեր վերայ արտաքին նիւթերը, սովոր ենք փոքր կամ շատ միջոց մոռանալ նոյն իսկ մեր անձը, թէև մեք շատ սիրուածիկնք մեր անձը:

Մ՛եք մարդիկս, բնութեան օրէնքով, կիսով չափ շինչաւորք ենք, կիսով չափ հրեշտակք, մեք կէս մի պատկանուածնիք երկրին և կէս մի երկնքին: Ա՛յսպէս ևս սէրը, եթէ ճշմարիտ, բնական սէր է դա, ըմբռնուածէ բոլոր մարդու, թէ իմացականի և թէ մարմնաւորի զոյութիւնը. երբ որ դա տիրապետել էր մեր բոլոր զգայութիւններին, երբ որ դորա առաջին վայելքը և խռովալից ուրախութիւնքը ամենութեան առաջին միջոցում վերջացել են, այնուհետև սէրը զգայութիւններից կրկին վերադառնուածէ դէպ ի սիրտը և հաստատ տիրապետուածէ մարդուս ամենից զոյութեանը:

Սէրը զուգաւորուածէ բոլոր էակները. տոհմութիւնը բաժանուածէ նորանից: Կարօտութիւն և ցանկութիւն են սիրոյ ուղեկիցքը: Պղատոնը ասումէ. «Սէրը է ցանկութիւն միանձնաւորապէս ունենալու բարին: Ա՛յս ցանկութիւնը յայտնվումէ զուտ ակադործութեամբ գեղեցկի մէջ թէ մարմնաւոր և թէ իմացական մեքով: Ա՛յս զուտակադործութիւնը որ մարհկանացու մարդուն տալիս է մի տեսակ անմահութիւն, է մի աստուածեղէն գործ, և այդ պատճառով կարող է միայն կատարուիլ գեղեցկովը և ոչ տգեղովը»:

Բայց սէրը ունի իւր սահմանքը. մի կատարեալ միաւորութիւն հոգիների, անպատշաճ է մեր երկրաւոր կեանքի համար: Ա՛յս պատճառով Պղատոնական սէրը չափից դուրս դասալիարական է

մեր հասնի. պատճառ, սէրը իրողապէս չէ մի լոկ մտաւորական պատկեր, որովհետև անպատճառ պիտոյ է նորան, ինչպէս գաղափարականից յառաջանում իրողականը, յետ դառնալ դէպ ի ըստորինն, բայց առաւել պղտոր գաւառները զգայական աշխարհի։ — Զգայականութիւնը է մի նոյնպիսի հարկաւոր յատկութիւն մարդուս մէջ, որպէս բանականութիւնը. միջնորդը երկուքի մէջ է հաստատողութիւնը։ Ահմարիա գործական փիլիսոփայութիւնը առում է. «Մարդս պարտ է լինել մարդ, այսինքն, նա չէ պարտ արուեստականութեամբ ուրանալ այն բանը որ պատկանում մարդկային բնութեանը։ Եթէ Պլատոնի հետ կամէինք ազատել մեր անձը ամենայն զգայականութենից, այս նոյնքան և տանելու էր մեզ դէպ ի մոլութիւն, ուշադի այն, եթէ հետևելով Սոփոկեան փիլիսոփաների վարդապետութեանը, կամէինք բնաջինջ առնել մեր մէջ բոլոր կիրքերը։ Եւ այս տեղ և այն տեղ պիտի շեղուէինք այն ճանապարհից որ հասուցանում մեր կեանքի ահմարիա նպատակին։

Սէրը ընդհանուր իմաստով է մի զգացողութիւն որ հիմնած է ձգտողութեան վերայ դէպ ի մարդիկ։ Սէրը և զգացողութիւնը են երկու պլեսաւոր յայտարարքը սիրոյ։ Խարեկամութիւնը է զգացողութիւն մի առանձին բարեացակամութեան. դա, առաւել կրասեր և առաւել ծանրաբարոյ քոյրը սիրոյ, կարող է նոյնպէս տեղի դատնել սեռի զանազանութեան մէջ։ Զգացողութեան մասին, սէրը կամ վերաբերվում դէպ ի հոգեղէն և մարմնաւոր վայելքը միանգամայն, կամ թէ դէպ ի մարմնաւորը միայն. դրանով որոշվումեն միմեանցից Նոբբ և Խոչոբ գէպլան սէրը։ Վերջինս է մի բնական դրդումն, որ պատկանում բոլոր շնչական աշխարհին որպէս բնական ազգեցութիւն։ Մարդուս միայն, բայ ի բնական ազդութենից, տուած են այլ և աւելի վերին օրէնք բանականութենից։ Մարդս, իբրև մտոն մարմնեղէն աշխարհի, են. թարկուած է միայն բնական ազգեցութեանը որ մի երկրաւոր, եղջական բան է, որ, ինչպէս իւրաքանչիւր դրդումն մարդուս մէջ, պիտի կատարէ մի տորակարգ պաշտօն. բայց որպէս բանաւոր էակ է նա նոյնպէս օրէնսուս բնութեան, հրամայող ինքն իւր վերայ որպէս մի զգայական էակի վերայ։ Ընդհանուր մարդկային հոգին կառավարվում ամենևին այլ, աւելի վերին օրէնքով, քան թէ երկրային կենդանի օրէնքն է։ Դա աւելի տպաւ է քան թէ լոյսը, նա չէ

ստորադրած ոչինչ դէպ ի յաճ ճնշոյ ծանրութեան: Ա՛ր մտա-
ծութիւնների թռիչքը մի սեկունդի մէջ կարող է բոլոր սիեկլը-
քը ծայրէ ծայր անցանել — մի ապացոյց, որ մեք անմահ ենք: —
Ճշմարիտ մարդու համար, որ դիտէ իւր կոչումը դէպ ի անեզա-
կանութիւն և մշանջենաւորութիւն, պարտականութիւն է գոր-
ծել որպէս ազատ էակ և բարձրացնել իւր անձը շնչական աշխար-
հից վեր: Այս պատերազմը կրկրաւորի և ղեկավարի ընդդէմ, չէ
մի հեշտ բան, և այդ պատճառով նոյնքան ևս աւելի պատուական
է յաղթութիւնը:

Ռաբելաս-ին է հոգիների ամուսնութիւն, «էրը է ամուս-
նութիւն հոգիների և մարմինների: Առաջինը է գաղտղութեամբ
և բանականութեամբ յառաջացած ղեկավարութիւնը որ գլխից դի-
մումն դէպ ի սիրտը. սորա հակառակ սէրը սրտից դիմումն դէպ
ի գլուխը և այն ժամանակ միայն արդարանում բանականութեան
առաջև: Այս բանիս պարտ ենք ուշի ուշով մտադիր լինել մեր
ամուսնակցի ընտրութեան մէջ, որի վերայ խօսք կ'լինի յետոյ: Ա-
մենայն ցանկութիւն թէ նիւթական և թէ հոգեղէն քաղցրու-
թեան, ամենայն կարօտութիւն բարեկամութեան և սիրոյ ձգտու-
մ դէպ ի միաւորութիւն ցանկալի բանի հետ, որովհետև նորա
մէջ գտնում իւր յատուկ կեանքի ամենաքաղցր վայելքը: Ա՛ստ
մարդկութիւն պիտոյ է մի իմաստուն բնական օրէնքով մեր գոյու-
թիւնը զգալ ոչ թէ մեր մէջ, այլ անդրադարձաբար, ասես թէ,
մեզանից դուրս գտանուած մի բանի մէջ, որ մեք որոնում ենք,
որի համար մեք ապրում ենք: Այսպէս մեր կեանքը ճշմարիտ սի-
րով, որ սրբացուցած է ամուսնութեան շաղկապով, գտանում
մի ներդաշնակութիւն միշտ դէպ ի մաքրութիւն յառաջադէմ,
միտակարօտ ցանկութեան:

Հոգեղէն ճանապարհը էակների միաւորութեան, դրած է
այն բանի մէջ, որ մեք աշխատենք բաղմապատկել հնարները այն
միաւորութեան որին ցանկանում մեր հոգին. և դորա համար
կարօտ ենք նոյնպէս մերկ գոյութիւններին, մանաւանդ թէ առա-
ւել աղնիւներին: Ա՛նք մանակից ենք մեր սրտած առարկայի ներ-
քին պատուականութիւններին: Սրտածի աչքի, կերպարանքի մէջ
կարդում ենք մի աղնիւ հոգու կնիք, և խօսակցութեան մէջ յայտ-
նում ենք մեր մտածութիւնքը, որոնում ենք միաւորել մերոնքը մի-
սեի հետ և սորանց մերոնց հետ և վերջապարձաբար, մի հասարա-

կաց օգտաստացութեամբ, աւելի կատարեալ դառնալ: Մի հագլուխ մարդը է մի լոկ «էքնոյան», անկատար էակ. բայց երբ որ այլ և կին կանդնած էին միմեանց մօտ, շինուածն միայն մարդկութիւնը կատարեալ. պատճառ, մինը լցուցանում է միւսի թերութիւնը: Ա՛օ-լութիւնը և մեղմութիւնը, կարող կամքը և քնքուշ զգացողութիւնը, ծարաւը գործերի և խաղաղ տնասիրութիւնը, ձգտողութիւնը դէպ ի ընդհանուրը և սէրը դէպ ի մանուածոյը ոչ ոք կարող չէ այնպէս ժողովել և ամիոխել իւր մէջ, որ դոցանից մինը կամ միւսը չլինէր նախագահ:

Մի ամենևին հոգեղէն պղատոնական սէր, ինչպէս ասացի վերևում, ընդդէմ է մարդկային բնութեանը: Ամեն մի հոգեղէն վայելչութիւն արդարև աւելի տևողական է քան թէ որ և իցէ միւս, բայց դա չէ հանգստացնում սիրտը, այլ միայն գլուխը, որովհետև իմացականութեան և սրտի սերտ լծակցաբար և դաշնակաւոր կրթութիւնը կացուցանում է միայն մի ճշմարտապէս կրթած մարդկային հոգի: Միւոյ մաքուր երկնային բոցը, եթէ առնուէնք դորան տևողապէս, չսիրից դուրս նուրբ է մարդկային էակի համար: Ա՛յդ պատճառով բնութիւնը տուել է մեզ սիրոյ ազնիւ վայելքը մի մարմնաւոր կերպարանքի մէջ, բայց մեզ արժան չէ այդ վայելքի գերագոյն հոգեպայծառ քաղցրութիւնը որոնել այն տեղ, ուր մի թռուցիկ րոպէ երկրաւոր միաւորութեան խաբում է մեզ. այլ մանաւանդ հարկաւոր է դորան որոնել այն առաջնին բաղդաւոր գիւտի մէջ, այն անպատմելի քաղցր րոպէի մէջ, ուր երկու հոգիք հայեացքով միմեանց ասում են այն բանը, ինչ որ հազար լեզուներ կարող չեն բացայայտել, այսինքն ին նոյա «էքնոյեն գիեանց»: — Ա՛ւ ինչ է ապացուցանում այս սէրը, այս երկնաւոր լոյսը Ա՛նեզրականի: Ի՛նչ բան եզրակացնելու տալիս է մեզ նորա գոյութիւնը, նորա անտարակուսելի լինելութիւնը:

Ոչ մի մտածութիւն չէ մեզ այս տեղ այնքան մօտաւոր, ինչպէս այն մտածութիւնը որ բոլոր ժամանակների իմաստունքը և հարազատ մարդկային զգացողութիւնը այնքան պարզ ու բացայայտ քարոզած են և յաւիտեան կը քարոզեն. այսինքն. Մեր մարդիս վեր ոչինչ այս երկրի համար սահմանուած, մեր անմահ են, մեր հոգիք ապրելու են աւելի գեղեցիկ, աւելի կատարեալ կեանքով: Մի հագլուխ մարդը շատ անգամ պատերազմ ունի ինքն իւր հետ, որովհետև նա բաղկանում է երկու հակառակամարտ սկզբունքից, երկրաւոր և երկ-

կնային սկզբունքից. սէրն է միայն, որ հիւսում դաշնակութեան կապը երկնքի ու երկրի մէջ. ամուսնութիւնը սրբացնում և զօրացնում այս կապը, և խաղաղութիւն և միաբանութիւն, բարեկամութիւն և կեանքի բաղդատութիւն են դորա ուղեկիցքը:

Բարոյական ու ֆիզիքական մտքով, թէ անհատի և թէ բոլոր մարդկային ազգի օգտի համար, ամուսնութիւնը շատ մեծագլուխ բան է. այդ պատճառով նորան գտանում ենք բոլոր քաղաքական հասարակութիւնների մէջ, երբ որ ժողովուրդը սկսել էր միայն հրաժարուիլ կոպիտ բնական դրութենից և աշխարհաշինութիւնը մի քանի քայլափոխք յառաջ էր գնացել: Ամուսնութեան մէջ միայն, կինը նոյն չափով լրանում տղամարդով, որչափ տղամարդը կնոջով, — տղամարդ ու կին բաղկացնում են մի լիակատար մարդ: Այս խօսքիս քանչ հաստատութիւն են տալիս այն յարակից յատկութիւնքը որ երկուքի մէջ ակնարկում են դէպ ի միմեանց կողմը: Կնութիւնը այնպէս զուգել է այր ու կին, որ ոչ ոք կարող չէ բաժանել նորանց. ինչ բան կարող էր առանց կանանց բազմութիւն գոյացնել: Պոռ կարող էիր ընտանութիւն ունենալ մի կնոջ հետ, որի հետ ամենևին սառն է քո սիրտը, միայն ժամանակը կարճացնելու համար. բայց յառաջ քան թէ նկատել էիր, քո սիրտը կ'ազդէր նորա սրտի վերայ. դուք կարող չէք անընտրողապէս բաժանուիլ միմեանցից, թէպէտ այդ տեղ ներգործող եղած չէր և ոչ ամենափոքր հաճութիւն կամ սէր: Այս զուգաձայնութիւնը է մի ներքին, ծածուկ զգացողութիւն այս աստուածային խօսքերի. «Լաւ չէ մարդուս լինել միայն»: Եւ արդարև առանց Եւայի, Ադամը ընչաւոր է, և Եւան առանց Ադամի մի մենաստանի կոյս է: Պարզ ասեմ, ոչ մի սեռը չունի և ոչ ամենափոքր արժանաւորութիւն առանց միւսի. բայց միասին առած, կացուցանում նորա մարդկութիւնը:

Յուրաքանչիւր ոք մեզանից որ ծանրութեամբ մտածել էր ամուսնութեան սրբութեան վերայ, նորա սիրտը պիտի վկայէ, որ Յիսուսի կապը Ճշմարիտ սիրով միաւորելով մեզ, անչափ շատ ձեռնտու էր բոլոր մարդու աշխատագործութեանը իմացական, բարոյական, կրօնական, պարզ ասեմ, ամենայն մտքով. պատճառ, Ճշմարիտ սէրը ըստ իւր ծագման մաքուր և անապատ է, ինչպէս նոյն իսկ աստուածութիւնը: Եւ այդ պատճառով նա հաշտեցնում մարդկային բնութիւնը աստուածութեան հետ, և ըստ հին

գեղեցիկ առասպելը, անմիաբանութեան աստուծոյ գրկախառնուածեամբ գեղեցկութեան Աստուծոյ հետ յառաջացաւ Հարմոնիան (Դաշնակութիւնը), դուստրը Մարսի և Վենուսի։

Ընտանեսին կեանքը, սորա հակառակ, ունի անհամար վնասներ, թէ այրական և թէ կանացի սեռի համար, և արդարև պիտոյ էր մեզ մի ամբողջ դիրք շարադրել, եթէ կամիմք մի ըստ միոջէ խօսել զոյս վերայ։ — Տղամարդի մէջ, եթէ նա ապրումէ անկին, հիւանդութեան միմեանց ամենայն անչափաւորութիւնքը։ Նա վարումէ կամ թէ մի խառնագնաց, անսանձ, անկարգ կեանք որով աւերումէ իւր անձը թէ ֆիզիքաբար և թէ բարոյապէս, ըստ որում, ձգելով իւր անձը, խոտորելից ուրախութիւններուն մէջ և անարժան մարդերի գիրկը, փոքր է պատահումն որ ըզգաստանար և վերադառնար դէպ ի մտախոհութիւն։ — կամ թէ նա շատ փոքր մասնակից է մարդկային ընկերութեանը և կեանքի թոյլտուած վայելչութիւններին. նա տպրումէ առանձնացած, ինքն իւր մէջ կծկած, անձնատուր է լինում իւր օտարոտի կամքին, ընդունումէ ամենայն տեսակ առանձնութիւնք, օտարութիւնք, այլանդակութիւնք, ունի մի չափազանց սէր դէպ ի շուներ, կատուներ, թռչուններ, և այլն, կարճ ասեմ, ով որ կամի ծանօթանալ մի անամուսին տղամարդի այլանդակ բարք ու վարքին, թող կարդայ Աոցեբու գերմանացի հեղինակի գրուածքը «Der Hagestolz» մականգրութեամբ։ Ընկերդժնդակութիւն, կամակորութիւն, ինքնասիրութիւն, յողդողդութիւն և տհաճութիւն իւր և աշխարհի վերայ շատ անգամ ուղեկից են այդպիսի անամուսին մարդուն նորա կեանքի երեկոյեան ճանապարհի վերայ, և իրաւացի է ասել սուրբն Օգոստինոս թէ «Nuptiae sunt infirmitatis et humanitatis solatium». այսինքն «Ամուսնութիւնը է դեղ տկարութեան և մխիթարութիւն մարդկութեան»։

Սէր և ամուսնութիւն են երկուքը շատ ծանրակշիռ բաներ. դորա այնպէս խոր և սաստիկ կապակցութիւն ունին կեանքի ամենասուրբ որպիսութիւնների հետ, դորա թէ մարմնեղէն և թէ հոգեղէն մարդու վերայ ունին այնպիսի նշանաւոր ազդեցութիւն, որ թէ հին և թէ նոր ժամանակների արժանաւոր մարդիկը, փիլիսոփայք և բնաքննիչք շատ նշանաւոր և գեղեցիկ բաներ դորա վերայ ուսուցել ու գրել են մինչև այսօր։

ՅՕԳՒՒԱԾ 2։

Սիրոյ իսկութիւնը հնաոգւոտել, չէ առանց դժուարութեան. այս պատճառով զանազան փիլիսոփայք սահմանել են նորան և զանազան կերպով։ Ոմանք ասումեն թէ սէրն է մի ջանադրութիւն իւր յարակցութեան մէջ դէպ ի մի առարկայ, տեղիք տալ նորա պատուականութիւններին որ մեք կենդանի սրտով խոստովանուիմենք. միւսերը ասումեն դորան մի ուրախութիւն որ ներգործումէ մեր մէջ մի մարդու հոգիացած քաղցրութիւն, կամ թէ մի խորին հաճութիւն և հաւանութիւն մի առարկայի։ Ա՛յլ միւսերը նայումեն սիրոյ վերայ, որպէս թէ էր դա մի ցանկութիւն հաղորդակցելու մի անձնի հետ յօժարութեամբ, նորա օգուտը յառաջադէմ կացուցանելու համար, կամ թէ միաւորութիւն մի բանի հետ, որ պատրաստումէ մեզ հաճութիւն։ Ոմանք նկատումեն սէրը որպէս ախտաւոր ցանկութիւն դէպ ի հանդիպակաց իրը. Պաւրուս գերմանացին որոնումէ սիրոյ էութիւնը այն ձգտողութեան մէջ, որ նմանը ունի դէպ ի նմանը. Ռուրդախը այն ախտի (իմացութեան) մէջ, որ մեր ճշմարիտ գոյութիւնը ամիոփվումէ միայն մի այլ միւսի հետ միաւորութեան մէջ. Լոնընբերդ և Ֆիբաուեր դնումեն նորան մինչև անգամ սեռական ձգտողութեան մէջ։ Ռայց սէրը իսկապէս չէ ոչ մի լոկ ախտ, ոչ մի կիրք, այլ մի ձգտողութիւն որ ըստ իւր բնութեան կամենումէ միաւորութիւն նմանի հետ, ըստ որում մարդս սերտ միաւորութեամբ նորա հետ խոստովանումէ իւր մէջ մի կատարեալ գոյութիւն։ Ա՛յսպէս ահա երևումէ արդէն եբրեայի մէջ սէրը դէպ ի ծնողք, դէպ ի եղբայր ու քոյր, սէրը դէպ ի Աստուած, դէպ ի կրօնը, դէպ ի աւաքինութիւնը և այլն։ — Սէրն է մի զարմանալի, վերին գաւառներից եկաւոր, մարդկային բնութիւնը բարձրացնող ձգտողութիւն, որ ունի իւր օթեւանը մարդուս աւելի ազնիւ կիսամասնի մէջ։ Ա՛յս պայծառակերպումէ մարդու սիրտը, ազգացնումէ մարդկութիւնը աստուածութեան հետ և յայտնվումէ իբրև մի անպատմելի կարօտութիւն դէպ ի այն ամենամաքուր հոգևպայծառ զգացողութիւնը մի գերակատար գոյութեան, սերտ միաւորութեամբ ազգակից բարու և գեղեցկի հետ. այս պատճառով երգումէ բանաստեղծը.

«Լոյս վարդակարմիր հիւսած,
Է սիրոյ առաւօտեան զգեստը,

Արարչի ձեռքից դուրս թողած
Եւ Գրացիաների ճարտարութեամբ հնարած,
կեանքի երանութեան համար»։

Այսպէս է յայտնվում բուն մարդկային սէրը որպէս մարդկային բանականութեամբ և նորա մէջ պայմանաւորուած ձգտողութիւն որին ընդունական են բանական էակներ միայն, որ և բանականութեան լուսի հետ միասին շիջանում։ Ինչքան որ սեռական և ամուսնական սէրը համեմատ է սիրոյ էութեանը առհասարակ, այնքան էս աղնիւ է նա, այնքան էս երջանկացուցիչ ժամանակի և միանձնաւորութեան համար, այնքան էս բաղդաւոր է ամենալաւ կրօնի հիմնադրի ձեռքով սրբացուցած դաշնը ամուսնութեան։ Մի տրտում բան է, ասել, որ շատ տեղ, այո և մեր Հայերի մէջ, մանաւանդ աղքատ ժողովրդումը, զանազան արգելքով դժուարացնում են ամուսնական դաշնաւորութիւնը, աւելորդ և անիրաւ հարկեր դնելով հարսն ու փեսայի ծնողների վրայ այնպիսի սուրբ խորհրդակատարութեան միջոցին, ուր տալն ու առնելն արծաթի վերայ խօսք էս պիտի չլինէր, ուր միայ թէ աղաղակ և խռովութիւն Աստուծոյ առաջի մէջ։ Նրա պատճառով մէջ էն լինում այսպիսի անկարգութիւնք, ըստ որում պսակակատար քահանան ամուսիններին պարտականութիւնքը հասկացնելով հարսին ու փեսային և օրհնելով նոցա զուգաւորութիւնը, հեռանում իսկոյն, և ինչ որ կ'ուզարկին նորան, ընդունում համեստութեամբ։ Ա՛շմարիտ, ուր ամուսնական զուգաւորութիւնը հանդիպումն դժուարութիւններին, դորա հետևանքը են վայրենի ամուսնութիւնք, վատթար դաստիարակութիւն մանուկների, անչափ շատ ծնածներ ամուսնութենից դուրս, մահացութիւն մանուկների, կեանքի առաջին տարիներում, և աղքատութեան ու աղտի տարածութիւն։

Աղտը իւր բոլոր խորհուրդներով, իւր բոլոր ամենավերին կարիքով, ուրեմն ամենավերին, ամենաընդհանուր և ամենակարևոր բանը մարդուս ընկերական որպիսութիւնների համար, է սիրոյ նիւթը։ Առանց մարդուս ոչինչ լինելու էէր աշխարհի վերայ, որի հետ արժան էր առանձնականին աշխատել միաւորուիլ սերտ կապով։ Միայն սէրը դէպ ի Աստուած է այն մի հատը որ կրօնասէր սրտի մէջ բարձրանում ամենայն մարդկեղէն բանից վեր, և հոգևոր միաւորութեամբ նորա հետ, ղգում դերագոյն երանութիւն. մի սէր,

որ ցաւելի է ասել, շատ անգամ շնչուելով ճշմարտութենից, դառնում մի կրօնական մոլութիւն։

Աչքը ականջի է։ Աչքը հնարաւորում փոխադարձ սէր. առանց սորան կարող չէ նա հասանել իւր վերջին նպատակին, որ է զգալը մի լրացուցած գոյութիւն։ Նոյպէս պիտոյ է հասկանալ սիրոյ բոլոր տեսակները, մանաւանդ սեռական և ամուսնական սէրը, ոչ այնքան ընդհանուր մարդասիրութիւնը։ Փոխարինած սէրը միայն պատրաստում առաւել կենդանի հաճութիւն, զգացողութիւնը սիրոյ. չփոխարինած սէրը շինում սէրը տանջանք որ նոյնքան ևս ցաւեցուցիչ է, ինչքան աւելի սաստիկ և ջերմ է սէրը, և ոքան առաւել արգելք ու խափան հանդիպումն նորան։ Նոյպէս սէրը կարող է լինել երբեմն ամենամեծ քաղցրութեան, ամենավնասին երանութեան աղբիւր, իսկ երբեմն անախորժութեան, ցաւի և յուսահատութեան աղբիւր, — նորա ախտերը անսահման են, անպատմելի և շատ անգամ անց են կենում բոլոր երկրաւոր գոյութեան սահմաններից դուրս։

Որովհետև հոգեղէնը մարդուս մէջ երբէք դուրս չէ երևում ամենևին մաքուր, որովհետև նա միշտ շատ թէ փոքր չծակից է նիւթականի հետ, այս պատճառով հոգեղէնի հետ սիրոյ մէջ խառնվում ոչ թէ միայն երկնային ախտ, այլև մի նիւթական ցանկութիւն։ Նոյպէս մեկնելի է, թէ ինչպէս սէրը իբրև մի տնկակից և բնապատշաճ ղրդումն կարող էր ընդունել իւր ուղեկիցք ախտը և կիրքը։ Ինչքան որ սաստիկ և բորբոք կիրքով խառնուած է սիրոյ հետ նիւթական զգացողութիւնը, այնքան ևս հեշտ դառնում նա ախտ, քարշում տանում իւր հետ բանականութիւնը, շինում կոյր, անխոհեմ, կասկածոտ, խառնափնդորում զգայութիւնքը և գաղափարող զօրութիւնը, կուրացնում միտքը, կաշառում բանականութիւնը, արբեցնում երևակայութիւնը, ուտում և մաշում հոգու և մարմնի զօրութիւնքը, յառաջացնում սեռական սիրոյ մէջ նախանձախնդրութիւն և պատրաստում իւրեան ու միւսերին մի թշուառ կեանք։ Սէրը, խօսելով Յան Պաուլ գերմանացու հետ, է արեգակնային մօտաւորութիւնը աղջկներուն, այո դա է մի այդպիսի Վենուսի միջանցումը գաղափարական աշխարհի արեգակի միջով. այս գալնան մէջ երևումն սոխակները մինչև ամաւնային արևադարձը. հարսանիքի օրը է նորա առաւել շատ երկայն օրը։ Յետոհետև սառնան ար-

դալուկ չէ տանուամ բոլորը, բայց ամեն օր մի կոտոր։ Կեղեւայ կապանքը ամուսնութեան կաշկանդումն վերասլացութեան թեւերը եւ ամուսնութեան անկողինը երեւակայութեան համար է մի ամրոց եւ բանտ ցամաք հացով եւ լուկ ջրով։ Ամուսնութիւնը բանաստեղծական աշխարհը դուրսից պատումէ իրականութեան կեղեւով, մանաւանդ ժողովրդի ստորին կարգերի մէջ, ուր աշխատանքի ձեռքը կոշտ ու ձախորակ են, եւ այս պատճառով դժուարութեամբ միայն պահպանումն եւ քարշումն գաղափարական հիւսուածքի նուրբ թելը։

Սիրք դառնումէ սերը, երբ որ ստորին ցանկական կարողութիւնը ազգակից կատարելութեան հայելի տեսութեամբ գրգռումէ եւ դորա նիւթը դառնումէ նիւթապէս ցանկալի։ Այս կրքոտ սիրոյ ալքիւրքը են կամ յաճախ լցուցանելը այս յօժարութեան, կամ թէ դորա խափանարար պատճառքը։ Մի այդպիսի սէր սակաւ անգամ երջանիկ է, եւ եթէ դորա պատճառն է պակասութիւն փոխադարձ սիրոյ կամ թէ պակասութիւն լցուցանելու յօժարութիւնը, այնուհետեւ ունի դա բոլոր միասակար հետեւանքը որ կարող էր յառաջացնել մի սաստիկ, բայց անլցուցանելի ճնացած կարօտութիւն։ Այնուհետեւ լինումէ նա մի ուտող ու մաշող կրակ, նա խլումէ տանջուածից ամենայն հանգիստ, ամենայն քուն, անդադար հալածումէ նորան, դառնացնումէ նորա համար ամենայն ուրախութիւն կեանքի, քար ու քանդ է առնում նորա առողջութիւնը եւ կործանումէ հոգի ու մարմին միանգամայն։ Որա հակառակ, փոխադարձ սիրով բաղդաւորուած մարդկային սէրը առանց որ եւ իցէ կրքի, է մի ճառագայթ երանական աշխարհներից, որ մեր կեանքը զարդարումէ մի պայծառ, վարդակարմիր քողով, մեզմ եւ քաղցր ջերմացնումէ մեր սիրտը եւ տալիս է մեզ մի աւելի գեղեցիկ աշխարհի երանութեան նախաճաշակ։ Այսպէս յայտնվումէ յաճախ սեռական սէրը մանուկ սրտերի, որ եւ ունի այն սեփական յատկութիւնը, որ նա սիրումէ առանձնութիւն, հոգեզմայլ տեսարաններ եւ մանուշակը։ Նա ամօթխած է, մտամոլար, կրակոտ կամ սիրուց հալ ու մաշ, միտ գնելով բնութեան խառնուածին. մի այդպիսի սէր շուտով ածեցնումէ հոգու զօրութիւնքը, գուշակումէ կեանքի խորհուրդը եւ նմանափոխումէ երկու սիրելիների հոգին ու մարմինը։ Մի այդպիսի ճշմարիտ սէր կլթումէ եւ կենդանացնումէ իմացակա-

նուիրելու, պայծառացնելու եւ վերհամբարձելու սիրտը, շարժելու զգայութիւն ու միտք, տալիս է կրակ սրամտութեանը եւ երեւակայութեանը, քաջացնելու դատողական զօրութիւնը եւ կորովամտութիւնը. նա բացում է սիրտը ամենայն զեղեցիկ, մեծ, անշահախնդիր, ազնիւ եւ վեհ զգացողութեան համար եւ բարձրացնում նորան դէպ ի կրօնասիրութիւն. նա է աղբիւր ամենայն առաքինութիւնների, նա ոգեւորում իւր սիրածի բարին եւ յառաջադէմ է կացուցանում նորան իւր յատուկ անձնի զոհաբերութեամբ, նա շինում հեզ, տեղատու, հաճոյակատար, կարեկից, նա է ամենալաւ դաստիարակը մարդու. նա մեղմացնում խոշոբարբարոն, հեզացնում վայրենին, անխօսին տալիս է ճարտար լեզու, ժլատին առատասրտութիւն, ծոյլին արիութիւն, — կարճ ասեմ, նա ամենայն մտքով շինում մարդս աւելի լաւ եւ աւելի առաքինի: Որանի՞ ամեն մարդու, որին բաղդատորում մի ամուսնութիւն որ յառաջացած է այդպիսի սիրուց: Մի ֆրանսիական բժիշկ Պալօսինի անուն իւր գրուածի մէջ, մակագրութեամբ Tableau de l'amour, տպած 1689 թուակ. ասում է. «Սէրը է մի կոյր երեխայ որ կարող է չարի եւ բարու պատճառ դառնալ, միա դնեղով թէ ինչպէս կը խառնուի նորա հետ: Սէրը է աղբիւր առաքինութեան եւ արատի, եթէ նա պատշաճապէս կամ անպատշաճապէս, հոգեղէն կամ շնչաւոր կերպով լցուցանվում է: Ով որ գիտէ թէ ինչ է աշխարհս եւ սէրը, նա գիտէ ամենայն բան»:

Ինչպէս ասում մի հին ճշմարիտ առած, ամուսնութիւնքը հաստատվում երկնքում: Ամենայն ստոյգ ամուսնութիւն, ամենայն ամուսնական կապակցութիւն ճշմարիտ սիրով եւ ապատ ընտրութեամբ, հաստատվում երկնքում, կամ, թող ասենք ուրիշ բառերով, սէրն է որ շինում ամուսնութիւնքը, եւ սէրը, ինչպէս ասացինք արդէն, նոյնպէս իսկ բղխում երկնքից, որպէս լոյսը արեգակից: — Այդ շատ ամուսնութիւնք, շատ հարմնութիւնայորութիւնք հաստատվում ոչ թէ երկնքում եւ սիրուց, այլ այս տեղ, երկրում, հայկերութիւնների եւ զանազան հրաւիրանքի մէջ, եւ ինչ մարդկերի միջնորդութեամբ. պատաւ մօրաքոյրերի, մօրերի եւ մեծ մօրերի: Յաւելացրու սորա վերայ այն ամբոխալից նիւթական հաշիւը թէ քանի հարիւր կամ հազարներ էին հարմնաբաժինքը. արդարեւ մի խելագար գործ, որ կարող էր լինել — եւ շատ անգամ եղած է արդէն — մի խորին թշուառութեան պատճառ ամուս-

նակիցների համար: Այդպէս պիտոյ է պատանի մարդիկ շատ անդամ ամուսնանային, առանց ճանաչելու միմեանց, առանց սիրելու միմեանց, հնազանդելով միայն իւրեանց բարերարների կամքին: Եթէ այդ պատանի զոյգի սիրտերը դեռ ևս ազատ էին, եթէ նոցա բնութիւնքը չէին շատ միատեսակ կամ շատ հակառակ միմեանց, եթէ գոանվուածքի նոցա մէջ այն անբաժանելի, ալրդէն յառաջուց յիշած ձգտողութիւնը դէպ ի իրեար — եթէ ունին նոքա ճշմարիտ կրթութիւն հոգու և սրտի, չեն նոքա տարիքով շատ անհաւասար, երկուքն ևս հոգով ու մարմնով առողջ են, ապա պիտոյ էր սոյան ասել մի բաղդաւորութիւն. բայց եթէ այս յաջող պայմանքը չկային, այնուհետև պիտի յառաջանար մի անբաղդ ամուսնութիւն: Արդարև մեր ասիական ազգերի մէջ անբաղդ ամուսնութիւնքը չեն այնքան բազմաթիւ ինչքան Եւրոպայում, կամ, աւելի ուղիղն ասենք, շատ սակաւագիւտ են: Ո՛նչ է սորա պատճառը. մի՞թէ Ասիացիք աւելի լուսաւոր և կրթած են, քան թէ Եւրոպացիք. ոչ. այլ դոյն իսկ պատճառով որ Ասիացիք շատ և շատ պակասաւոր են կրթութեամբ և դոցա մէջ կանայք չունին ոչինչ ընկերական խորհուրդ, այլ մի անկիւնում որպէս մի իր ձգած ու փակած են, առանց ազատութեան, առանց իրաւունքի. այդ պատճառով ահա և Ասիացու ընտանեկան կեանքը անցանուամէ հանդարտութեամբ. պահանջողութիւնքը կանանցից շատ փոքր են. կանայք հնազանդ աղախինք են իւրեանց տղամարդերի և ոչ թէ խորհրդակից բարեկամք: Ասիացոց կանայքը զուրկ լինելով ազատութենից և իրաւունքից, որովհետև տան մէջ բացարձակաբար հրամայողը և կառավարողը միանգամայն տղամարդն է, կարող ևս չեն ազատութիւնը դէպ ի չարը գործ դնել և բաբեղնեան հնոցը բորբոքել իւրեանց տղամարդի համար. բայց Եւրոպայում ազատ լինելով կանայքը իւրեանց կրթութեան պատճառով, կարող էին դուրս դալ ճանապարհից և շատ անգամ թունաւորել ամուսնական կեանքի բաղդաւորութիւնը: Այդ պիտոյ ասել, որ Եւրոպացոց կանայքը իւրեանց բոլոր կրթականութեամբ և ուսմամբ, որոնցից ամենևին զուրկ է մեր ասիացի կինը, չեն ստանում միշտ այնպիսի դաստիարակութիւն, որ հարկաւոր էր կանացի կոչմանը և ամուսնական կեանքի բաղդաւորութեան համար — և այս պատճառով կեանքի զանազան դժուար ու խառնակ պայմանների մէջ այո տեղիք ունէր տղամարդը տհաճելու, դանգա-

տելու իւր ամուսնու վերայ։ Մենք չկամինք անբաղդ ամուսնութեան մէջ միշտ մեղապարտ կացուցանել կինը. կայնի այո և վայրկեան, անխոհեմ, խստասիրտ և անբարոյական տղամարդիկ որոնց կողքին դժուար թէ մի աղնիւ, առաքինի կին կարող էր իւր անձը երջանիկ համարել։ Այլ մեր ասիական ընտանեաց մէջ մի անբաղդ ամուսնութիւն, կանանց անազատ դրութեան մէջ, հազարապատիկ անբաղդ է քան թէ Եւրոպացոց մէջ։

Հետ մտադիր, երբ որ ամուսնութեան վերայ խօսք է լինում, աստուծեն Պաւղոս Առաքեալի հետ. «Ով որ ամուսնանում, լաւ է առնում, բայց ով որ չէ ամուսնանում, աւելի լաւ է առնում» և սորանով կամիկին հասկացնել, թէ ամուսնութեան մէջ սակաւ է պատահում բաղդաւորութիւն։ Այլ Պաւղոսը երբէք չկամիկր այդ ասել այն բառերով։ Նա ասել է այն խօսքը, միտ դնելով այն ժամանակի պայմաններին, երբ քրիստոնէութիւնը հազածանքի տակ լինելով, երկիւղած հետևողքը և պաշտողքը Քրիստոսի աստանդական տարաբերութեան, չունէին ոչինչ խաղաղ օթեան։ Այնպիսի ժամանակներում, այնպիսի դառն ու ձախող հանգամանքի մէջ յիրաւի աւելի լաւ էր լինել անամուսին քան թէ բնտանեաւորել իւր անձը կին ու զաւակով։ Որպա հակառակ միւսմէ անտարակուսելի, որ մեր ժամանակներում, երբ հանդիստ և խաղաղութիւն թագաւորում աշխարհում, երբ սուրբ օրէնք և մարդասէր թագաւորներ ապահովում ամեն մի քաղաքացու սեփականութիւն, ամուսնական կեանքը շատ աւելի նախամեծար ընտրելի է քան թէ անամուսինը. պատճառ, ամուսնութիւնը որպէս մի հրապարակական խոստովանութիւն սիրոյ և հաւատարմութեան երկու սեռերի մէջ, է մի սուրբ աստուածեղէն կարգ, որ մարդս շենում ճշմարիտ մարդ, եթէ նա խնամուտ է նորա արժանաւորութեանը և նորա սուրբ վախճանին։

Ինչպէս որ սէրը մի աստուածեղէն բան է, նոյնպէս է Ամուսնութիւնը։ բայց առանց սիրոյ չկայ ոչինչ ճշմարիտ, ոչինչ բաղդաւոր ամուսնութիւն։ Նա կարող չեմ, սիրելի ընթերցող, նկարագրել քեզ, թէ ինչպէս գալշելի էին ինձ այն ամուսնութիւնքը, որ լինում յարմարութեան պայմաններով, երկրորդական դիտաւորութեամբք և ոչ սիրոյ պատճառով։ Այսպիսի ամուսնութիւնքը են արդարև մի անսուրբ, մի ամբարիշտ բան, ամենևին հաւանական այն նիւթապաշտ էնչական մարգերի սիրտ և յիմարական գործերին,

որ այս երկրի բարիքը առաւել վերապաս են համարում քան թէ ամենայն առաքինութիւնք որ մեզ շինուածն աստուածանման։— Ճշմարիտ սէրը, հաւատարմութիւնը, անկեղծութիւնը, արդարութիւնը և ներողամտութիւնը դէպ ի հաւասարակից ընկերքը, կարճ ասեմ, բոլոր քրիստոնէական առաքինութիւնքը որ մարդս բարձրացնուածն դէպ ի մարդկութեան աստիճան, են այն բաներք, առանց որոնց կարելի չէ մտածել մի բաղդաւոր ամուսնութիւն։ Ով որ երկբայուածն, թէ ճշմարիտ սէրը աստուածեղէն է և գալիս է երկնքից, նա կարող էր երկբայել և աստուածութեան վերայ։ Նա վարելու է մի անբաղդ ամուսնութիւն և իւր ամուսինը իւր հետ ձգելու էր անբաղդութեան մէջ։— Անբաղդ ամուսնութիւնք, դժգոհ ամուսնակից, որ գառնացնուածն իւրեանց կեանքը, որովհետև պակաս է նոցա այն նուրբ զգայարանը կեանքի ճշմարիտ վայելքի համար, որովհետև նոքա երբէք չանդիսը եղած չեն հաստատուն կամքով աշխատել իւրեանց բարոյական կատարելագործութեան, իւրեանց սրտի աղնուագործութեան վերայ — ցաւելի է ասել — բաւական բաղմաթիւ են մեր աշխարհաշէն ժամանակումն։ Ա յս տեղ ամենևին անուշադիր են այն գեղեցիկ խօսքին Պաւղոս Առաքեալի, թէ «Սէրը ամենայնի հաւատայ, ամենևին յուսայ, ամենայնի համբերէ»։ Պակասութիւն անձնագիտութեան, ինքնասիրութիւն, անուշադրութիւն հոգեղէն և ֆիզիքական բնութեանը կանացի սեռի, պակասութիւն կրօնական հաւատի, թերհաւատութիւն դէպ ի ամենայն տեսակ զգալի ուրախութիւնք, բաղմապիտութիւն, այն ծուռ և մոլոր կարծիքը թէ ոսկին ու երկրաւոր գանձերը բաղդաւորուածն ճշմարտապէս— այս բոլորը և միւս շատ բաներ կարող են ամեն մի բաղդաւորութիւն, որպէս և ամուսնականը քայքայել և կործանել։— Ուրիմն «ԱՆՅԱՀՈՒՐՔ ԴՈՒ ՔՈ ԱՆՅԸ, ԱՆՅԱՀՈՒՐՔ ՔՈ ՎԱՅԵՐԵՒ ԿՈՊՉԷ ԼԻՐԵԸ, ՈՐ ՀԱՄՈՒՐՔ ԵՐԿՐԱՒՈՐ ԲԱՐԻՔԸ ՈՐ ՔԵՔՊԵՆ ԲԱՆ։ ՎԵՐՊԱՀ ԱՐԱ ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆԸ և ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ ՔԱՆ ՐՆ ԱՐՅԱՆՆ ՈՒ ՈՍԿԻՆ. ՆԵՐՈՂԱՄՏԻ ԵՂԻՐ ԴԵՊ Է ՆԵՄԱԼՈՒԸ և ԴԻՄԱՐՈՒԹԻՒՆԸ ՔՈ ԸՆԿԵՐՈՒՐՔ, ՊԱՐԲԵՐԱՆՔՈՒՐ և ՅԱՂԹԻՒՐ ՔՈ ԱՆՅԱՀՈՒՐՔՈՒԹԻՒՆԸ, ՔՈ ՀԱՐԱԲԱՐՈՒԹԻՒՆԸ, ՔՈ ՔԱՌԱՍԲՈՒԹԻՒՆԸ, ՓՈՒՐՅՈՒՆ ՔՈ ԼԻՒՆԻՒ ՊԻՊՈՅԻԸ, ԱՊՐԻՐ ՊՈՒՐԴ, ԱՇԽԱՏԻՐ և ԱՂՕՐԻՐ, ՈՅՈՒՀԵՒԱ ԼԻՎՐԻԵ ԴՈՒ ՔՒ ԲԱՂՂԱՒՈՐ ՄՈՒՍՈՒՆՈՒԹԻՒՆ։ ՅՕՈՂ այս լինի այն խրատը որ մեք կամիմք տալ ամենայն երիտասարդի որ ուրոնուածն իւր հանար մի հարսն։

«Բայց թէպէտ այս բոլոր պատուական յատկութիւնքը զարդարած լինէր տղամարդս, այնու ամենայնիւ կարող չէր նա բաղդաւոր լինել ամուսնութեան մէջ, եթէ նորա ամուսնակից կինը չէր նոյնպէս բարի»: Այս ընդհմախօսութիւնը որ դու, սիրելի ընթերցող, առնումես ինձ, ունի արդարև իւր ուղղութիւնը: Ես պատասխանումեմ դորան, որ մեք տղամարդկս պարտ ենք մի բաբի կին ընտրել մեզ, և այս բանը առաջնորդումէ ինձ դէպ ի մի կարևոր մտածելի նիւթ, այսինքն դէպ ի այն խնդիրը. ինչ ինչ բանէ վերայ պէտք էր մեզ առաւելապէս ուշադիր լինել, երբ կամենք ընտրել մեզ ի ամուսին: Մեք այս նիւթի վերայ կը հրատարակենք մեր մտածութիւնքը երրորդ յօդուածի մէջ, այժմ նախապէս կամինք ծանօթութիւն տալ այս տեղ, թէ ինչպէս մեր մանկութեան բարեկամ Ա.... ընտրել է իւր ամուսինը: Ես լաւ տեղեակ եմ նորա խիստ բարոյական սկզբունքին, և թէպէտ հինգ տարի է, որ մեք միմեանց տեսած չէինք, սակայն պարտ է ինձ խոստովանել, որ նա դեռ ևս մի և նոյն մարդն է, ինչպէս յայտնի էր ինձ: Այս բացայայտ եբևումէ մի նամակից որ նորումս ստացել եմ նորանից, և որի մէջ իմաց է տալիս ինձ իւր պսակութիւը: Այդ նամակի բովանդակութիւնը կամիմ դնել այս տեղ:

«Ես երկարամիջոց լռութենից յետոյ վեր եմ կանգնում գրիչը, որ քեզ, սիրելի բարեկամ, տեղեկութիւն տամ, թէ ես կին եմ առել: Դու գիտես ինձ, ուրեմն և յայտնի կ'լինի քեզ թէ իմ կարծիքը սիրոյ վերայ ինչպէս է եղած միշտ: Աերը պիտոյ է երկընքից դայ, ոչ երկրից. այսպէս ասումէի ինքս ինձ, և այդքան իսկ երկար սպասել եմ, այնպէս որ այժմ իբրև նորափեսայ, ամուսնութեան առաջին շաբաթում, արդէն երեսուն տարեկան եմ: Այո կարող էի վաղուց արդէն կին առնուլ և իմ ծնողքը, այլև իմ մօրաքոյրը շատ ուրախ կ'լինէին, եթէ մեր հարուստ վարձուորի դուստրը ընտրած լինէի ինձ ամուսնակից: Այդ բարի աղջիկը թէպէտ չէր ինձ անհաճոյ, դորան սիրումէի ես ինչպէս միւս աղջիկները, ես խօսած եմ, խաղ եմ արել, պար եմ եկել նորա հետ ինչպէս միւսների հետ. բայց երբ որ մտածումէի ամուսնութեան վերայ, այնուհետև մի ծանրութիւն և մտախոհութիւն էր գալիս վերաս: Մի ամբարիշտ գործ է, այդ աղջիկը տանել կապել ամուսնութեան լծի տակ, առանց ճշմարտապէս սիրելու դորան. այսպէս էի ասում ինքս ինձ, և դորա վերայ մնացի հաստատ:

ձշմարիտ սէրը ամենայնի հաւատայ, ամենևին յուսայ, ամենայնի պահէ, ամենայնի համբերէ։ Ես այն շոյտ ու արագ թռուիս աղջկանից չէի հաւատում ամենայն բան, յոյսս փոքր էր. ոչ ամենայն բանի նորա մէջ կարող էի տևել և ոչ միշտ համբերել։ Ամենևին կարող չէի ամուսնանալ նորա հետ։ Մի քանի շաբաթ յառաջ ուղևորվեցայ դէպ ի փոքրիկ քաղաքը Ո., այս տեղ դիպուածով ծանօթացայ մի մանուկ, տասնևվեց տարեկան աղջկայ հետ — նորան տեսանելս ու սիրելս միևնոյն եղաւ։ Այնպէս էր թվում ինձ, որպէս թէ աչքիս առաջև մի հրաշք է կատարվում։ Ես մոածումէի այլապէս, զգում էի այլապէս, կարծ ասեմ, ես ապրումէի մի այլ կեանքով. ես նրա կատեցի, որ ձշմարիտ սէրը եկել էր երկնքից։ Հատ ուղեղ է ասում այս մասին Տիկին դէ Ստաէլ-Հոլշտէյնն իւր «Աորինա կամ Իտալիա» մակագրութեամբ գործի մէջ, հատ. 3, եր. 29. «Rien n'est motivé dans l'amour; il semble que ce soit une puissance divine qui pense et sent en nous, sans que nous puissions influer sur elle[1]։ Ես արդարև ձշմարիտ սէրը գտանվումէ գերագոյն զօրութիւնների ազդեցութեան տակ, որից կարող չէ նա փախչել, ինչպէս որ բարոյականը աւելի յաճախ որոշվումէ ֆիզիքականի ձեռքով, քան թէ ոմանք փիլիսոփայք կամէին խոստովանել։ Ես իմ սիրած աղջկայ երկրում կացայ մի քանի օր, բայց վստահութիւն չունէի բերանս բանալու և մի քանի բառ խօսելու նպատակի հետ։ Միայն մեր հայեացքը երբեմն հանդիպումէին միմեանց, մեք հասկանում էինք միմեանց, և առանց մի խօսք ասդրիկի հետ խօսելու, այնու ամենայնիւ գիտէի, որ նա առ ի սրտէ սիրումէ ինձ։ Ու փոքր վարքը աւելի ծանօթացանք։ Ընկերասիրութիւնը դարձաւ ստոյգ խոսակցութիւն։ Ես բացեցի բերանս, խոստովանեցի նորան իմ սէրը. նա կարմրեցաւ, ամօթխածութեամբ ցած թողեց աչքերը և — ես հասկացայ նորան։ Մի սրտովին գրկախառնութիւն և մի կամաց այո՛ կնքեց ու վճռեց բոլորը։ Հուտով ստացայ ես ծնողների հաւանութիւնը, և մի գուցէ չար աշխարհը պարապ գտանէր, բամբասանքով, ստութեամբ և խարեբայութեամբ քայքայելու Ամուսնացեալները, շուտով որոշուեցաւ հարսանիքը։ — Ես գտել եմ մի հեղ կին. քաղցրասրտութիւնը է նորա բնաւորութեան գար-

---

[1] Սիրոյ մէջ չկայ ոչինչ նախապատճառ բան. երևումէ թէ մի աստուածային կարողութիւն էր, որ խորհումէ և զգումէ մեր մէջ, առանց կարողանալու մեր կողմից ազդեցութիւն նորա վերայ։

դասանքը: Կուռ ազատութիւն, ճիրանակրէն խօսել, տաղել ու երգել շատ տեղեակ չէ. և ուրախ եմ, որ նա լաւ գիտէ իւր ազգային լեզուն և սիրուէ իւր ազգի մատենագրութիւնը, ստացել է առողջամիտ կրօնական և բարոյական դաստիարակութիւն և կանացի կոչմանը համեմատ կրթութիւն. ես ուրախ եմ, որ նա իւր ժամանակը վատնում չէ սիրատատում գլքեր (րոմաններ) և նորանոր գրեստաձևերի ժուռնալներ կարդալով. նոյնպէս սիրելի է ինձ, որ նա չէ բերել ինձ մի մեծ հարսնատաժինք, որ ես ազատ եմ գեղեց լեռութեան ցաւերից որ աւելի թշուառացուցիչ են քան թէ պակասութեան ցաւերը: Այդ արտեսութիւնը գիտէ իմ կինս շատ լաւ, և խահարանի ու կերակրատահեստի մասին շատ փորձառու է. այլ և տնարար է նա և գիտէ կառավարել տունը հասկացողութեամբ և շքջանկատութեամբ: Երբա սիրալը ընտելական է ամենայն բարի, դեղեցիկ և մեծ բանի, և ես ուրախ եմ ստանալով մի աշակերտ որ կարող է ընդունել իմ սկզբունքը, որ չար աշխարհը ասում անխոհեմ և հասարակաց կարծիքից դուրս: Երէկ դու դաս մեղ տեսութիւն, կ'ուրախանաս իմ կնոջ վերայ: Նա մի փափկասիրտ շնկամոլ կին է, մեծ մեծ, երկնագոյն կապոյտ աչքերով, որոնց, ինչպէս յայտնի է քեզ, միշտ տուած եմ ես նախատատութիւնը թխամազերից: Պատճառ, ըստ իմ դատողութեան, կանացի բնութեան յատկացուցիչ նշանը հեզամտութիւն, քնքշութիւն, մեղմութիւն և քաղցրատութիւն աւելի բացայայտ երևումէ շնկամոլ քան թէ թխամոլ կանանց մէջ: Ալ երջինքս ըստ իւրեանց բնաւորութեան են վստահ, ձեռնարկու, սաստիկ, կրքոտ, հրամայատեր, ինքնահաճոյ, նոքա այնքան հեշտ չեն ընդունում ազատարդի սկզբունքը, թոյլ չեն տալիս բանականութեանը առաջնորդել նոցա, և նոցա պակաս է այն խոհականութիւնը որ հարկաւոր էր քաջ մայրեր լինելու, բաղդատուր զաւակներ ծնուցանելու և կրթելու [1]): — Ուրեմն

---

[1]) Այս բոլոր դատողութիւնը ունի մի ընդհանուր խորհուրդ և ընդհանուր ճշմարտութիւն: Աշխարհս կանայք դրեթէ բոլորը թխամազ են և թխադէմ. շնկամոլքը և սպիտակամորթքը սակաւագիւտ: Հայերի կանանց բնաւորութեան մասին կարելի չէ ոչինչ վճռական բան ասել ուր չկայ ազատութիւն և ընկերական կեանք, ինչպէս կարելի էր ճանաչել կանանց լաւն ու վատը, կամ թէ ինչպէս կարող էր որ և իցէ հասարակ բնաւորութիւն դպանալ կամ դուրս երևել կանանց մէջ: Ուրեմն դպրոցների մէջ փոքր է շատ կրթած (բայց ոչ դաստիարակած) աղջկունքը, ինչքան մեր մանաւանդ օրինակներից կարող ենք դատել, աւելի բնդն են ամուսնութեան մէջ քան թէ, բարեկամը իւրեանց

*խիստ եմ ես իմ դատողութեան մէջ, բայց կարծուածիս, թէ հա-
րատարած նկատողութիւնը եւ փորձեր իմ հայեացքս եւ կարծիքս հաս-
տատուածն որպէս ճշմարիտ, եւ վճռած բան է երեւում, որ ամենա-
կիրթ խմբականութիւնն էս թիւսամով կանանց մէջ չունի միշտ
այնքան զօրութիւն, որ կարողանայ մի բաւական հակակշռութիւն
տալ նոցա սաստիկ բնական ձգտողութիւններին: Խարեաւ ինաս.
բերանացի աւելի խօսք այս նիւթի վերայ:»*

Ահա նամակից կարող ես դու, խելացի ընթերցող, ճանաչիլ
լինել իմ կարծիքիս, որ այդ նամակագիր բարեկամի խօսքերը ան-
հիմք չեն: Սկզբը մի վերին եւ դեղեցիկ բան է, որ մեք կարող չենք
ստանալ ոչինչ երկրաւոր կարողութեամբ, ոչինչ բռնութեամբ,
ոչինչ հարստութեամբք: Երջանիկ է այն ամուսին այրը եւ ամու-
սին կինը որ իւրեանց սրտի ազատութեամբ ընտրած են, որ ոչ թէ
միայն ուշադիր են եղած դեղեցկութեանը, այլեւ առաքինութեանը,
սրտի բարութեանը: Արդարեւ, արծաթը մի հարկաւոր պիտոյք է
մեր հասնող մեր աշխարհաշէն քաղաքական հասարակութեննելի
մէջ, որպէս ամէն տեղ, ուր աշխարհաշինութիւնը ներս է մտել.
բայց մի՞թէ այդ պիտի լինէր մեր շարժառիթը: Մի՞թէ մեր ա-
պագայ ամուսնու ընտրութեան մէջ պէտք էր մեզ հարցանել նորա
դրքի, նորա հարստաբաժինքի մասին: Այո՛ լաւ է, եթէ մեր կինը
բերումէ իւր հետ դրք, որովհետեւ կեանքի պիտոյքը բազանումեն
իսկոյն, երբ որ ոտք ենք դնում ամուսնութեան մէջ, եւ մի կին պատ-
շաճապէս պահել, պատկների զգեստ ու սնունդը հոգալ, ապա եւ
դաստիարակել նորանց — արժէ շատ արծաթ.— բայց մարդուս
սիրու զգացողութիւնը վրդովվումէ, երբ որ նկատումենք, թէ այս
կամ այն փեսան մի քանի հազար մանէթ աւելի կամ պակաս ստա-
նալով, վճռել էր դրծը:— Բայց պատիժը իսկոյն գալիս է քամա-
կից, եւ մի անբաղդ ամուսնութիւն է շատ անգամ հետեւանք մի*

աղամարդի եւ հոգաբարձու մարը զաւակների: Մի վայր է վերայ կրթութիւն կարող ես չէ աշխուժացնել ասիական խոչընդոտութիւնը. թէպէտ դորան մի փոքր վարագուրէր: Անկիրթ ասիական կանայք, բայ ի արուաքին պատուասիրութենից եւ մեծամտութենից, եթէ մեծատուներ էին, են միայն լոկ որդիք բնութեան, այն կրակոտ այրասէր ամուսինը, կրակոտ զաւակասէր մարը, բայց նիւթապէս աւելի քան թէ բարոյապէս, առանց որ եւ իսկ ծանօթութիւն ունենալու ամուսնական կամ մայրական կոչման վերայ: Հայք թէ կանայք եւ թէ աղամարդիկ քանքարասէր են. բայց ինչ օգուտ այդ քանքարասիրութենից. երկուքն էս մնացել են եւ մնում են մինչեւ այսօր անդատարակ, անկիրթ եւ տխուր: Հայերը սպասում են, որ Աստուած երկնից իջանէ եւ նոցա համար հրաշքներ գործէ. թող սպասեն, որքան կամին: Բայց ամէն ազգ կ'հնձէ, ինչ որ սերմանում:

լոկ արծաթասիրութեան մեր անբնական դարձած օրերում։ Հայերի մէջ մի մեծ թշուառութեան աղբիւր է ծնողների համար շատ աղջիկներ ունենալ. այս տեղ աղջիկների ոչ սիրաժանութիւնն է, ոչ շնորհքը, ոչ ուսումն և կրթութիւնը — որ արդարև չկան, ուրեմն և կարող չէին ուշադրութեան նիւթ լինել — այլ միայն հարստաբաժինքի մեծութիւնը որ կարող էր մի խղճալի հայ աղջիկ ծնողաց տան բանտարկութենից ազատել դէպ ի մի ամուսին տղամարդի տուն. բայց ողորմելիքը — ինչպէս ասացինք վերևում, ոչ հարսն և ոչ փեսան տեսած էին միմեանց յառաջադոյն և ոչ ճանաչութեին իրեար, որպէս թէ այդ վերջին գործն էր և կարող էր ևս լցուցանուիլ հարսնական առագաստի մէջ։ Հայաստերին յայտնի կը լինի Պարսկաստանի մէջ եղած մեր Հայերի մի շատ գովանի սովորութիւնը, այսինքն, ոչ թէ հարսնաբաժինք պահանջել հարսի համար, այլ ծնողաբաժինք հատուցանել ծնողներին, եթէ մի երիտասարդ ամուսնանումէր մի աղջկայ հետ. այս սովորութիւնը որ մեծ թեթևութիւն է մանաւանդ աղքատ ծնողների համար, չէ տեսանվում Ռուսաստանի մէջ եղած Հայերի մէջ. այդ տեղ մի աղքատ ծնող որ ունէր շատ աղջիկներ, մեծ տառապանքի և նեղութեան մէջ է, եթէ ամուսնութեան տարիքը մտնենումեն — և դոքա Ջերմ կլիմաներում հակայական քայլերով մտնենումեն — բայց չկան վեսայացուք. սոքա արծաթ կամին և այնքան առաւել, որքան մտածումէին թէ գիտուն, շնորհալից և մեծատիճան էին. բայց և այսպիսի պատանիքը երբեմն գտանելով արծաթ միայն, բայց ոչ մի արժանաւոր ամուսին, ստանումեն շատ անգամ մի թիթու, գուչ և թուլնաւոր խնձոր ուտելու, և այդպէս ևս հարկաւոր էր, ըստ որում այդպէս է մեղքի թոշակը։ — Պատահում մայրերը և մօրաքոյրերը չկամին կամ կարող չեն հասկանալ այդ ճշմարտութիւնը. նոքա ասումեն. «Եթէ աղքատութիւնը ներս է մտանում տան մէջ, սէրը դուրս է թռչում պատուհանից։» Բայց խընդրեմ ասեն մեզ, մի՞թէ դա ճշմարիտ սէր է։ Ինչպէս բարեկամի հաւատարմութիւնը դէպ ի բարեկամը իսկապէս ստուգվումէ միայն կեանքի դառն պայմաններին մէջ, նոյնպէս ճշմարիտ սէրը հաստատվումէ միայն կարիքի և ձախորդութեան մէջ։ Այն ժամանակ միայն ցուցանումեն երկու ամուսնակիցքը ճշմարիտ սէր, երբ որ նոքա միասին կրումեն կեանքի տառապանքը և օրի ծանրութիւն ու տօթը, երբ որ նոքա փոխադարձաբար օգնական են միմեանց և մխի-

թաղիչ, եթէ հարկաւոր էր, հրաժարվումն կեանքի բոլոր վայելչութիւններից, ընկերական ժողովի բոլոր քաղցրութիւններից և ապրումն միայն միւսի համար: Մի՛թէ այն ճշմարիտ սէր է, որ կինը այն ժամանակ միայն քաղցր է իւր տղամարդի հետ, երբ որ յարմարութեամբ և ուրախութիւնների մէջ ապրումէ նորա հետ, երբ որ նա կարող է մասնակից լինել ընկերական ժողովների, կաքաւանդէսների և խնջոյքի, թատրոն գնալ, բոլոր նորաձեւ ձևերին հանդերձեղէնի մէջ հետևել. բայց դորա հակառակ տհաճ ու ատելի է, եթէ անյաջող ժամանակներում, երբ որ նորա տղամարդի եկամուտքը պակասել էին, ստիպուած էր հրաժարվիլ այդպիսի վայելչութիւններից: Սորա պատասխանը կարող է իւրաքանչիւր ոք ինքը տալ իւրեան:—

Երբ որ ամուսնական կեանքի մէջ սէրը առ փոքր փոքր շնջանում է, երբ որ կնոջ կամ տղամարդի ինքնասիրութիւնը և կամակորութիւնը վտրումեն ամուսնական երջանկութեան հիմքը, այնուհետև հարկաւոր էր ամեն մի առանձին դիպուածում հետաքննել պատճառները: Այդ բանը միշտ ատած ենք, և մեր փորձառութիւնքը ուսուցել են մեզ, որ, դուրս հանելով մի քանի բացառութիւնք, առաւել յաճախ, և երբ որ կնամարդը մանուկ հասակում ամուսնացած էր, տղամարդը յանձնառական և զանցառական կերպով, մանաւանդ ամուսնութեան սկզբում, պարտական էր երկպառակութեանը ամուսնական կեանքի մէջ. պատճառ, կանանց սէրը ի բնէ չէ չար և վատթար. միայն մի անմիտ, անարդար վարկցողութիւն կարող է առ սակաւ սակաւ շինել նորանց չար և վատթար: Հ. յատ աջողակ ասումէ Յան Պաուլ գերմանացին. «Ամբի կանայքը պիտոյ է միշտ կրեն և բռնեն երկնքի անդուդքը, որոնց վերայով տղամարդերը կարող էին վեր ելանել դէպ ի երկնքի կապոյտ կամարը և դէպ ի երեկոյեան արշալոյսը: Այլ այս նիւթի վերայ յետոյ կը խօսենք մանրամասնաբար:»

(Շարունակութիւնը յետոյ.)

Ս. Նալբեանց:

1. Նպատակ սխատիայ օրագիրը ամիս ամիս դուրս գալով, պարունակելու ի իր մէջ ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, այլև մանաւանդ Հայրենական պատմութեան և աշխարհագիտութեան վերայ։

2. Ընագիտական ճառեր, այսինքն քնութեան օրէնքներէն և դոցա գործադրութեան վերայ մարդուս օգտի համար, ճառեր գանազան ֆիզիքական յայտնագործութիւնների, հասարակաւոս Աստղաբաշխութեան, քիմիայի, Հանքաբանութեան և ֆիզիօլօգիայի վերայ. այլև բանախոսութիւն տունկերի, գիտութեան արժանի բոյսերի, նոցա տնկարկութեան և օգտի վերայ, վերջապէս կենցաղօգուտ գիւտերի և յայտնագործութիւնների մասին։

3. Խորհրդական, գեղեցիկ բանասիրական ճառեր, առաւել ընտիր մտածութիւնք և զգացողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով. թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրոպական մատենագրութենից. այլև կրիտիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածների վերայ։

Ձանկացողքը առանձ այս օրագիրը կարող են հասուցանել իւրեանց խնդիրը կամ ղղակի հրատարակողին Մոսկվայի մէջ այսպէս. въ Редакцію Армянскаго Журнала «*Сѣверное Сіяніе*», въ Москвѣ, на Черногрязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника С. Назарьянца. կամ թէ Մոսկվայի Նամակատանը այսպիսի հասցեով. въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Ցարեկան 12 տետրակների գինը է 8 մանէթ Մոսկվայի մէջ, բայց ուրիշ քաղաքների համար $9\frac{1}{2}$ մանէթ։

Печатать позволяется. С. Петербургъ. 3 Іюня 1861 года.

Исправляющій должность Цензора

С. Загибенинъ.